

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՆՆԱ ՍԱՄՎԵԼԻ ԿՈՒՐԱՆՅԱՆ

«ԱՍՏՎԱԾ» ԵՎ «ՍԱՏԱՆԱ» ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐՈՎ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ
ԻՄԱՍՏԱԿԱՌՈՒ ՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒ ԹՅՈՒՆՆԵՐՆ
ԻՍՊԱՆԵՐԵՆՈՒՄ` ՀԱՅԵՐԵՆԻ ՉՈՒԳԱԴՐՈՒ ԹՅԱՄԲ

Ռոմանակյան Լեզոներ (Ժ.02.08) մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման
առեկախություն

Գիտական ղեկավար`
բանասիրական գիտությունների
թեկնածու,
դոցենտ Յ. Գ. Բաղդասարյան

ԵՐԵՎԱՆ-2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒ ԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽԱՌԱՋԻՆ

ԼԵԶԻԿԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴԱՐՁՎԱԾՔԻ ԸՄԲՈՒՄԱՆ ԵՎ
ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ 11
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 28

ԳԼՈՒԽԵՐԿՐՈՐԴ

«DIOS» (ԱՍՏՎԱԾ) ԵՎ «DIABLO» (ՍԱՏԱՆԱ) ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐՈՎ
ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ
ԱՌԱՆՁՆԱՅԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՄՊԱՆԵՐԵՆՈՒՄ՝ ՀԱՅԵՐԵՆԻ
ՉՈՒԳԱԴՐՈՒԹՅԱՄԲ 30

2.1 «Dios» (աստված) և «diablo» (սատանա) բաղադրիչներով
դարձված ային միավորների ձևաբանական կաղապարների
քննություն 30

2.2 «Dios» (աստված) և «diablo» (սատանա) բաղադրիչներով
դարձված ային միավորների շարահյուսական կաղապարների
քննություն 46

ԳԼՈՒԽԵՐՐՈՐԴ

«DIOS» (ԱՍՏՎԱԾ) ԵՎ «DIABLO» (ՍԱՏԱՆԱ) ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐՈՎ
ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ
ԱՌԱՆՁՆԱՅԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՄՊԱՆԵՐԵՆՈՒՄ՝ ՀԱՅԵՐԵՆԻ
ՉՈՒԳԱԴՐՈՒԹՅԱՄԲ 53

3.1. Իմաստային վերափոխման առանձնահատկությունները «dios»
(աստված) և «diablo» (սատանա) բաղադրիչներով դարձված քերական մ.... 53

3.2 «Dios» (աստված) և «diablo» (սատանա) բաղադրիչներով
դարձված ակադմական կաղապարները 74

3.3 Բազմիմաստություն, հոմանիշություն և տարբերակայնություն
համակարգային կապերը «dios» (աստված) և «diablo» (սատանա)
բաղադրիչներով դարձված քերական մ 90

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 104

ԳԼՈՒԽՉՈՐՐՈՐԴ

«DIOS» (ԱՍՏՎԱԾ) ԵՎ «DIABLO» (ՍԱՏԱՆԱ) ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐՈՎ
ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԱԶԳԱՄԾԱԿՈՒԹՅԱՅԻՆ
ԱՌԱՆՁՆԱՅԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՄՊԱՆԵՐԵՆՈՒՄ՝ ՀԱՅԵՐԵՆԻ
ՉՈՒԳԱԴՐՈՒԹՅԱՄԲ 106

4.1 Համընդհանուրի և ազգային դրսևորումները դարձվածքներում	106
4.2 «Dios» (աստված) բաղադրիչով դարձվածային միավորների ազգամշակութային առանձնահատկությունները	111
4.3 «Diablo» (սատանա) բաղադրիչով դարձվածային միավորների ազգամշակութային առանձնահատկությունները	124

ԳԼՈՒԽՅԻՆԳԵՐՈՐԴ

«DIOS» (ԱՍՏՎԱԾ) ԵՎ «DIABLO» (ՍԱՏԱՆԱ) ԲԱՂԱԴՐԻԻՉՆԵՐՈՎ ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԴԻՊԿԱԾԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒ ՄՆԵՐԸ ԽՈՍՔՈՒՄ	135
ԾԱՆՈԹԱԳՐՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ	159
ԵԶՐԱԿԱՑՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ	161
ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՑԱՆԿ	165
ՀԱՎԵԼՎԱԾ ԱՌԱՋԻՆ	176
ՀԱՎԵԼՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ	230
«Dios» (աստված) և «diablo» (սատանա) բաղադրիչներով դարձվածային միավորների թեմատիկ դասակարգում	230

ՆԵՐԱՆՈՒ ԹՅՈՒՆ

Դարձվածքները ժողովրդի հոգևոր մշակույթի հարստության են: Դարձվածքներում բյուրեղված են ժողովրդի բազմադարյա փորձը, նրա առօրեական իմաստությանը, արժեհամակարգը, վարքի կաղապարները, բարոյական, գեղագիտական և կրոնական պատկերացումները, հոգեկերտվածքի ու աշխարհայացքի առանձնահատկությունները: Դարձվածքներում վառ կերպով արտացոլվում են նաև տարբեր ժողովուրդների լեզվամտածողության և աշխարհագրացողության ընդհանրություններն ու տարբերությունները, որոնք պայմանավորված են տարբեր լեզվական և արտալեզվական գործոններով: Հանդես գալով լեզվի գործածության ամենատարբեր բնագավառներում՝ դարձվածքները լեզվին հաղորդում են ինքնատիպություն:

«Dios» (աստված) և «diablo» (սատանա) բաղադրիչները իսպաներենում և հայերենում ունեն դարձվածակազմական մեծ ներուժ: Որպես կրոնական ծագում ունեցող հասկացություններ՝ վերջիններս համարվում են նաև համամարդկային մշակույթի բաղկացուցիչ մաս, թեև յուրաքանչյուր լեզվամշակույթում առանձնանում են իրենց ուրույն դրսևորումներով:

Ներկա ատենախոսությունը նվիրված է իսպաներենում «dios» (աստված) և «diablo» (սատանա) բաղադրիչներով դարձվածային միավորների իմաստակառուցվածքային առանձնահատկությունների քննությանը՝ հայերենի գուգադրություններով: Որպես ուսումնասիրության **առարկա**՝ «dios» և «diablo» բաղադրիչներով դարձվածքների ընտրությունը պայմանավորված է նրանով, որ նշված միավորները լեզվի դարձվածային համակարգում առանձնանում են գործածության մեծ հաճախականությամբ և հաղորդակցական մեծ ներուժով: Այդ դարձվածքներն աչքի են ընկնում առավել մեծ արտահայտչականությամբ և պատկերավորություններով, քանի որ «dios» և «diablo» բաղադրիչները՝ որպես գերբնական էակներ, առասպելական

կերպարներ մատնանշող միավորներ, արդեն իսկ ենթադրում են փոխաբերական լայն կիրառություն, որը դարձվածքի գոյության նախապայմաններից է: Նշված բաղադրիչները լայն կիրառություն ունեն իսպաներենի դարձվածային միավորներում և վառ կերպով արտացոլում են սովորույթների, բարոյականության, վարք ու բարքի վերաբերյալ ազգային պատկերացումները: «Dios» և «diablo» բաղադրիչներով դարձվածային միավորները հանդես են գալիս որպես աշխարհընկալման լեզվամշակութային կարծրատիպեր, որոնք հնարավորություն են ընձեռում ուսումնասիրելու տվյալ ժողովրդի աշխարհաճանաչողության առանձնահատկությունները: Տվյալ ուսումնասիրության մեջ հայերենի փաստական նյութի ներգրավումը հնարավորություն է տալիս վեր հանելու նշված դարձվածքների իմաստային դաշտերում առկա ընդհանրություններն ու տարբերությունները՝ հատկապես, որ համընդհանուրն ու ազգայինը դարձվածքներում հանդես են գալիս սերտորեն միահյուսված և կազմում են մի ընդհանուր դիպեկտիկական միասնություն. ընդհանուրն արտահայտվում է բովանդակության պլանում, ազգայինը՝ դարձվածքի ներքին ձևում: Բացի այդ, մայրենի լեզվի յուրահատկությունների հենքի վրա իսպաներենի դարձվածքների քննությունը օգնում է տեսանելի դարձնելու իսպաներենի դարձվածքների բնութագրական գծերը և վեր հանելու դրանց առանձնահատկությունները:

«Dios» և «diablo» բաղադրիչներով դարձվածային միավորների ուսումնասիրության **արդիականությունը** պայմանավորված է լեզվի և մտածողության փոխհարաբերության, դարձվածային միավորների կառուցվածքաիմաստային և լեզվամշակութային առանձնահատկությունների, խոսքում դրանց իմաստային բովանդակության փոփոխությունների և դիպվածային տարբերակայնության խնդիրների նկատմամբ աճող հետաքրքրությունից, որը համահունչ է դարձվածաբանության զարգացման արդի միտումներին:

Լայն առումով, հետազոտության **նպատակը** «dios» և «diablo» բաղադրիչներով դարձվածային միավորների համակողմանի

քննությունն էլ եզրվի տարբեր մակարդակներում, ինչպես նաև խոսքում դարձվածային փոխակերպումների ուսումնասիրությունը ինչպես իմաստային, այնպես էլ կառուցվածքային տեսանկյունից, ներուկակ իմակների բացահայտումը՝ ելնելով տեքստի հեղինակի հաղորդակցական դիտավորությունից: Այս նպատակն իրականացնելու համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ կոնկրետ **խնդիրները**.

ա) համակողմանիորեն քննության ենթարկել դարձվածքի ըմբռնման և դասակարգման սկզբունքների վերաբերյալ էզվաբանական գրականության մեջ առկա գիտական մոտեցումները, որոնք կարող են տեսական հիմք ծառայել տվյալ ատենախոսական ուսումնասիրության համար,

բ) քննության ենթարկել իսպաներենի դարձվածային միավորների կառուցվածքային-ձևաբանական և շարահյուսական կաղապարները՝ հայերենի համապատասխան կաղապարների գուգադրությամբ,

գ) քննել «dios» և «diablo» բաղադրիչներով դարձվածային միավորների իմաստային վերափոխման առանձնահատկությունները իսպաներենում՝ հայերենի գուգադրությամբ,

դ) վերհանել, ուսումնասիրել և համեմատել իսպաներենում և հայերենում «dios» և «diablo» բաղադրիչներով դարձվածակազմական իմաստային կաղապարները,

ե) քննության առնել «dios» և «diablo» բաղադրիչներով դարձվածային միավորների տարբերակայնության, հոմանիշության և բազմիմաստության համակարգային կապերը իսպաներենում և հայերենում,

զ) քննել և վերհանել «dios» և «diablo» բաղադրիչներով կազմված դարձվածային միավորների ազգամշակութային առանձնահատկությունները,

է) քննության առնել «dios» և «diablo» բաղադրիչներով դարձվածային միավորների դիվադային փոխակերպման հնարավորությունները խոսքում՝ գրական-գեղարվեստական հարուստ էզվանյութի հիման վրա:

Ուսու մնասիրութեան **գիտական նորույթը** նախ և առաջ պայմանավորված է դարձվածքների ուսու մնասիրութեան լայն մեթոդաբանական մոտեցմամբ: Առաջին անգամ փորձ է արվում համակողմանիորեն քննութեան առնել իսպաներենի «dios» և «diablo» բաղադրիչներով դարձվածային միավորները՝ կիրառելով արդի դարձվածաբանութեան բնագավառում առկա գիտական տեսութեան ներքին լայն ընդգրկումով: Իսպանական դարձվածաբանութեան մեջ առաջին անգամ է ներկայացվում դարձվածքների իմաստային վերափոխման համակողմանի քննութեան, ինչպես նաև կիրառվում դարձվածքների իմաստային կառուցման՝ ԱՌայ խշտեյնի առաջարկած մեթոդը, որը փաստում է դարձվածային միավորների համակարգայնութեամբ ընձեռված հնարավորութեան արդյունավետ կիրառութեանը: Իսկ հայերենի փաստական նյութի ընդգրկումը թույլ է տալիս առաջին անգամ վեր հանելու համընդհանուրի և ազգայինի դրսևորումները երկու լեզուների դարձվածապաշարում:

Աշխատանքի **տեսական արժեքը** պայմանավորված է ուսու մնասիրութեան արդյունքներով, որոնք կարող են ներդրվել իսպաներենի դարձվածաբանութեանն առնչվող տարբեր խնդիրների հետագա ուսու մնասիրութեան ներքին՝ նպաստելով քննվող լեզուների տիպաբանական, լեզվամշակութաբանական տեսութեան ներքին հետագա զարգացմանը:

Ուսու մնասիրութեան ամեն մի առարկա թելադրում է համապատասխան **մեթոդի** ընտրութեան: Թեև աշխատանքը հիմնականում կատարվել է համաժամանակյա կտրվածքում, այնուամենայնիվ որոշ լեզվական երևույթների ավելի լայն լուսաբանման նպատակով օգտագործվել է նաև տարածամակյա վերլուծութեանը:

Աշխատութեան մեջ առաջադրված խնդիրների լուծման համար օգտագործվել են ինչպես ճանաչողութեան համընդհանուր գիտական, այնպես էլ մասնավոր լեզվաբանական մեթոդներ, որոնք բխում են քննարկվող նյութի առանձնահատկութեան ներքին: Ատենախոսութեան մեջ օգտագործվել են հետևյալ լեզվաբանական

մեթոդները. զուգադրական, համատեքստային, բաղադրական և վիճակագրական վերլուծության մեթոդները:

Աշխատանքի **գործնական նշանակությունն** այն է, որ նրա արդյունքները կարող են կիրառվել իսպաներենի դարձվածաբանության, բառագիտության, իմաստաբանության դասընթացների շրջանակում, ելակետ դառնալ կուրսային, ավարտական և մագիստրոսական հետազոտության ներուժ: Չավելվածները կարող են օգտակար լինել բառարանագրական աշխատանքում և թարգմանական պրակտիկայում:

Ուսումնասիրության **փաստական նյութն** ընդհանուր առմամբ ընդգրկում է 1065 դարձվածք, որոնցից 565-ը իսպաներեն, 481-ը՝ հայերեն: Դարձվածքների ցանկը ներկայացվում է որպես հավելված, որտեղ դարձվածային միավորները տրված են այբբենական կարգով: Աշխատանքի փաստական նյութը հավաքագրվել է իսպանական և հայկական առավել հեղինակավոր բառարանագրական աղբյուրներից, իսկ դարձվածային միավորների դիպվածային փոխակերպման հնարավորությունները ուսումնասիրվել են Միգել դե Սերվանտեսի, Լուիս Վելես դե Գեվառայի, Ֆեռնանդո դե Ռոխասի, Գաբրիել Գարսիա Մարկեսի, Խուան Խոսե Բենիտեսի և Պար Լագերկվիստի ստեղծագործություններում:

Աշխատանքի **կառուցվածքն ու բովանդակությունը**: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, հինգ գլխից, եզրակացությունից, մատենագիտական ցանկից և հավելվածներից:

Առաջին գլխում ներկայացվում է դարձվածքի ըմբռնման և դասակարգման համառոտակնարկ իսպաներենում և հայերենում: Տրվում է տեսական հարուստ նյութ իսպաներենի և հայ դարձվածաբանության վերաբերյալ, քննվում են հայտնի դարձվածաբանների և լեզվաբանների (Խ. Կասարես, Ա. Սուլուազա, Գ. Կորպաս Պաստոր, Է. Կոսերիու, Ս. Կարնեադո Մորե, Ա. ՏրիստաՊերես, Պ. Բեդիրյան, Խ Բադիկյան, Ա. Մուրվալյան, Ա. Սուքիասյան, Ս. Գալստյան, Ե. Գևորգյան, Գ. Ջահուկյան, և այլք) կարծիքները դարձվածքի՝ որպես վերաիմաստավորված ուրույն լեզվական միավորի վերաբերյալ:

Երկրորդ գլխում «dios» և «diablo» բաղադրիչներով դարձված ային միավորները ենթարկվել են կառուցվածքային վերլուծության: Երկու լեզվում էլ վերլուծությունները կատարվել են ինչպես ձևաբանական, այնպես էլ շարահյուսական մակարդակում՝ ուսումնասիրության արդյունքները ամփոփելով համապատասխան աղյուսակներում: Երկրորդ գլխի առաջին ենթագլխում փորձ է արվել հստակ տարանջատել հաղորդակցական դարձված ային միավորները, այն է՝ նախադասություն-դարձվածքները, ոչ հաղորդակցականներից (գոյականական, ածականական, բայական, մակբայական, դերանվանական և այլն)՝ առանձնահատուկ տեղ տալով բայական դարձվածքներին, քանի որ բայը կապակցելիության տեսակետից ամենալայն հնարավորություններն ունի: Առանձնահատուկ ուշադրություն են արժանացել եղանակավորող դարձված ային միավորները իրենց ստորոգումային կամ այսպես կոչված հաղորդակցական արժեքով և ոչ ստորոգումային տարբերակներով: Իսկ երկրորդ ենթագլխում քննվում են շարահյուսական կաղապարները՝ վեր հանելով իսպաներենի և հայերենի շարահյուսական առանձնահատկությունները:

Երրորդ գլխի առաջին ենթագլխում քննության են առնվել դարձվածքների իմաստային կառուցվածքի խնդիրները, այն է՝ դարձված ային միավորների իմաստային վերափոխումը՝ ըստ Ա. Նազարյանի առաջարկած դասակարգման սկզբունքների:

Երրորդ գլխի երկրորդ ենթագլխում կատարվել է «dios» և «diablo» բաղադրիչներով դարձվածքների իմաստային կաղապարների վերլուծություն և իսպաներենում և հայերենում: Տվյալ ուսումնասիրության մեջ կիրառվել է երկու մեթոդ՝ ներքին համադրական և դարձված ային միավորների բաղադրական վերլուծություն: Այստեղ դարձվածակազմական կաղապարի ուսումնասիրության մեջ ելակետ է ծառայել Ա. Ռայխշտեյնի առաջարկած մեթոդը, ըստ որի առանձնացվել են թեմատիկ խմբեր, այնուհետև վեր են հանվել բաղադրական և իրադրային կաղապարները, որոնց հանրագումարում ներկայացվել է դարձվածակազմական կաղապարը: Տվյալ ենթագլխում թեմատիկ

խմբերը երկուսն են՝ խորամանկություն («սատանա» բաղադրիչով) և բարեմաղթություն («աստված» բաղադրիչով)՝ իրենց բառիմաստային դաշտերով: Նշված թեմատիկ խմբերի իմաստային կադասարումը ներկայացվում է երկու աղյուսակի տեսքով:

Երրորդ գլխի երրորդ ենթագլխում քննվում է դարձվածային միավորների տարբերակայնության, բազմիմաստության և հոմանիշության խնդիրը երկու ուսումնասիրվող լեզուներում: Մանրամասն քննվում են դարձվածային տարբերակի էական տարբերակիչ հատկանիշները՝ դարձվածային հոմանիշությունից տարանջատելու նպատակով: Բազմիմաստությանը զուգահեռ ուսումնասիրվում է նաև իմաստային լայն ծավալ ունեցող դարձվածքների խնդիրը և փորձ է արվում տալ հստակ սահմանազատում տվյալ լեզվական երևույթների միջև:

Չորրորդ գլխում քննվում է ազգային և համընդհանուր խնդիրը, այն է՝ «dios» և «diablo» բաղադրիչներով դարձվածային միավորներում վեր հանել ազգամշակութային առանձնահատկությունները և առանձնացնել իսպաներենում և հայերենում արձանագրված իրույթներն ու ընդհանրույթները: Այստեղ առանձնահատուկ շեշտադրվում է քրիստոնեության և քրիստոնեական մշակույթի ազդեցությունը երկու լեզուների ազգամշակույթի և դարձվածային համակարգի վրա և քննվում են «dios» և «diablo» բաղադրիչներով դարձվածային միավորները՝ ըստ մարդափոխաբերականացման չափանիշների՝ մահկանացուին բնորոշ հատկանիշները վերագրելով աստծուն և սատանային:

Հինգերորդ գլխում քննության են առնվում «dios» և «diablo» բաղադրիչներով դարձվածային միավորների փոխակերպումները տարբեր հեղինակների գեղարվեստական ստեղծագործություններում:

Եզրակացության մեջ ամփոփվում են կատարված ուսումնասիրության արդյունքները և ներկայացվում հիմնական եզրահանգումները:

Աշխատանքի վերջում տրվում է գրականության ցանկ, որն արտացոլում է օգտագործված տեսական գրականությունը: Առաջին հավելվածում ներկայացվում է աշխատանքի փաստական նյութը,

իսկ երկրորդում՝ «dios» և «diablo» բաղադրիչներով դարձվածքների թեմատիկ դասակարգումը իսպաներենում և հայ երենում:

ԳԼՈՒԽԱՌԱՋԻՆ
ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴԱՐՁՎԱԾՔԻ
ԸՄԲՈՒՄԱՆ ԵՎ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ
ԱԿՆԱՐԿ

Դարձվածքը լեզվի ազգային ինքնատիպությունն ու յուրօրինակությունն արտահայտող լեզվական միավոր է, որում առավել վառ կերպով արտացոլվում են տվյալ ժողովրդի լեզվամտածողության առանձնահատկությունները, պատմական հարուստ կենսավորձը, կենցաղն ու սովորույթները: Որպես լեզվական երևույթ՝ այն հատուկ է բոլոր լեզուներին, սակայն յուրաքանչյուր լեզվում ունի իր ուրույն դրսևորումները՝ կախված արտալեզվական և ներլեզվական գործոններից: Այն իր իմաստաբերական և առանձնահատկություններով և տարբերակիչ հատկանիշներով ուրույն լեզվական միավոր է. գոյանում է մարդու աշխարհաճանաչողության զարգացման համեմատաբար ավելի բարձր մակարդակում՝ պայմանավորված հասարակական որոշակի գիտակցությամբ և ընկալմամբ:

Հայ տնի հայ դարձվածաբան Պ. Բեդիրյանը դարձվածային միավորներն ուսումնասիրելիս նշում է, որ քերականական կառուցվածքից հետո, դարձվածքներն են երևի լեզվական այն տարրերը, որոնք ամենից հարազատ են արտացոլում տվյալ

Ժողովրդի լեզվամտածողության ինքնատիպությունը /Բեդիրյան, 1973: 25/:

Դարձվածաբանական տարբեր խնդիրների մեկնաբանության գործում մեծ ավանդուհանդեսն հայտնի լեզվաբաններ Շ. Բալին, Վ. Վ. Վինոգրադովը, Ն. Մ. Շանսկին, Ա. Վ. Կունինը, Վ. Ն. Տելիան, Ն. Ն. Ամոսովան, Վ. Ի Մոկիենկոն, Խ. Կասարեսը, Կ. Պաստորը և այլք: Թեև գոյություն ունի դարձվածաբանական մեծածավալ գրականություն, այնուամենայնիվ դեռևս չկա միասնական կարծիք դարձվածքի, նրա սահմանների, էական տարբերակիչ հատկանիշների, դարձվածքների իմաստաբանական և ձևաբանական դասակարգման, իմաստային կառուցվածքի, դարձվածքը հարակից այլ լեզվական միավորներից սահմանազատելու չափանիշների, նախադասության կառուցվածքով ձևավորված դարձվածքների, խոսքում դարձվածքների փոխակերպման հիմնական տեսակների և այլ խնդիրների շուրջ:

Մասնագիտական գրականության մեջ դարձվածքը հայտնի է որպես երկու և ավելի բաղադրիչներից կազմված լեզվական կայուն, պատրաստի վերարտադրելի կապակցություն, որը բնութագրվում է բաղադրիչների ամբողջական կամ մասնակի իմաստային վերափոխմամբ: Լայն առումով որոշ լեզվաբաններ դարձվածքների շարքին են դասում բոլոր կայուն կապակցությունները, բաղադրյալ բառերն ու հարադրությունները, ինչպես նաև թևավոր խոսքերը, առածներն ու սացվածքները:

Լեզվական իրականության մեջ բավականին բարդ է սահմանազատել կայուն կապակցությունը դարձվածային միավորից, քանի որ երկու լեզվական միավորներն էլ աչքի են ընկնում կառուցվածքային կայունությամբ և որպես պատրաստի կառույց վերարտադրվում են խոսելու պահին: Սակայն դարձվածքն ունի նաև փոխաբերական իմաստ, և նրա կազմում բառ-բաղադրիչները կորցնում են իրենց անկախ իմաստային արժեքը, մինչդեռ կայուն կապակցության իմաստը բխում է նրա բաղադրիչների իմաստների հանրագումարից, և նրան բնորոշ է փոխաբերականությանը:

Բաղադրյալ բառերի կամ հարադրությունների դեպքում խնդիրը մի փոքր այլ է: Չնայած վերջիններս դարձվածքի հետ ունեն կազմության նմանություն (կազմված են երկու և ավելի բառ-բաղադրիչներից), սակայն տարբերվում են՝ ըստ բաղադրիչների կատարած գործառնության. դարձվածքի բառ-բաղադրիչներն ունեն առանձին բառերի արժեք (գլուխյուղել), մինչդեռ բաղադրյալ բառերի կամ հարադրությունների բառ-բաղադրիչները գուրկ են տվյալ հատկանիշից (շուր տալ, սար գալ) /Բեդիրյան, 1973: 56/: Այս խնդրի շուրջ բուրժուական այլ տեսակետ է ներկայացրել Խ. Բադիկյանը, ըստ որի, դարձվածային միավորները, լինելով տարակազմ կառույցներ, իրենց թե՛ ձևով և թե՛ իմաստով շատ են նմանվում հայերենի հարադրություններին և շատ հաճախ նույնանում են հարադրական բայերին /Բադիկյան, 1986: 68/:

Ավելի հաճախ դարձվածային միավորներին վերագրում են բառային միավորին համարժեք այնպիսի իմաստաբանական միավորներ, որոնց հատուկ են վերափոխադրումն ու փոխաբերականությունը /Սուքիասյան, Գալստյան, 1975: 5/: Չնայած վերջիններս որոշ հատկանիշներով նման են, այնուամենայնիվ խորապես տարբերվում են միմյանցից: Նույնը փաստում է նաև Ա. Նազարյանը, որը, հղելով Ա. Կուլինին, նշում է, որ «չնայած դարձվածքի բաղադրիչները չեն դադարում բառ լինելուց, այնուամենայնիվ նրանց գործածությունը ձեռք է բերում առանձնահատուկ բնույթ. կորցնում են իրենց առարկայական հարաբերակցությունը, չեն կարող առանձնանալ որպես նախադասության անդամ և չեն կարող կապակցվել կամ հարաբերակցվել նախադասության մյուս անդամների հետ, որոնց հետ կապակցվում կամ հարաբերակցվում է ամբողջ դարձվածքը» /Назарян, 1987: 16/:

Մեկ այլ հատկանիշ, որով դարձվածային միավորը տարբերվում է բառից այն է, որ դարձվածային միավորը հիմնականում լինում է վերափոխադրված՝ օժտված փոխաբերական նշանակությամբ, մինչդեռ բառը միշտ չէ, որ հանդես է գալիս իր փոխաբերական իմաստով:

Դարձվածային միավորների տարբերակման չափանիշները, ինչպես նաև վեր-ջիններիս շուրջ ձևավորված կարծիքները չափազանց տարբեր են, երբեմն հակասական և իրարամերժ, որի վառ ասացույց է ծառայում այն փաստը, որ որոշ լեզվաբաններ բուն դարձվածային կապակցությունների հետ դարձվածքների մեջ են ներգրավում նաև հատկաբանությունները (իդիոմները), առած-ասացվածքային արտահայտությունները, ասույթները, թևավոր կամ իմաստալից խոսքերը և այլն:

Նախապես իդիոմ նշանակել է խոսվածք, բարբառ կամ լեզվի ոգի: Ներկայումս, ըստ լայն տարածում գտած տեսակետի, իդիոմները հենց դարձվածային սերտաճումներն ու դարձվածային միասնություններն են¹: Ն. Ամոսովան նույնիսկ իր «Անգլերենի դարձվածաբանության հիմունքներ» մենագրության մեջ փորձ է արել առանձնացնել դարձվածքի կառուցվածքա-իմաստային երկու տեսակ՝ ֆրագեմաներ (երկանդամ դարձվածքներ, որոնց բաղադրիչներից միայն մեկն է վերաիմաստավորված) և իդիոմներ (ամբողջությամբ վերաիմաստավորված դարձվածքներ), որը նույնպես փաստում է, որ իդիոմը ավելի շուտ դարձվածքի տեսակ է /Амосова, 1963: 72/:

Թևավոր խոսքերը ևս երբեմն նույնացվում են դարձվածային միավորների հետ: Սրանք սրամիտ, խորիմաստ ու պատկերավոր արտահայտություններ են, որոնք, ի տարբերություն դարձվածքների, ունեն հեղինակային ծագում, բարոյախրատական մեծ նշանակություն և հաճախ պահպանում են իրենց հիմնական իմաստը: Ըստ Կասարեսի՝ թևավոր խոսքը բառային անկախ միավոր է, որը տարբերվում է դարձվածային միավորներից նրանով, որ հանդես չի գալիս նախադասության անդամի գործառնությամբ, այլ որպես գլխավոր նախադասություն /Casares, 1950: 164/:

Դարձվածաբանության ամենաբարդ հարցերից մեկը առածների և ասացվածքների սահմանազատումն է դարձվածային միավորներից²: Ըստ Ռ. Մելքումյանի և Պ. Պողոսյանի՝ դարձվածքների նմանությունը առածներին և ասացվածքներին

ձևական է: Նրանք առանձնացնում են երկու տարբերակիչ հատկանիշ՝

ա) ի տարբերություն դարձվածքների, խոսքային պատրաստի այս միավորներն ունեն ոչ թե փոխաբերական, այլ այլաբերական նշանակություն,

բ) ի տարբերություն դարձվածքների, որոնք Լեզվական միավորներ են, առածներն ու ասացվածքները, ինչպես նաև թևավոր արտահայտություններն ու համառոտ ակնարկները, պատրաստի խոսքային միավորներ են և առանձին վերցրած էլ կարող են ունենալ ավարտուն խոսքի արժեք, թեև սովորաբար պատրաստի ձևով ներհյուսվում են խոսքի մեջ /Մելքումյան, Պողոսյան, 1975: 7/:

Լեզվաբանական գրականության մեջ դարձվածքներն ավելի շուտ կարող են նույնացվել առածների հետ: Ասացվածքների հետ դարձվածքների նմանությունը գուտ ձևական է, քանի որ նրանց բնորոշ է վերափաստավորումը: Իսկ ահա առածների և դարձվածքների միջև կարելի է բացահայտել նմանություններ թե՛ արտահայտության, թե՛ բովանդակության պլանում: Սրանք դիպուկ, սուր և պատկերավոր արտահայտություններ են՝ ճանաչողական և իմացական մեծ արժեքով, որոնք ունեն նաև հստակ ընդգծված տարբերակիչ հատկանիշներ. առածները շարահյուսորեն համեմատաբար ավելի հեշտ են տարրալուծվում, քան դարձվածային միավորները, օժտված են ավելի թույլ վերափաստավորմամբ, գրեթե միշտ հանդես են գալիս ստորոգական ձևավորվածությամբ՝ ձեռք բերելով հաղորդակցական արժեք, մինչդեռ դարձվածքների մի սովոր գանգված օժտված է հենց անվանողական արժեքով (գոյականական, ածականական, մակբայական դարձվածքներ և այլն), որից գուրկ են առածները: Դարձվածքները (այդ թվում նաև հաղորդակցական դարձվածքները), ի տարբերություն առածների, չունեն խրատական և ուսուցողական բնույթ, մինչդեռ առածներն արտահայտում են ժողովրդական դարավոր իմաստությունն ու կենսափորձը /Բադիկյան, 1986: 83-87/:

Լեզվաբանական գրականության մեջ շրջանառվում է նաև այն տեսակետը, որ ասույթներն ու դարձվածքները կարելի է

նույն անկանացուն էլ կամ համարել հոմանիշներ: Ասույթներն անկախ խոսքաչարեր են՝ նվազագույն հաղորդակցական միավորներ, որի վերարտադրությունը իրականացվում է տարբեր հնչերանգային միավորների միջոցով /Zuluaga, 1980: 192/: Այլ կերպ ասած՝ դրանք խոսքի անկախ շղթաներ են, որոնք ձևավորվում են անկախ հնչերանգով, ինչպես բնորոշ է նվազագույն հաղորդակցական միավորներին: Սովորաբար դարձվածային ասույթները ստորաբաժանվում են առածների և առօրյա խոսակցական բանաձևերի (fórmulas rutinarias): Առածներն ունեն վերաբերային իմաստ և համատեքստային անկախություն, իսկ առօրյա խոսակցական բանաձևերը՝ հասարակական, հուզարտահայտչական կամ խոսքային իմաստ և ի հայտ են գալիս կոնկրետ իրավիճակներում կամ պայմաններում: Այսպիսով, մի կողմից այնքան էլ տեղին չէ դարձվածային միավորները համարել ասույթ, իսկ մյուս կողմից հաղորդակցական դարձվածքներն ու առածները, ինչպես արդեն նշվել է, ունեն որոշ նմանություններ: Այնուամենայնիվ լեզվաբանական գրականության մեջ չկա դարձվածային միավորները հարակից լեզվական միավորներից հստակ սահմանազատելու մեկ միասնական կարծիք, և հարցը թերևս շարունակում է մնալ վիճահարույց: Դարձվածքի սահմանման հարցը թեև շատ արդիական է, սակայն լեզվաբանական գրականության մեջ տարատեսակ սահմանումների շարքում դեռևս չկա մեկ ընդհանուր, միասնական սահմանում, որը կտար դարձվածային միավորի տարբերակման վերաբերյալ լիարժեք պատկերացում:

Դիտարկենք այդ սահմանումներից մի քանիսը:

Ա. Մուրվալյանը սահմանում է դարձվածքները որպես բառիմաստի տեսակետից կայուն, անբաժանելի միավորներ, որոնք արտահայտում են առանձին բառագաղափարներ, խոսքի մեջ սովորաբար հանդես են գալիս նախադասության որևէ անդամի դերում և համարժեք են այս կամ այն բառին /Մուրվալյան, 1953: 12/: Ըստ էության, Մուրվալյանը դարձվածքը սահմանելիս ելակետային է համարում նրա խոսքիմասային պատկանելությունը, այսինքն՝ գործառական կողմը և հարաբերակ-

ցում է դարձվածքը բառի գաղափարի հետ՝ նորից զուգադրելով բառային և դարձվածային միավորները:

Նույնը փաստել է նաև Մ. Աբեղյանը, որն առաջիններից է, ով քննել է դարձվածային միավորները և առաջարկել հետևյալ սահմանումը. «բառերի այդպիսի նորիմաստ կապակցությունները սովորաբար կոչվում են դարձվածքներ, որոնք սակայն մի բառի նշանակություն են ստանում և կարող են նաև մի բարդ բառ համարվել» /Աբեղյան, 1965: 151/: Աբեղյանը նույնպես շեշտը դնում է բառ և դարձվածք փոխարարություն վրա՝ դարձվածքը համարելով բարդ բառ:

Ե. Գևորգյանը դարձվածքներն ուսումնասիրելիս առանձնացնում է երկու սահմանում: Նա մի կողմից դարձվածքը բնորոշում է որպես միայն տվյալ լեզվին հատուկ յուրօրինակ արտահայտություն, որը բառացի թարգմանելի չէ այլ լեզուներով: Իսկ մյուս կողմից դարձվածք է համարում այն բառակապակցությունները, որի ընդհանուր իմաստը կախված չէ կամ չի կարելի բխեցնել նրակազմության մեջ մտնող բառերից /Գևորգյան 1969: 16/: Այսինքն՝ Գևորգյանը մի կողմից դիտարկում է դարձվածքի թարգմանելիության խնդիրը՝ ուսումնասիրելով այն թարգմանաբանության տեսակետից, մյուս կողմից՝ հարում ավանդական լեզվաբանական մոտեցմանը:

Ըստ Պ. Բեդիրյանի՝ «դարձվածքը բառերի կայուն, պատրաստի վերարտադրելի, վերաիմաստավորված կապակցություն է, ուր բաղադրիչ բառերի ինքնությունը ձևական է, շարահյուսական կապը՝ մթագնած» /Բեդիրյան, 1973: 5/: Բեդիրյանը սահմանել է դարձվածքը լայն առումով՝ ներգրավելով դարձվածային միավորը բնորոշող գրեթե բոլոր էական հատկանիշները՝ բաղադրիչների կայունությունը, վերարտադրելիությունը, վերաիմաստավորվածությունը, բաղադրիչների բառիմաստի թուլացումը:

Բ. Մելքումյանն ու Պ. Պողոսյանը փաստում են, որ դարձվածաբանությունը լեզվի անկապտելի բաժին է և նրա հարստության վկայություններից մեկը, դարերի ընթացքում ձևավորված և դարերի բովո՞վ անցած լեզվի կառուցվածքային տարր,

որը չի նույնանում պատրաստի լեզվական ու խոսքային այլ տարրերի հետ: Մելքումյանն ու Պողոսյանը դարձվածքը սահմանում են որպես «երկու և ավելի բառերի կայուն կապակցություն, որն ամբողջությամբ առած արտահայտում է մեկ գաղափար և ունենում է փոխաբերական իմաստ» /Մելքումյան, Պողոսյան, 1975: 7/:

Գ. Ջահուկյանը, Է. Աղայանը, Ինչպես նաև Վ. Առաքելյանը, Վ. Քոսյանը ուսումնասիրում են դարձվածային միավորը իմաստաբանական տեսանկյունից՝ նշելով, որ դարձվածքի բաղադրիչները գրկվում են բառային նշանակությունից՝ կատարելով գրեթե այնպիսի դեր, ինչպիսին կատարում են ձևայինները բառի մեջ /Ջահուկյան, Աղայան, 1980/:

Դարձվածաբանության հարցերին է անդրադարձել նաև Զ. Պետրոսյանն իր «Յայերենագիտական բառարանում», որտեղ նա նշում է, որ դարձվածքը կայուն բառակապակցություն է, որին բնորոշ է ուժեղ կամ պակաս սերտաճումը: Իմաստային ալանում այն անտրոհելի է, կառուցվածքային ալանում բաղադրիչները կամ դրանցից որևէ մեկը անփոխարինելի է, այսինքն՝ ունի բառային անփոփոխակ: Բացի այդ, այն ունի փոխաբերական իմաստավորում և պատրաստի վերարտադրվում է խոսքում /Պետրոսյան, 1987: 175/:

Քննելով ռուս և հայ դարձվածաբանական հսկայածավալ գրականության մեջ առկա դարձվածքի տարբեր ըմբռնումներն ու մեկնաբանությունները՝ Խ. Բադիկյանը դարձվածքը բնորոշում է որպես «երկու կամ ավելի բառերից կազմված պատկերավոր գաղափար կամ հասկացություն արտահայտող վերաիմաստավորված և վերարտադրելի կայուն բառակապակցություն» /Բադիկյան, 1986: 89/:

Ինչպես նշում է Խ. Բադիկյանը, «դարձվածային միավորը լեզվական առանձին իմաստակիր միավոր է. որևէ լեզվի դարձվածքները այդ լեզվի աղև ու համեմունքն են, տվյալ լեզուն կրող ժողովրդի հոգևոր մշակույթի հարստությունը» /Բադիկյան, 1986: 6/:

Իմաստավորվելով ժողովրդի դարավոր փորձով՝ վերջիններս հանդես են գալիս կյանքի բոլոր բնագավառներում՝ խոսքը դարձնելով պատկերավոր, արտահայտիչ, դիպուկ ու սեղմ: Բադիկյանն ուսումնասիրում է դարձվածքը որպես

ազգամշակութային տարր, որը բացահայտում է տվյալ լեզվի ազգային առանձնահատկությունները և լեզվամտածողության ինքնատիպությունը³:

Ա. Սուքիասյանն իր «Ժամանակակից հայոց լեզու» դասագրքում դարձվածքը սահմանում է հետևյալ կերպ՝ «կառուցվածքով երկու և ավելի բառերի կայուն, իմաստով ամբողջական, վերափոխանակման անհնարձեղ կապակցություն, որը խոսքում վերարտադրվում է իբրև լեզվական պատրաստի միավոր» /Սուքիասյան, 1999: 296/: Սուքիասյանը բացի փոխաբերականացման և պատկերավորության հատկանիշներից ընդգծում է նաև դարձվածքի կայունությունը, իմաստային ամբողջականությունն ու կառուցվածքային տարբերակների հնարավորությունը:

Յանրագումարի բերելով հայագիտական աղբյուրների տեսակետները՝ կարելի է առանձնացնել դարձվածքի հետևյալ հիմնական հատկանիշները.

- ա. երկու և ավելի բառ-բաղադրիչների առկայությունը
 - բ. կառուցվածքի կայունությունը
 - գ. իմաստային ամբողջականությունը
 - դ. վերափոխանակումը
 - ե. բաղադրիչների իմաստային ինքնուրույնության ձևականությունը
 - զ. փոխաբերությունը/պատկերավորությունը
 - է. բառերի շարահյուսական կապի մթազնումը:
- Իսկ այժմ ներկայացնենք իսպանագիտական աղբյուրներում դարձվածքի մեկնաբանության վերաբերյալ հիմնական տեսակետները:

Իսպանագիտական աղբյուրներում դարձվածքը հանդես է գալիս “fraseologismo” կամ “unidad fraseológica”, հաճախ նաև locución, expresión fija, expresión pluriverbal, unidad pluriverbal lexicalizada եզրույթներով: Սակայն համանման տարատեսակ եզրույթների գոյությունն արդեն ընդգծում է ինդրի խրթինությունը: Կարելի է հանդիպել նաև giro, dicho, idiomatismo, modismo, refrán, proverbio և այլ եզրույթների, որոնք կիրառվում են խոսքային տարբեր իրադրություններում և

բարդացնում դարձվածքի սահմանումն ու տարանջատումը հարակից հասկացություններին:

Իսպանական դարձվածաբանության կարկառուն ներկայացուցիչներից մեկը, որն ունի անփոխարինելի ներդրում այս ոլորտում, հայտնի է զվարթան հունլիո Կասարեսն է, որին կարելի է ներկայացնել նաև որպես իսպանական դարձվածաբանության հիմնադիր: Դեռևս անցյալ դարի հիսունական թվականների սկզբներին նա առաջինն էր, ով սահմանեց դարձվածքը իր «ժամանակակից իսպաներենի բառարանագրության ներածություն» (1950) աշխատության մեջ: Ըստ Կասարեսի՝ «դարձվածքը երկու և ավելի բաղադրիչներից կազմված կայուն կապակցությունն է, որն ունի խոսքի մասի գործառնություն, և որի մշտական միասնական իմաստը չի բխում իր բաղադրիչների սովորական իմաստների հանրագումարից» /Casares, 1950: 224/: Դարձվածքի սահմանման համար որպես էլակետ Կասարեսն ընդունում է կառուցվածքային կայունությունն ու իմաստի ամբողջականությունը՝ համարելով երկու տարբեր սկզբունքներ (իմաստային և գործառնական): Ըստ իմաստային սկզբունքի՝ կայուն կապակցությունները, այդ թվում նաև դարձվածքները, սահմանվում են որպես իմաստային անքակտելի ամբողջություն կամ բաղադրիչների հանրագումար, որոնք ձեռք են բերում մեկ ընդհանուր իմաստ: Իսկ ըստ գործառնական սկզբունքի՝ դարձվածքները դասակարգելիս դրանք կարելի է նույնականացնել որևէ խոսքի մասի հետ, որը փաստում է, որ այստեղ գործում են միաժամանակ և՛ գործառնական, և՛ կառուցվածքային սկզբունքները:

Կասարեսը, հիմք ընդունելով տվյալ սկզբունքները, բոլոր դարձվածային միավորները դասում է երկու խմբի՝ հասկացական և կապական: Ոչ հաղորդակցական դարձվածային միավորները նա դասում է հասկացական դարձվածք-ների շարքում, որտեղ առանձնանում են դարձվածքների հետևյալ տեսակները.

ա. գոյականական (sustantivas)

բ. ածականական (adjetivales)

գ. բայական (verbales)

- դ. մակբայական (adverbiales)
- ե. դերանվանական (pronominales)
- զ. դերբայական (participiales)
- է. բացականչական (exclamativas):

Կապական դարձվածքների շարքում Կասարեսն առանձնացնում է երկու խումբ.

- ա. շաղկապական (conjuntivas)
- բ. նախդրային (prepositivas):

Կասարեսի նշված դասակարգումը հետագայում հիմք ծառայեց շատ նշանավոր դարձվածաբանների առաջ քաշած տեսությունների զարգացման համար:

Խոսելով դարձվածային միավորների մասին՝ Ֆ Վարելան և Ու. Կոլբարտը նշում են, որ դարձվածային միավորներ են կոչվում այն բառակապակցությունները, որոնք որոշ ժամանակահատված պահպանում են իրենց կառուցվածքային կայունությունն ու իմաստային ամբողջականությունը /Varela y Kubarth, 2004: 9/: Վարելան և Կոլբարտը, ինչպես և Կասարեսը, դարձվածքի տարբերակիչ հատկանիշ են համարում կառուցվածքային կայունությունն ու հատկաբանական բնույթը:

Ա. Սուլլուագան դարձվածքների սահմանման հարցում նույնպես մնում է հավատարիմ ավանդական մոտեցմանը և թերևս հարում է Կասարեսի, Վարելայի և Կոլբարտի տեսակետին՝ դարձվածքի ելակետային դրույթ ընդունելով կառուցվածքային կայունությունն ու հատկաբանական բնույթը /Zuluaga, 1980: 135/: Նա, հիմնվելով Կասարեսի դասակարգման վրա, փորձում է կատարելագործել այն՝ դարձնելով ավելի լիարժեք: Սուլլուագան դարձվածային միավորների մեջ է ներառում առնվազն երկու և ավելի բառերից կամ երբեմն նաև ամբողջական նախադասություններից կազմված կապակցությունները, որի բաղադրիչները գտնվում կամ գտնվել են որոշակի շարահյուսական հարաբերության մեջ: Ըստ Սուլլուագայի տեսության՝ դարձվածքները ստորաբաժանվում են դարձվածային ասույթների (enunciados fraseológicos), որոնք կարող են կազմել ամբողջական նախադասություններ և տեքստեր (առած, ասացվածք և

այլն), և դարձվածային միավորների (locuciones), որոնք որևէ խոսքի մաս են և կարող են լինել նախադասության անդամ: Կապակցվելով նախադասության այլ անդամների հետ՝ նրանք կազմում են մեկ ամբողջական նախադասություն: Այլ կերպ ասած՝ դարձվածային ասույթները, ըստ Սուլևուզայի՝ նույն հաղորդակցական դարձվածքներն են, որոնք ունեն նախադասության արժեք, իսկ դարձվածային միավորները համապատասխանում են ոչ հաղորդակցականներին կամ հակացականներին, որոնց մեջ նա առանձնացնում է հետևյալ տեսակները.

ա. քերականական գործիքներ (instrumentos gramaticales)
(նախդրային, շաղ-կապական, սաստկական),

բ. **բառային միավորներ** (գոյականական, ածականական, մակբայական),

գ. **շարույթներ** (բայական):

Այս դասակարգումը համեմատելով Կասարեսի դասակարգման հետ՝ ավելի շուտ կարելի է նկատել նմանություններ, քան տարբերություններ: Սուլևուզան դարձվածային միավորների դասակարգման հարացույցում ավելացնում է ևս մեկ տեսակ՝ սաստկական (locución elativa), որն ունի բառույթները սաստկացնող բնույթ (de dios - շատ): Մակբայականների շարքում նա առանձնացնում է երեք տեսակ՝ նախադասության կառուցվածք ունեցող դարձվածքներ (cláusulas), պարագայական դարձվածքներ (circunstanciales) և մակբայներ (adverbios):

Ըստ Սուլևուզայի՝ անհրաժեշտ է դերբայական դարձվածքները (locuciones participiales) տարբերակել ածականականներից (locuciones adnominales), քանի որ դերբայականները, ըստ էության, նույնպես ներգրավվում են ածականականների մեջ: Դերանվանական դարձվածքները Սուլևուզան չի առանձնացնում որպես առանձին դարձվածային խումբ, քանի որ գտնում է, որ վերջիններս պիտի դասվեն այն դարձվածքների շարքում, որոնց գործառույթը կատարում են, իսկ բացականչական դարձվածային միավորները նա դասում է դարձվածային ասույթների շարքում:

Է. Կոստերիոլն դարձվածքներն ուսումնասիրելիս բավականին հեռանում է ավանդական մոտեցումներից: Նահարցին մոտենում է մի փոքր այլ տեսանկյունից՝ փորձելով տարբերակել այսպես կոչված «խոսքի տեխնիկան» (técnica del discurso) «կրկնվող խոսքից» (discurso repetido): Ըստ նրա՝ «խոսքի ազատ տեխնիկան» ներառում է բառային և քերականական միավորները (բառույթ, ձևույթ և այլն) և նախադասության մեջ դրանց ձևափոխության և կապակցման կանոնները: Մինչդեռ կրկնվող խոսքը ներառում է այն ամենն, ինչ ունի կայուն կառուցվածք (արտահայտություն, կայուն կապակցություն, դարձվածք և այլն) և որի բաղադրիչները չեն կարող տեղաշարժվել կամ փոխարինվել ըստ էության ժամանակակից օրենքների» /Coseriu, 1986: 113/: Կոստերիոլն առաջարկում է «կրկնվող խոսքի» հետևյալ դասակարգումը.

- ա. նախադասությունների համարժեք միավորներ (textemas)
- բ. շարույթների համարժեք միավորներ (sintagmas estereotipados)
- գ. բառային միավորների համարժեք միավորներ (perífrasis léxicas):

Լայն առումով դիտարկելիս Կոստերիոլի և Սուլևուզայի տեսություններն ունեն շատ ընդհանրություններ: Եական տարբերությունն այն է, որ նրանք հարցին մոտենում են տարբեր տեսանկյուններից. Կոստերիոլն ուսումնասիրում է դարձվածքները միայն խոսքում:

Ութուսական թվականներին կուբայական դարձվածաբանական դպրոցի հայտնի ներկայացուցիչները՝ 2. Կարնեադո Մորեն և Ա. Տրիստա Պերեսը, հաշվի առնելով իսպաներենում դարձվածային միավորների դասակարգման բացը իմաստային չափանիշների տեսանկյունից, փորձում են համալրել այն՝ դարձնելով ավելի լիարժեք: Կարնեադո Մորեն, հիմնվելով ռուսական դարձվածաբանական դպրոցի, մասնավորապես Վ. Վինոգրադովի դասակարգման վրա, խմբավորում է դարձվածքներն ըստ պատճառաբանվածության աստիճանի և քերականական կառուցվածքի /Carneado Moré, Tristán Pérez, 1985: 39/.

- ա. դարձվածային սերտաճումներ
- բ. դարձվածային միասնություններ

գ. դարձվածային կապակցություններ

դ. դարձվածային արտահայտություններ:

Նա մասնավորապես ուսումնասիրում է դարձվածային սերտաճումներն ու միասնությունները՝ առաջարկելով վերջիններիս դասակարգման իր ուրույն կադապրը, համաձայն որի, վերոնշյալ երկու միավորները լինում են՝

ա. բայական

բ. անդրադարձ

գ. ստորոգական

դ. դերբայական (hecho դերբայով)

ե. շաղկապական

զ. դերանվանական (la/las դերանուններով)

է. գոյականական

ը. ածականական

թ. մակբայական:

Կարնեադո Մորեն որպես էլակետ ընդունել է Ն. Կուրչատկինայի և Ա. Սուպրունի դասակարգումը /Курчаткина, Супрун, 2009: 57-80/: Կուրչատկինան և Սուպրունը կատարել են բավականին ծավալուն ուսումնասիրությունն այդ ոլորտում՝ շեշտը դնելով հիմնականում դարձվածային միավորների խոսքիմասային պատկանելության, այսինքն՝ դարձվածքների բառաբերականական իմաստների վրա: Կարնեադո Մորեի դասակարգումը ամբողջությամբ համընկնում է Կուրչատկինայի և Սուպրունի դասակարգմանը, որտեղ առանձնահատուկ քննության առարկան են մակբայական դարձվածքները, որոնց շարքում առանձնանում են համեմատություն-դարձվածքները: Սրանք իսպաներենում հանդես են գալիս como նախդրի հետ կիրառությամբ և երբեմն նույնացվում hecho դերբայով կազմված դարձվածքների հետ (օրինակ՝ (ponerse) hecho un Cristo/ (ponerse) como un Cristo - կեղտոտվել), իսկ հայերենում ուղեկցվում են **պես** կամ **նման** կապերով (օրինակ՝ սատանի պես/ նման - թարսի պես): Նրանք մանրամասն ուսումնասիրում են la/las դերանուններով դարձվածային միավորների ծագումն ու զարգացումը՝ փորձելով լուսաբանել

իսպաներենի ոչ հաղորդակցական դարձվածային միավորների առանձնահատկությունները:

Կարևորագույն Մորեն և Տրիստա Պերեսը առանձնացնում են դարձվածքների ուսումնասիրության երկու մեթոդ՝ համադրական և վերլուծական, այսինքն՝ մի կողմից ուսումնասիրում են դարձվածային միավորները որպես պատրաստի կառույց (համադրական մեթոդ), մյուս կողմից՝ վերջիններիս առաջացման ուղիները (վերլուծական մեթոդ):

Ա. Տրիստա Պերեսի տեսության վրա մեծ ազդեցություն են ունեցել ինչպես դարձվածաբանության սովետական դպրոցի ուսումնասիրությունները, այնպես էլ Կասարեսի տեսությունը, որի հիման վրա նա կատարել է իր ուրույն դասակարգումը՝ վերոնշյալ դասակարգմանն ավելացնելով դարձվածքների ևս երկու տիպ՝ ելնելով նրանց ներքին ձևից /Tristá Pérez, 1988: 29-30/.

ա. Դարձվածքներ, որոնց ներքին ձևում կամի «նվազագույն ցուցիչ» կամ «նույնացուցիչ մասնիկ», որն ընդգծում է վերջիններիս՝ դարձվածային միավոր լի-նելու փաստը: Այս դարձվածքների շարքում կարող են հանդիպել այնպիսի դարձվածքներ, որոնց բաղադրիչներից որոշները հնացած են և այլևս չեն կիրառվում տվյալ դարձվածային միավորից դուրս: Օրինակ՝ hacer el paripé (բառացի՝ խաբեություն) - շողոքորթել մեկին ինչ-որ նպատակի հասնելու համար՝ խաբել, մոլորեցնել: Լայն առումով ուսումնասիրելիս այս խմբի մեջ են մտնում շատ տարբեր դարձվածքներ, օրինակ, այնպիսի դարձվածքներ, որոնց բառ-բաղադրիչները գուրկ են իմաստից տվյալ դարձվածքների շրջանակներից դուրս, և դարձվածքներ, որոնց կազմում բաղադրիչները ձեռք են բերում նոր դարձվածային իմաստ:

բ. Դարձվածքներ, որոնց ներքին ձևում չկա «նույնացուցիչ մասնիկ»: Այս միավորների ամբողջական իմաստը մասամբ ստացվում է բաղադրիչների իմաստների հանրագումարից, այսինքն՝ այս դարձվածային միավորները մասնակիորեն են վերափոխվում: Օրինակ՝ tender la mano (բառացի՝ ձեռք մեկնել) - օգնություն առաջարկել:

Ա. Տրիստա Պերեսը, հիմնվելով ավանդական մոտեցումների վրա, իր դասակարգման հիմնաքար համարել է դարձվածքների ներքին ձևը, որը նեղ առումով ուսումնասիրելիս շատ կարևոր է դարձվածային հոմանիշների և տարբերակների սահմանազատման խնդրում, իսկ լայն առումով, այն էական տարբերակիչ հատկանիշ է դարձվածքը լեզվական այլ միավորներից սահմանազատելու համար:

Գլորիա Կորպաս Պաստորը, որը մեծ ներդրում ունի իսպանական դարձվածաբանության զարգացման մեջ, քննադատում է դասակարգման վերոհիշյալ սկզբունքները և իր դասակարգման մեջ առաջարկում է ասույթի, հետևաբար և խոսքային ակտի սկզբունքը գուգակցել կայունության (fijación) չափանիշի հետ (նորմայում, համակարգում կամ խոսքում) /Corpas Pastor, 1996: 50/:

Հիմնվելով Սոսյունրի և Բալիի տեսությունների վրա, որոնք առաջիններից են, որ սահմանազատում են ազատ կապակցությունները կայուններից, ռուս հայտնի իսպանագետ Վ. Ս. Վինոգրադովը դարձվածային միավորը սահմանում է որպես կայուն կապակցություն, որն առաջացել է ազատ բառակապակցության ամբողջական վերափոխատվորումից, ունի կայուն ասույթային իմաստ և ներքին ձև, որը պատկերավոր ձևով պատճառաբանում է տվյալ իմաստը /Виноградов, 2003: 199/:

Վինոգրադովը դարձվածային միավորներն ուսումնասիրելիս ելակետային է համարում վերափոխատվորումն ու ներքին ձևը⁴:

Իր «Իսպաներեն լեզվի բառագիտություն» աշխատության մեջ Վ. Ս. Վինոգրադովն առանձնացնում է դարձվածքների հետևյալ տարբերակիչ հատկանիշները, որոնք արտացոլում են իսպաներենի դարձվածային համակարգի առանձնահատկությունները /Виноградов, 2003: 174-177/.

ա. բառայնացվածությունը

բ. վերարտադրելիությունը

գ. կայունությունը

դ. իմաստային ամբողջականությունը

ե. հատկաբանական բնույթը

զ. բառերով արտահայտված ներքին ձևը (վերափոխատվորում)

Ե.բառային նշույթավորվածությունը (օժտված է հոլգարտահայտչական, գնահատողական և ոճական երանգավորմամբ):

Ինչպես տեսնում ենք, դարձվածքի սահմանման ու դասակարգման շուրջ ձևավորված կարծիքները բազմազան են: Իմիբերելով լեզվաբանական գրականության մեջ առկա տարբեր տեսակետներ՝ դարձվածքը կարելի է սահմանել որպես երկու և ավելի բաղադրիչներից կազմված կապակցություն, որը պատրաստիվերարտարվում է խոսքում և բնորոշվում կառուցվածքային կայունությամբ, գործածության որոշակի հաճախականությամբ, մասնակի կամ ամբողջական իմաստային վերափոխմամբ:

Դարձվածքների սահմանների, տարբերակման չափանիշների, նրանց իմաստային և ձևաբանական դասակարգման, ինչպես նաև շատ այլ հարցեր դեռևս լեզվաբանական գրականության մեջ չեն ստացել իրենց սպառիչ գիտական լուծումը: Այդ է հիմնական պատճառը, որ դարձվածքը որպես լեզվական միավոր դեռևս շարունակում է մնալ տարբեր ուսումնասիրությունների առարկա և հաճախ նույնացվում լեզվական այլ միավորների հետ՝ շփման եզրեր գտնելով տարբեր գիտաճյուղերի հետ:

ՃԱՆՈՐԱԳՐՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ

1. Իդիոմները, նեղ առումով ու սուբնասիրելիս ոչ այլ ինչ են, քան դարձվածք, ըստ որի, իդիոմ են համարվում հատուկ դարձվածքները, որոնց փաստական իմաստը չի համընկնում նրանց քերականական ու տրամաբանական իմաստին /Գևորգյան, 1969/: Իսկ այն առումով ու սուբնասիրելիս առանձնացվում են դարձվածքից, չնայած օժտված են գրեթե նույն հատկանիշներով, ինչ դարձվածքը:

2. 3. Բաղդասարյանը, ի մի բերելով առածի և ասացվածքի սահմանման խնդրում առկա տարբեր տեսակետներ, առանձնացնում է առածն ու ասացվածքը բնութագրող հետևյալ էական տարբերակիչ հատկանիշները.

1. Առածներն ու ասացվածքները տարածալորված բարդ լեզվական միավորներ են, որոնք կառուցվածքի տեսանկյունից՝ շարահյուսորեն կազմավորված են որպես ինքնուրույն, ավարտուն դատողություն արտահայտող նախադասություններ՝ պարզ կամ բարդ:
2. Ինչպես և դարձվածքները, առածներն ու ասացվածքները չեն ստեղծվում խոսքում, այլ վերարտադրվում են պատրաստի ձևով, հետևաբար և դրանք լեզվի և ոչ թե խոսքի միավորներ են, որոնք ունեն ոչ թե անհատական, այլ համաժողովրդական բնույթ:
3. Ի տարբերություն հաղորդակցական արժեք ունեցող դարձվածքների՝ առածներն ու ասացվածքներն ունեն բարոյախոսական, դիդակտիկ բնույթ և ուսուցանում են վարվել ակերպի որոշ կանոններ:
4. Առածների և ասացվածքների վերաբերյալ ը որևէ իրադրություն է, սակայն ոչ թե կոնկրետ իրադրություն, այլ նմանատիպ իրադրությունների մի դաս /Բաղդասարյան, 2012: 192-193/:

3. Նույն կարծիքին են հարում նաև Ա. Սուքիասյանն ու Ս. Գալստյանը՝ նշելով, որ դարձվածքները կամ դարձվածաբանական միավորները ժողովրդի հոգևոր մշակույթի հարստությունն են և արտահայտում են լեզվի ազգային ինքնատիպությունն ու յուրահատկությունը /Սուքիասյան, Գալստյան, 1975: 5/:

4. Հայտնի դարձվածաբան Ա. Նազարյանը նշում է, որ «դարձվածքը տարածակորված լեզվական միավոր է, որը բնորոշվում է բաղադրիչների մասնակի կամ ամբողջական իմաստային վերափոխմամբ» /Назарян 1987: 42/:

ԳԼՈՒԽԵՐԿՐՈՐԴ

«DIOS» (ԱՍՏՎԱԾ) ԵՎ «DIABLO» (ՍԱՏԱՆԱ) ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐՈՎ ԴԱՐՁՎԱԾՍՅՈՒՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՅ ԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՍՊԱՆԵՐԵՆՈՒՄ՝ ՀԱՅԵՐԵՆԻ ՉՈՒԳԱԴՐՈՒԹՅԱՄԲ

2.1 «Dios» (աստված) և «diablo» (սատանա) բաղադրիչ ներդրում դարձված այ ին միավորների ձևաբանական կադաստրների քննություն

Դարձված այ ին միավորների ձևաբանական կադաստրների վերլուծությունը ենթադրում է դարձվածքների ձևաբանական կազմի մանրամասն ուսումնասիրություն, որը կատարելիս մենք բախվում ենք քերականական այն բոլոր հարաբերությունների հետ, որոնք առկա են նախադասության մեջ՝ շարահյուսություն, խնդրառություն, համաձայնություն և այլն, քանի որ դարձված այ ին միավորները հաճախ հանդես են գալիս որպես նախադասության մաս, անդամ, երբեմն էլ՝ (հաղորդական դարձվածքները) նախադասության տեսքով: Դարձվածքները և՛ ձևաբանական, և՛ շարահյուսության տեսանկյունից կրում են նույն քերականական փոփոխությունները, ինչ նախադասության մյուս անդամները կամ նախադասությունն ամբողջությամբ: Այնուամենայնիվ տեղին է նշել, որ դարձված այ ին կապակցություններն ավելի են կայունանում՝ դառնալով անբաժանելի այն դեպքում, երբ տվյալ քերականական հարաբերություններն ավելի աղոտ ու մթազնած են /Բադիկյան, 1986: 30/: Դարձվածքների ձևաբանական-համադրական վերլուծությունը թույլ է տալիս բացահայտել համեմատվող լեզվական համակարգերին բնորոշ նմանություններն ու տարբերությունները, որոնք նախ և առաջ պայմանավորված են քննվող լեզուների քերականական կազմի առանձնահատկություններով:

Մեր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ իսպաներենի և հայերենի դարձված այ ին միավորների

ծևաբանական կաղապարներում կան և՛ նույնական, և՛ տարբեր կաղապարներ:

Նախքան վերլուծություն կատարելը, հարկ է փաստել, որ, ելնելով մի շարք ուսումնասիրությունների գործնական փորձից, հաջորդիվ ներկայացվող աղյուսակում հոդը որպես առանձին խոսքի մաս հանդես չի գալիս, քանի որ որպես որոշարկիչ (determinante) այն ուղեկցում է գոյականին՝ արտահայտելով նրա ընդհանուր հատկանիշները: Ե՛վ քերականական, և՛ իմաստային առումով այն կցվում է գոյականին՝ նրա հետ կազմելով մի ամբողջություն: Հարկ է նշել նաև, որ մեր կառուցվածքային ուսումնասիրության մեջ չեն քննվում առածներն ու ասացվածքները, որոնք բնութագրվում են ուրույն կառուցվածքային-ծևաբանական առանձնահատկություններով:

Աղյուսակ 1.

«Dios» և «diablo» բաղադրիչներով դարձվածային միավորների կառուցվածքային-ծևաբանական կաղապարները իսպաներենում

I.	Կաղապար	Տոկոսային հարաբերություն	Օրինակ
1.	V+Prep+S	(50) 19,3%	Estar con Dios
2.	S+Prep+S	(25) 9,6%	Alma de Dios
3.	V+S+Prep+S	(23) 8,9%	Alzar las manos a Dios
4.	Prep+S+Prep+S	(21) 8,1%	A la mano de Dios
5.	V+S	(15) 5,8%	Permita Dios
6.	S+Pron+V	(11) 4,2%	Dios nos libre
7.	V+Prep+S+Prep+S	(11) 4,2%	Poner a Dios por testigo
8.	Prep+S	(10) 3,8%	De Dios
9.	Ni+S	(9) 3,4%	Ni el demonio/diablo
10.	V/Pron+S	(7) 2,7%	Válgame Dios
11.	Pron+V+S	(6) 2,3%	Ese es el diablo

12.	Prep+Det+S	(5) 1,9%	De todos los demonios
13.	S+V	(4) 1,5%	Dios dará
14.	S+Adj	(4) 1,5%	Diablos azules
15.	Adv+S+V	(4) 1,5%	Como Dios manda
16.	Prep+Det+S+Prep+S	(4) 1,5%	Por esas calles de Dios
17.	Prep+S+S	(3) 1,1%	De Dios el medio
18.	V+Prep+S+Conj+S	(3) 1,1%	Están como la cruz y el diablo
19.	Prep+V+S	(3) 1,1%	Sin decir Jesús
20.	S+V+S	(3) 1,1%	Dios ve las trampas
21.	V/Pron+S+P+S	(3) 1,1%	Lllamarle Dios a juicio
22.	S+Conj+Pron+V	(3) 1,1%	Demonio que le entienda
23.	Interj+S	(3) 1,1%	Oh Dios
24.	V+S+Conj+S	(3) 1,1%	Costar Dios y ayuda
25.	V+Prep+S+S	(3) 1,1%	Tomar a Dios la puerta
26.	S+Prep	(2) 0,7%	Dios delante
27.	Adj+S	(2) 0,7%	Pobre diablo
28.	Prep+S+Conj+Prep+S	(2) 0,7%	A Dios y a aventura
29.	V+Adj+S+Conj+S+V	(2) 0,7%	Dar cada golpe que Dios tiritita
30.	No+V+S+Ni+S+Prep+S	(2) 0,7%	No dejar Dios ni títere con cabeza
31.	Adv+S+V+S	(2) 0,7%	Donde el diablo perdió el poncho
32.	Adv+S+Pron+V	(2) 0,7%	Así Dios te guarde
33.	S+S	(2) 0,7%	Agua Dios
34.	Conj+S+Pron+V	(2) 0,7%	Que Dios la socorra
35.	Conj+Prep+S+V	(2) 0,7%	Que de Dios haya

36.	V+Adv+S+V	(2) 0,7%	Acabar como Dios quiera
-----	-----------	----------	-------------------------

Աղյ ու սակ 2.

«Աստված» և «սատանա» բաղադրիչ ներով դարձված այ ի ն միավորների կառուցվածքայ ի ն-ձևաբանական կաղապարները հայ երեւու մ

1.	Կաղապար	Տոկոսայ ի ն հարաբերու թյ ու ն	Օր ի նակ
1.	S+S+V	(140) 29,1%	Աստված Աստված անել Աստոնւ բարևը մոռանալ Աստոնւ ն Աստվածատուր ասել
2.	S+S	(115) 23,9%	Աստոն պատիժ, Աստոն կծիկ, Աստոն աշխարհ
3.	S + V	(91) 18,9%	Աստված անի
4.	S+Adv+V	(12) 2,4%	Սատանան առաջն է ի նկեր
5.	S+Partic.	(12) 2,4	Աստոնը սպանված
6.	S+S+S+V	(10) 2%	Աստված մեղքերին թողու թյ ու ն անի Աստոն երկյ ու ղը սրտում չկա
7.	S+S+S	(10) 2%	Աստոն ձեռքի ջ ու ը
8.	S+Adj+V	(9) 1,8%	Աստված արժանի անել
9.	S+nexo+V	(9) 1,8%	Աստոն մոտ ու ղարկել
10.	S+Pron+S+	(9) 1,8%	Աստված այ ն հավը չխոսեց-նե
11.	S+S+Adv+V	(7) 1,4%	Աստոն կրակը վրեդ թափի

12.	S+Pron+V	(6) 1,2%	Աստված մեզ հովանավորի
13.	Adj+S	(5) 1%	Ճշմարիտ Աստված
14.	S+S+Partic.	(4) 0.8%	Սատանի կաթ ծծած
15.	S+nexo	(4) 0,8%	Սատանի պես
16.	S+Adj+S+V	(4) 0,8%	Աստված բարի ճամփատալ
18.	S+S+Pron+nexo+V	(4) 0,8%	Աստուծո աջը ինձ (քեզ) վրալ ինել
19.	S+V+S	(4) 0,8%	Սատանան գիտե գլուխը
20.	Conj+S+V	(4) 0,8%	Եթե Աստված կա
21.	S+Pron+S	(3) 0,6%	Տեր իմ Աստված
22.	S+S+Adj	(3) 0,6%	Սատանի աչքը բոռ
23.	S+Pron	(3) 0,6%	Աստված իմ
24.	S+nexo+S+V	(3) 0,6%	Սատանի հետ ծնունդ նստել
25.	S+Num+S+V	(2) 0,4%	Աստված մի դուռ կբանա
26.	S+nexo+Pron	(2) 0,4%	Աստված ընդ քեզ
27.	S+S+Pron+nexo+V	(2) 0,4%	Աստուծո աչքը ինձ (քեզ) վրալ ինել
28.	S+S+nexo+V	(2) 0,4%	Հույսդ Աստուծու վրա դի՛ր
29.	S+S+V+V	(2) 0,4%	Սատանի երեսը տեսնել կուզեր

Ըստ վերոնշյալ աղյուսակներում ներկայացված տվյալների՝ իսպաներենում կարող ենք առանձնացնել հետևյալ առավել արդյունավետ կաղապարները՝ V+Prep+S (կիրառման 50 դեպք), S+Prep+S (կիրառման 25 դեպք), V+S+Prep+S (կիրառման 23 դեպք), Prep+S+Prep+S (կիրառման 21 դեպք), V+S (կիրառման 15 դեպք), S+Pron+V

(կիրառման 11 դեպք), V+Prep+S+Prep+S (կիրառման 11 դեպք), Prep+S (կիրառման 10 դեպք), Conj+S (կիրառման 9 դեպք), իսկ հայերենում առավել արդյունավետ են հետևյալ կաղապարները՝ S+S+V (կիրառման 140 դեպք), S+S (կիրառման 115 դեպք), S+V (կիրառման 91 դեպք), S+Adv+V (կիրառման 12 դեպք), S+Partic (կիրառման 12 դեպք), S+S+S+V (կիրառման 10 դեպք), S+S+S (կիրառման 10 դեպք), S+Adj+V (կիրառման 9 դեպք), S+nexo+V (կիրառման 9 դեպք), S+Pron+S+V (կիրառման 9 դեպք):

Մեր փաստական նյութի վերլուծությանը ցույց է տալիս, որ իսպաներենի արդյունավետ կաղապարներում սովորականագույն կազմում բայական դարձվածային միավորները, քանի որ բայը՝ որպես լրացյալ, կապակցելիության տեսակետից ամենալայն հնարավորության ունի /Բեդիրյան, 1973: 187/: Բացի այդ, բայական դարձվածային միավորներում բայ-բաղադրիչը քերականական իմաստի կրողն է: Վերջինիս գործածությանը բայական դարձվածքներում պարտադիր է, ի տարբերություն այլ (գոյականական, ածականական, մակբայական) դարձվածքների, որտեղ համապատասխան խոսքի մասերի, օրինակ՝ գոյականի, ածականի կամ մակբայի առկայությունը խիստ անհրաժեշտ է: Սալայն հիմնական տարբերակիչ հատկանիշներից է, որով բայական դարձվածային միավորները տարբերվում են մյուս տիպի դարձվածային միավորներից /Курчаткина, Суррун, 2009: 63/: Հայերենում բայական դարձվածային միավորները նույնպես գերակշիռ մաս են կազմում:

Մեր ուսումնասիրած նյութի բայական կաղապարներում առանձնանում են ստորոգական դարձվածքները, որոնք լայն քննարկման առարկա են դարձել դարձ-վածաբանական գրականության մեջ: Իսպանացի հայտնի դարձվածաբան Գ. Կոր-պաս Պաստորը նման բառակապակցություններն անվանում է նախադասություն-դարձվածքներ (locuciones clausales) և քննում նրանց էական տարբերակիչ հատկանիշները՝ ելնելով Ն. Կուրչատկինայի և Ա. Սուպրոուսի սկզբունքներից /Курчаткина, Суррун, 1981: 64/: Նման բայական կապակցություններն իրենց կառուցվածքով համարժեք են ենթակա, ստորոգյալ և հաճախել երկրորդական անդամներ ունեցող նախադասություններին և

արտահայտում են ամփոփ միտք, դատողություն: Սակայն, ըստ Գ. Կորաթաս Պաստորի՝ այս դարձվածային միավորները չեն կարող ամբողջական նախադասություն կազմել, որովհետև կոնկրետ խոսքում գործածվելիս պետք է առկայացնեն որևէ ակտանտ՝ գործողության մասնակից, կամ էլ՝ ավարտուն ասույթներ են՝ խիստ սահմանափակ իրենց գործածության մեջ՝ որպես նախադասության տարրեր /Corpas Pastor, 1996: 109/: Ինչպես և մյուս տիպի բայական կառույցները, նախադասություն-դարձվածքները նույնպես չեն կարող ինքնին ասույթ կազմել: Գ. Կորաթաս Պաստորի նշած առաջին տիպի դարձվածքներից են llevarle a alguien los demonios (բարկանալ); revestírsele a uno el demonio/todos los demonios (զայրանալ); darle (a uno) el diablo ruido (անխոհեմ քայլ կատարել) և այլ դարձվածքներ, որտեղ բացակայում է խնդիրը: Իրենց ներքին կառուցվածքով և քերականական առանձնահատկություններով նշված դարձվածային միավորները համարժեք են ստորոգական կապակցություններին: Խոսքում ենթակայի պաշտոնում հանդես են գալիս հետևյալ գոյականները՝ los demonios, el diablo, իսկ ստորոգյալի պաշտոնում՝ llevarle, revestírsele, darle բայական բաղադրիչները: Խոսքում գործածվելիս (օրինակ՝ el diablo le dio ruido կամ se lo llevaron los demonios) ակնհայտ է, որ ենթակայի (el diablo, los demonios) և բայական շարունյթի (le dio ruido, se lo llevaron) միջև ստորոգական հարաբերություններին բովանդակային հայեցակերպը կորում է՝ պահպանելով միայն նշված բաղադրիչների միջև քերականական կախվածությունը: Նման դարձվածքները նախադասության մեջ միայն ստորոգյալի գործառնյթ են իրականացնում:

Մեր ուսումնասիրած նյութում տեղ են գտել նաև ստորոգական երկրորդ տիպի կառույցներ, որոնք չեն կարող տեքստում անկախ գործածվել՝ como Dios le da a alguien a entender, como Dios manda (ինչպես հարկն է) և այլն: Վերջիններիս սովորաբար լրացնում են գոյականական կամ բայական շարունյթները, օրինակ՝ Juan estudia francés como Dios manda, cada día:

Իսպաներենի մեր ուսումնասիրած դարձվածապաշարում առանձնանում է բայով և la, las դերանուններով կազմված բայական

կաղապարը, որտեղ նշված դերանունները չեն հարաբերակցվում որևէ գոյականի հետ: Որոշ գիտնականներ գտնում են, որ վերջիններս իգական սեռի գոյականների գեղջված տարբերակներն են, թեև միշտ չէ, որ հնարավոր է վերականգնել տվյալ գեղջված լեզվական միավորները: Իսպաներենում *la, las* լրացում դերանուններով (*pronombre complemento*) կազմված դարձվածային միավորների հետ մեկտեղ գործածվում են նաև *lo* չեզոք դերանունով կազմված դարձվածային կապակցությունները, որոնք, ըստ իսպանագիտական աղբյուրների, ավելի քիչ կիրառելի են, քան *la, las* դերանուններով կազմվածները: Օրինակ՝ *Llevarse lo el demonio* (անհետանալ); *Dejarlo a Dios* (Աստծո վրահողյսը դնել); *Estar uno que se lo lleven los demonios* (շատ զայրացած լինել); *A la de Dios que es Cristo* (թեթևամտորեն); *Creerlo como creer en Dios* (լինել չափազանց ինքնավստահ); *Dios se lo perdone* (Աստված թողու թյուրեւ): Համաձայն մեկ այլ տեսակետի՝ իտալերենում և իսպաներենում հաճախ նման արտահայտություններում չեզոք սեռի փոխարեն կիրառվում է իգական սեռի *la* դերանունը *causa* (պատճառ) իմաստով /Курчаткина, Сурьян, 2009: 68/: Տվյալ լեզվական երևույթը բնորոշ չէ հայերենին:

Խոսելով բայական կառույցների մասին՝ անհրաժեշտ է նշել, որ վերջիններս միայն նախադասության մաս են կազմում՝ իրականացնելով նախադասության տարբեր անդամների գործառույթներ և դասակարգվում ոչ հաղորդակցական դարձվածքների շարքում: Սովորաբար դարձվածաբանական գրականության մեջ տարբերակում են երկու տիպի դարձվածային միավորներ՝ հաղորդակցական և ոչ հաղորդակցական: Ոչ հաղորդակցական անվանողական դարձվածքների մի մասը՝ փոխաբերաբար վերաիմաստավորված նշում է որևէ անձ, առարկա կամ երևույթ, մյուս մասը՝ անձի, առարկայի կամ երևույթի, ինչպես նաև գործողության որակական հատկանիշ: Այս դեպքում դարձվածքները հանդես են գալիս անվանողական արժեքով և համարժեք են բառերին, և, ինչպես արդարացիորեն նշում է Մոլոտկովը, այս կարգի դարձվածքները արտահայտության պնդում բառակապակցություններ են, իսկ բովանդակության պնդում՝ հասկացություններ /Молотков, 1977: 15/: Մինչդեռ

հաղորդակցական դարձվածքներն ունեն հաղորդակցական արժեք և հարաբերակից են նախադասություներին /Բադիկյան, 1986: 90/:

Իսպաներենի մեր լեզվանյութում բայական ժամանակներից երբեմն հանդիպում է անցյալի, ապառնիի, իսկ ավելի հաճախ՝ սահմանական եղանակի ներկա ժամանակածևի և ըղձական եղանակի կիրառություները (օրինակ՝ Dios sabe; Más dijeron de Nuestro Señor Jesucristo; Dios dará; Dios nos tenga de su mano): Հայերենում հիմնականում գերակշռում է ըղձական եղանակը, սակայն հանդիպում են նաև սահմանական եղանակի ներկա անկատարը, անցյալ կատարյալը, պայմանական եղանակը և երբեմն էլ հրամայական եղանակը (օրինակ՝ Աստված խնայի; Աստված գիտի; Աստված լսեց; Աստված չի վերցնի; Տեր փրկի՛ր):

Մեր փաստական նյութում առանձնանում են մի շարք եղանակավորող դարձվածքներ, որոնք հիմնականում ստորոգումով ձևավորված եղանակավորող դարձվածքներ են, որտեղ բայն արտահայտված է ըղձական եղանակի երրորդ դեմքով. Que de Dios haya, Que Dios la socorra, Así Dios te guarde, Demonio que le entienda, Válgame Dios, Dios nos libre, Permita Dios: Հայերենի եղանակավորող դարձվածքներում նույնպես գերակշռում է ըղձական եղանակը (բայը խոնարհված է երրորդ դեմքով). Աստված մեղքերին թողություն անի, Աստված այն հավը չխոսեցնե, Աստծո կրակը վրեդ թափվի, Աստված մեզ հովանավորի և այլն, սակայն, ի տարբերություներն իսպաներենի, հնարավոր է նաև հանդիպել դարձվածքների, որտեղ բայը խոնարհված է ըղձական եղանակի երկրորդ կամ առաջին դեմքերով, օրինակ՝ Աստծու անվանը մեռնեմ (առաջին դեմք), Աստծո ամանաթ լինես (երկրորդ դեմք):

Եղանակավորող դարձվածային միավորները խոսքը դարձնում են ավելի պատկերավոր ու ազդեցիկ: Վերջիններս կարող են ազդել խոսքի իմաստային կամ հուզական կողմի վրա՝ հաղորդելով իմաստային և հուզական տարբեր երանգներ: Այս խմբի մեջ են մտնում այն դարձվածքները, որոնք արտահայտում են անեծք, օրհնանք, բարեմաղթություներ և այլն, օրինակ՝ Mantenga Dios, Válgame Dios, Dios lo oiga y el pecado sea sordo: Նույն երևույթը դիտարկվում է նաև հայերենում, օրինակ՝ անե՛ծք քեզ, չա՛ր սատանա, Առաջ

Աստված: Այս դարձվածքները դեռևս կրոնական գաղափարախոսության և մտայնության տիրապետության ժամանակաշրջանում, գլխավորապես կազմվել են «dios» (աստված), «diablo» (սատանա), «cielo» (երկինք), «espíritu» (հոգի) և նման այլ բաղադրիչներով (օրինակ՝ Alma de Dios, Երկնքի սիրուն, Սատանան գիտի). սկզբում կիրառվել են իրենց ուղիղ իմաստներով, այնուհետև ժամանակի ընթացքում տեղի է ունեցել իմաստի մթազնում և նրանց «բաժին է ընկել» խոսքը պարզապես երանգավորելու, ոճավորելու դերը, և դրանք դարձել են եղանակավորող արտահայտություններ /Բեդիրյան, 1973: 163-165/: Օրինակ՝ Dios guarde, Dios te guíe, Աստված պահի, Սատանան տանի: Ըստ Բադիկյանի՝ եղանակավորող դարձվածային միավորներում կառչայնքան վերաիմաստավորում, որքան խոսողի իմացական, գնահատողական վերաբերմունքը կոնկրետ իրի, առարկայի կամ որևէ գործողության նկատմամբ /Բադիկյան, 1986: 331/:

Չաղորդակցական արժեք ունեցող եղանակավորող դարձվածային միավոր-ներից շատերը, ինչպես հայտնի է, սովորական, երկկազմ նախադասություններ են՝ օժտված բայական ստորոգումով և նախադասությանը հատուկ քերականական կարգերով: Այս տիպի կառույցները լինում են ինչպես համառոտ (օրինակ՝ Guarde Dios, Աստված գիտի), այնպես էլ ընդարձակ (օրինակ՝ Աստված մեկդ հազարանի):

Չայերենում եղանակավորող դարձվածային միավորների մեջ առանձին խումբ են կազմում երկկազմ նախադասությունները, որոնք ունեն անվանական ստորոգ-յալներ: Օրինակ՝ Աստված ողորմած է: Կան կառույցներ, որոնցում հանգույցները զեղչված են: Օրինակ՝ Աստված պահապան; Աստված քեզ հետ; Անե՛ծք քեզ, չա՛ր սատանա; Սատանի աչքը քոռ; Սատանի ականջը խուլ: Տվյալ կառույցներում զեղչ-ված է *լիևի* հանգույցը, և վերջիններս համարվում են թերի դարձվածային նախադասություններ /Բադիկյան, 1986: 290/:

Որոշ եղանակավորող դարձվածային միավորներ խոսքում կարող են կիրառվել համապատասխան դերանուններով, որը նրանց կառուցվածքային առանձնահատկություններից է՝ Dios me/te salve,

Válgame/te Dios: Նույն երևույթը կարելի է դիտարկել նաև հայերենում, օրինակ՝ Աստված քեզ պահի, Աստված շուքը/շվաքը մեր (ծեր, քո) վրայից անպակաս անի, Աստծո աջը քեզ վրա քաղցր լինի և այլն: Երբեմն հայերենի եղանակավորող դարձվածքներում որոշիչ դեր են խաղում նաև **ս** և **դ** դիմորոշ հոդերը, որոնք գալիս են փոխարինելու դերանուններին, ինչպես օրինակ՝ Աստված բերանից **դ** լսի, Աստված անուն **դ** կտրի և այլն /Բաղիկյան, 1986: 331/:

Չաղորդակցական տարբեր իրադրություններում միևնույն եղանակավորող դարձվածքը կարող է կիրառվել տարբեր իմաստային և հուզական երանգներով՝ ելնելով խոսողի հաղորդակցական դիտավորությունից: Օրինակ՝ իսպաներենում **Por Dios**, ayúdenme և No soy culpable, **¡por Dios!** օրինակներում Por Dios դարձվածքը հանդես է գալիս երկու տարբեր իմաստային նրբերանգներով: Առաջին օրինակում նշված դարձվածքը արտահայտում է խնդրանք, իսկ երկրորդը երդման բանաձևում է: Չամեմատենք նաև հետևյալ օրինակները.

Աստված գիտե, թե մինչև այդ օրվան գալը որքա՛ն ժամանակ կանցնի (Անդրանիկ Յովսեփյան, Աստուծո մատը):

Աստված գիտի, աշխարհ գիտի՝ իմն ես դու (Յովհաննես Թումանյան, Անուշ):

Ախ, չէ՛, որդի՛ս, չէ՛. **Աստված գիտի՛**, որ չէ՛ (Վրթ. Փափազյան, Ժայռ):

Նշված օրինակներից ակնհայտ երևում է, որ միևնույն «Աստված գիտի» դարձվածքը խոսքային տարբեր իրադրություններում ձեռք է բերում հակասական իմաստներ՝ արտահայտելով իմաստային տարբեր նրբերանգներ: Առաջին օրինակում վերջինս արտահայտում է անորոշություն, անհայտություն, երկրորդում՝ վստահություն, հաստատունություն, իսկ երրորդը երդման բանաձևում է:

Իսպաներենում ոչ ստորոգումային և անվանական ստորոգմամբ եղանակավորող դարձվածային միավորների շարքում կարելի է առանձնացնել հետևյալ կաղապարները՝ Prep+S (Al diablo, Al demonio, Con Dios, Por Dios, Par Dios), S+Prep+S (Pipa de diablos, Fuego de Dios), Conj+S (Que demonios, Que diantres), Interj+S (Ay Dios, Oh Dios),

Prep+S+Prep+S (A la mano de Dios, A la paz de Dios), S+nexo (Dios mediante) և այլն, իսկ հայերենում առավել աչքի են ընկնում հետևյալ կաղապարները՝ գոյական+գոյական (Յուրա Աստված, Ումուդ Աստված, Փառք Աստծո, Աստված պահպան), գոյական+դերանուն+գոյական (Տեր իմ Աստված, Աստված քեզ դատավոր), գոյական+դերանուն (Աստված իմ, Աստվածները քեզ), գոյական+կապ, այսինքն՝ կապական (Աստված առաջ, Աստված հետո), գոյական+ կապ+դերանուն (Աստված ընդ քեզ), գոյական+գոյական+գոյական (Աստված երկինքը վկա, Աստծու անունը վկա) և այլն:

Ինչպես ցույց են տալիս մեր վերլուծության արդյունքները, իսպաներենը հարուստ է մակբայական կաղապարներով (Prep+S+Prep+S, Prep+S, Adv+S+V, Prep + V+S և այլն), որոնք շարահյուսական մակարդակում հիմնականում հանդես են գալիս պարագայի դերում: Իսպաներենը, ի տարբերություն ռոմանական մյուս լեզուների, լատիներենից քիչ թվով մակբայներ է ժառանգել, որը հետագայում լրացվել է մակբայական դարձվածային միավորներով: Նույնը փաստել է նաև Կասարեսը՝ նշելով, որ ժամանակակից իսպաներենը հարուստ է մակբայական դարձվածքներով, քանի որ վերջիններիս հաճախակի կիրառությունը լեզվում բացակայող մակբայների փոխարինման միջոց է /Kacapec, 1958: 235/: Իսպաներենում մակբայական դարձվածքները գլխավորապես կազմվում են նախորդակառույցներով, սակայն ոչ միշտ (a la de Dios, a la buena de Dios - ինչպես Աստված կամենա): Նույն ճանապարհով կազմվում են նաև ածականական դարձվածային միավորներ (de mil diablos - սարսափելի, como el diablo - տգեղ, Աստծու պես - սուրբ):

Դարձվածակազմական արդյունավետությամբ իսպաներենում առանձնանում են մակբայական Prep+S+Prep+S և Prep+S կառույցները (a la mano de Dios, de Dios), որոնք հայերենում շատ քիչ են դիտարկվում՝ ելնելով հայերենի քերականական համակարգի առանձնահատկություններից:

Ածականական դարձվածքները ցույց են տալիս որևէ անձի կամ առարկայի որակական հատկանիշը կամ վիճակը, իսկ

մակբայ ականները՝ հատկանիշի հատկանիշ՝ արտահայտելով գործողության որակական բնութագիրը կամ անձի կամ առարկայի որակական բնութագրման աստիճանը /Молотков, 1977: 140/, սակայն վերջիններս հիմնական տարբերակիչ գիծն այն է, որ մակբայ ական դարձվածքները կիրառվում են հիմնականում միայն բայերի հետ՝ հադես գալով որպես պարագայական լրացում, իսկ ածականականները՝ գոյականի և երբեմն էլ բայի հետ, որը հանդես է գալիս որպես բաղադրյալ ստորոգյալ՝ իր անվանական բաղադրիչով, և լրացնում է գոյականին: Օրինակ՝ **Llueve de dios** - ուժեղ անձրևում է (մակբայ ական դարձվածք), **Este hombre es como el Cristo de Vargas** - այս մարդը հզոր է (ածականական դարձվածք):

Ի տարբերությունն իսպաներենի՝ հայերենում մեծ թիվ են կազմում «սատանա» բաղադրիչով կազմված ածականական դարձվածային միավորները, որտեղ արտացոլվում է սատանայի խորամանկ լինելու հատկանիշը: Օրինակ՝ սատանային բնից հանող, սատանային թարս նալող, սատանա պայտող, սատանա խաբող և այլն: Սրանք, ինչպես տեսնում ենք, դերբայական գլխավոր բաղադրիչ ունեցող դարձվածային միավորներ են, որոնք, ինչպես նշում է Պ. Բեդիրյանը, ստացվել են բայականներից /Բեդիրյան, 1973: 139/:

Հայերենի ձևաբանական որոշ կաղապարներին կարող են համապատասխանել մի քանի ենթակաղապարներ՝ պայմանավորված հայերենի հարուստ հոլո-վական համակարգով, երբ դարձվածքի միևնույն գոյականական բաղադրիչը կիրառվում է տարբեր հոլովածներով, օրինակ՝ S+S+V կաղապարում առաջին գոյականական բաղադրիչը դրվում է մի դեպքում ուղղական՝ Աստված Աստված անել, երկրորդում՝ սեռական՝ Աստծու բարևը մոռանալ, երրորդում՝ տրական հոլովածով՝ Աստծուն Աստվածատուր/ Ասո ասել:

Չնայած մեր ուսումնասիրության մեջ արձանագրվել են hecho դերբայ + S կաղապարի գործածության ընդամենը մի քանի դեպք, այնուամենայնիվ անհրաժեշտ է անդրադարձնալ այդ կաղապարին, քանի որ այն բնորոշ է միայն իսպաներենին, նրա դարձվածաբանության առանձնահատկություններից է և չի հանդիպում նույնիսկ մոտիկ ցեղակից այլ լեզուներում: Այս

դարձվածքները հիմնականում կատարում են ածականի դեր, օրինակ՝ *hecho un Santo Cristo* (տանջված, տառապած), իսկ երբեմն ուղեկցվում են նաև *estar, tener* և այլ կիսաօժանդակ բայերով, օրինակ՝ *tener hecho pacto con el diablo* (սատանայի հետ դաշինք կնքել): Չնայած քննվող կաղապարի հետ ունեցած իր էական նմանությունը՝ այնուամենայնիվ վերջիններս նրանց շարքում չեն դասակարգվում, քանի որ *hecho* դերբայը այդպիսի դարձվածքներում կարող է փոխարինվել *hacer* բայի դիմավոր ձևերով: Իսկ *hecho* դերբայ + S կաղապարի կառուցվածքային կարևոր առանձնահատկությունը *hecho* դերբայի առաջադաս գործածությունն է, ինչպես նաև այն, որ *hacer* բայը չի կարող հանդես գալ դիմավոր ձևով: Իր իմաստային կառուցվածքով և պատկերավորությունով այս կաղապարը նման է *Como+S* կաղապարին և հաճախ կարելի է հանդիպել միևնույն դարձվածային միավորի կիրառությունը *hecho+S* կամ *como+S* բաղադրիչային կազմով, որոնք արտահայտում են նույն իմաստը, սակայն տարբերվում են իմաստային նրբերանգներով: Ինչպես նշում է Խ. Կասարեսը, նշված արտահայտությունները շատ ավելի են արտահայտում, քան պարզ համեմատությունները: Մի բան էլ ինել նման որևէ բանի, մեկ այլ բան՝ ամբողջովին վերածվել մի այլ բանի /Kacapec, 1958: 192/: Չայերենում այս իմաստային նրբերանգները կարող են արտահայտվել *դարձած, կտրած* հարակատար դերբայներով կազմված դարձվածային միավորներով, թեև մեր ուսումնասիրության մեջ այդպիսի օրինակներ չեն արձանագրվել, ինչը պայմանավորված է նաև նշված բառերի հետ «աստված» և «սատանա» բաղադրիչների իմաստային կապակցելիություն սուղ հնարավորություններով:

Իսպաներենի մեր լեզվանյութում ածականական դարձվածային միավորները փոքր թիվ են կազմում, մինչդեռ հայերենում վերջիններս սովոր գանգված են կազմում: Չայերենում հատկապես առանձնանում են *S+Partic.* (դերբայ) կաղապարով կազմված ածականական դարձվածքները՝ (Աստծո աղոթած - ապուշ, Աստուց թակած - պատժված): Սակայն ածականական դարձվածքները, ինչպես արդեն նշել ենք, ավելի հաճախ հանդիպում են «սատանա» բաղադրիչով դարձվածքներում, քանի որ

սատանան բնորոշ վուժ է խորամանկությամբ, հնարագիտությամբ, և այս դաշտում բնականաբար ածականները գերակշիռ թիվ են կազմում. օրինակ՝ Սատանի կոտոշ, Սատանի ճուտ/ձագ, Սատանին թարս նալ ողևայլն:

Չայերենի դարձվածային կաղապարները կառուցվածքային առումով ավելի ծավալուն են, որտեղ գերակա դիրք է գրավում գոյականը: Քանի որ հայերենը համադրական լեզու է՝ վերլուծականի տարբերով, գոյականին բնորոշ է նաև հոլովումը: Չանդիպում են տարբեր գոյականական կապակցություններ՝ ածական+գոյական (ճշմարիտ Աստված), գոյական (սեռ. հոլով) + գոյական (Աստճո տաճար/տուն, սատանի ճուտ, սատանի գուշ), թվական+գոյական (Երկրորդ Աստված), գոյական+գոյական+գոյական (Աստճո ձեռքի ջուր) և այլն:

Իսպաներենում շատ հազվադեպ է հանդիպում S+S կաղապարը (Agua Dios, Dios chico). մեր նյութի մեջ արձանագրվել է ընդամենը երկու դեպք:

Ինչպես տեսնում ենք, «dios» (աստված) և «diablo» (սատանա) բաղադրիչներով դարձվածային միավորներն իսպաներենում և հայերենում բնութագրվում են տիպաբանական որոշ ընդհանրություններով, բայց և միաժամանակ յուրաքանչյուր լեզվում նշված բաղադրիչները տարբերվում են իրենց դարձվածակազմական արդյունավետությամբ, իսկ դարձվածային կաղապարները՝ իրենց ձևաբանական-կառուցվածքային առանձնահատկություններով, որը պայմանավորված է յուրաքանչյուր լեզվի ազգային ինքնատիպությամբ, արտահայտության ձևական միջոցների բազմազանությամբ:

Այսպիսով, եզրափակելով տվյալ ենթագլուխը, կարելի է նկատել, որ.

ա) Բայական դարձվածային միավորները մեր փաստական նյութում սովորազանգված են կազմում, քանի որ բայը՝ որպես լրացյալ, կապակցելիության տեսակետից լայն հնարավորություններ ունի:

Այս դարձվածքների մյուս կարևոր առանձնահատկությունն այն է, որ շնորհիվ նախադասության մեջ բայ-բաղադրիչի

ստորոգման, վերջիններս համեմատաբար ավելի անկախ գոյություն են ապահովում՝ ձեռք բերելով հաղորդակցական արժեք:

բ) Մեր հավաքագրած նյութում մեծ թիվ են կազմում եղանակավորող դարձվածային միավորները: Առաջին պատճառն այն է, որ «dios», «diablo» և նման բաղադրիչներով կազմված կապակցությունները նախկինում գործածվել են իրենց ուղիղ իմաստով, այնուհետև մթազնել է նրանց իմաստը և վերջիններիս բաժին է ընկել պարզապես խոսքը երանգավորելու դերը: Բացի այդ, «dios» (աստված) և «diablo» (սատանա) բաղադրիչների առկայությունն արդեն իսկ ենթադրում է խոսքի երանգավորում, որոնք դարձվածքի մեջ իրենց բաղադրական և իրադրային իմակներով արտահայտում են բարեմաղթանք, օրհնանք, անեծք կամ հանդիմանանք:

գ) Ըստ դարձվածակազմական արդյունավետության՝ իսպաներենում երրորդ տեղում հանդես են գալիս մակբայական դարձվածքները: Մեր վերլուծության արդյունքները ևս մեկ անգամ հաստատում են Խ. Կասարեսի այն միտքը, որ իսպաներենում մակբայի սակավության պատճառով, լեզուն համալրվել է մակբայական դարձվածային միավորներով: Իսկ հայերենում ակնհայտորեն գերակշռում է S+S կառուցվածքային-ձևաբանական կաղապարը, որում ընդգրկված են գոյականական և ածականական դարձվածքներ: Գոյականական երկանդամ կառույցները ժամանակակից հայերենի ամենագործուն և տարածված տիպերն են, որոնք ներկայացնում են տարբեր ենթատիպեր: Ինչպես նշում է Խ. Բադիկյանը, գոյականական երկանդամ կառույցներ են նաև «աստված» բառով բաղադրված դարձվածքների մի մասը, որը լայն կիրառություն ունի հատկապես բանավոր խոսքում և մեծ մասամբ հատուկ է հասարակաբանությանը (օրինակ՝ աստծո մազ-երկինք, աստծո պատիժ - արետ, աստծո դուռ - եկեղեցի, աստծո աջ - զորություն,) /Բադիկյան 1986: 96-97/: Գոյականական երկանդամ կառույցներում կան նաև մի շարք դարձվածքներ «սատանա» գերադաս բառով՝ սատանի կծիկ - խառնաշփոթություն, սատանի խելք - հնարագիտություն և այլն:

2.2 «Dios» (աստված) և «diablo» (սատանա) բաղադրիչ ներուվ դարձվածային միավորների շարահյուսական կառավարների վերլուծություն

Յուրաքանչյուր լեզվի դարձվածապաշարին բնութագրական են ոչ միայն ձևաբանական, այլև շարահյուսական որոշակի առանձնահատկություններ: Ինչպես արդեն նշվել է, լեզուները միմյանցից տարբերվում են մեծամասամբ իրենց ձևաբանական կազմով, թեև շարահյուսության մեջ նույնպես դիտարկվում են ամեն մի լեզվին բնորոշ յուրահատկություններ: Խոսելով հաղորդակցական դարձվածքների մասին՝ Խ. Բադիկյանը նշում է, որ «լեզվի մեջ դարձվածային միավորները հանդես են գալիս ոչ միայն բառագիտության և ձևաբանության մակարդակներում, այլև շարահյուսական մակարդակում որպես լեզվի հաղորդակցային մակարդակի իմաստակիր միավորներ՝ օժտված սովորական նախադասությանը հատուկ էական հատկանիշներով ու քերականական կարգերով, որպիսիք են խնդրառությունը, համաձայնությունը, շարադասությունը, հոլովման և խոնարհման հարաբերությունները, սակայն դարձվածքների մեջ վերջիններս մեծ մասամբ քարացած են» /Բադիկյան, 1986: 293/: Որևէ լեզվի դարձվածքների շարահյուսական կառավար ուսումնասիրելը ենթադրում է տվյալ լեզվի շարահյուսության ուսումնասիրություն: Դարձվածքների շարահյուսական կառավարներն իրենց կազմությամբ քիչ են տարբերվում ազատ բառակապակցություններից: Ինչպես նշում է Վ. Շմելևը, «դարձվածքների մեջ մենք հանդիպում ենք գրեթե բոլոր տիպի բառակապակցություններին, որոնք արձանագրված են ժամանակակից լեզվի ակտիվ բառակազմում» /Шмелев, 1977: 292/: Իսպանացի լեզվաբան Սալվադոր Գուտիերեսը նշում է, որ «Շարահյուսությունը համապատասխանում է միջշարակարգային կապակցական հարաբերությունների վերլուծությանը» /Gutiérrez, 1997: 24/: Ինչ վերաբերում է կայուն կապակցության, այն է՝ դարձվածային միավորի անդամների կապակցելիությանը, ապա այստեղի հայտ են գալիս տարբերություններ. իսպաներենում

դարձված այ ին միավորների անդամները կապակցվում են նախդիրների միջոցով. կապակցման եղանակը կապայ ին է, իսկ հայերենում՝ խնդրառու թյ ու ն-կառավարում կապակցման եղանակով, ինչպես անմիջական՝ հոլովածներով, այնպես էլ միջնորդավորված կամ կապայ ին՝ արտահայտված կապերով /Պապոյան, Բադիկյան, 2003: 30-31/:

Մեր ուսումնասիրության ընթացքում նկատվում են շրջունն շարահասու թյան դեպքեր, որոնք որպես լեզվական երևույթ բնորոշ են ինչպես իսպաներենին, այնպես էլ հայերենին: Յարկ է նշել նաև, որ դարձված այ ին միավորները նախահասու թյան մեջ իրականացնում են նույն շարահյուսական գործառույթները, ինչ իրենց համապատասխան խոսքի մասերը:

Յայերենում, ի տարբերություն իսպաներենի, շնորհիվ հոլովական համակարգի, կարելի է տարբերակել մի քանի անուղղակի խնդիր, հետևաբար մեկ շարահյուսական կաղապարը կարող է հանդես գալ անուղղակի խնդրի մի քանի տարբերակով՝

CI+V (անուղղակի խնդիր+անորոշ դերբայ)

- 1. Անջատման անուղ. խ. (բացառական)+բայ Օր՝ Աստճուց երես դարձնել
- 2. Յանգման անուղ. խ. (տրական)+բայ Օր՝ Աստճուն աղոթել
- 3. Կապայ ին անուղ. խ.+բայ Օր՝ Աստճում ոտ գնալ
- 4. Միջոցի անուղ. խ. (գործիական)+բայ Օր՝ Աստճով մխիթարվես

Մեր ուսումնասիրության շրջանակներում փորձ է արվել հետազոտել «dios» (աստված) և «diablo» (սատանա) բաղադրիչներով առավել արդյունավետ շարահյուսական կաղապարները, որոնք հաջորդիվ կներկայացվեն երկու աղյուսակի տեսքով:

Աղյուսակ 3.

Իսպաներենի դարձվածքների շարահյուսական կաղապարները

№	Կաղապար	Օրինակ
1.	V+CD	Echar diablos
2.	V+CI	Clamar a Dios, dar al diablo, encomendarse a Dios, estar de Dios, cum-

		plir con Dios
3.	V+CD+CI V/CD+CI	Encomendar el alma a Dios, alzar las manos a Dios, enmendar la plana a Dios, entregar la osamenta a Dios Dejarlo a Dios
4.	Sujeto+V+CD	Dios ve las trampas
5.	Determinado+Determinante	Azote de Dios, pelos del diablo, bolsa de Dios, pan de Dios, cuerpo de Dios, diablo predicador, diablo cojuelo, diablos azules
6.	Nexo+Sujeto+CI+V	Como Dios le da a entender
7.	V/CI+CCM	Creerle como a Dios
8.	V+CI+CCL	Poner a Dios delante de los ojos
9.	Atr+V+Sujeto	Alabado sea Dios, bendito sea Dios
10.	CCL+CI	Aquí de Dios
11.	CCM+Sujeto+CI+V	Así Dios me salve, así Dios te guarde
12.	Determinante +Determinado	Pobre diablo

Աղյ ու սակ 4.

Չայ երեւնի դարձ վածքների շարահյ ու սական կաղապարները

№	Կաղապար	Օրինակ
1.	Determinante+CD+V	Աստճ ու կրակ ը թափել , Աստճ ու կրակ ն ու տել , Աստճ ու պարտքը կատարել , Աստճ ու փեշերը կտրել , սատանայ ի բաժին անել /դառնալ /լինել ,

		սատանայի կաթ ծծել , սատանի խել ք/լ եզու ու նենալ
2.	CI+V	Աստուղ գոհի ինել , Աստուղ տվածով գոհ լ ինել , Աստուղ մխիթարվել , Աստուղ փորձել , Աստուղ աղոթել , Սադունի հետ խնամու թյու նանել
3.	CI+CD+ V	Աստուղ Աստվածատու աել
4.	Sujeto+CD+V	Աստված խել ք տալ , Աստված հոգի նառել , սատանան հավ-կիթ /խնձոր գլորել
5.	Sujeto+CCL+V	Աստված ճակատին գրել , Աստուղ աքթից ընկնել
6.	Sujeto+CD+CCL+V	Աստված ձեռքը մեր գլխից անպակասանել , Աստված շուքը/շվաքը մեր վրայից անպակաս անի
7.	Determinante+Sujeto+CI/CCL+V	Աստուղ աքթը մեզ վրա լինի, Աստուղ աքթը մեզ վրաքաղցր ինել /մնալ / պահել , Աստուղ կրակը գլխին թափվել , Աստուղ երկյուղը /վախը սրտում չկա
8.	Sujeto+CI+CD	Աստված քեզ դատավոր , Աստված քեզ պահպան
9.	Sujeto+Determinante+CD+V	Աստված այն հավը չխոսեցնե, Աստված այն օրը չանե /չտա

		/չ ց ու ց ան Ե
10.	Determinante+determinado	Երկրորդ Աստված, Զոյս Աստված, Ումուդ Աստված, Ճշմարիտ Աստված, Տեր Աստված, Խանդակի սատանա
11.	Determinado+determinante	Աստված արդար, Աստված իմ
12.	Ady+determinante+determinado	Ճգնավորի հագուստով սատանա
13.	Determinante+Ady+determinado	Տեր իմ Աստված
14.	CCL+V	Աստուծո մոտ գնալ

Ինչպես տեսնում ենք, քննության առնված շարահյուսական կաղապարները, չնայած որոշակի նմանություններին, ամբողջովին չեն համընկնում: Զիմնական տարբերությունները մեկը այդ դարձվածային կապակցությունների բաղադրիչների դիրքն է, որը պայմանավորված է այս երկու լեզուներից յուրաքանչյուրի շարահյուսական համակարգի առանձնահատկություններով, օրինակ՝ իսպաներենում բայնունի առաջադաս կիրառություն (Entregar el alma a Dios), իսկ հայերենում՝ հետադաս (Յոգին Աստուծոն ավանդել):

Իսպաներենում հանդիպում են Determinado + Determinante (Լրացյալ + Լրացում, օրինակ՝ diablo cojuelo) և Determinante + Determinado (Լրացում + Լրացյալ, օրինակ՝ pobre diablo) կաղապարները: Նույն երևույթը կարելի է դիտարկել նաև հայերենում (Լրացյալ + Լրացում, օրինակ՝ Աստված արդար) և (Լրացում + Լրացյալ, օրինակ՝ Երկրորդ Աստված): Տվյալ կաղապարները տարբերվում են որոշիչ և որոշյալի հարաբերակցությամբ. որոշիչ-որոշյալի առավել հատկանշական դիրքը իսպաներենի դարձվածային կաղապարներում Determinado + Determinante (Լրացյալ-Լրացում) դիրքն է, որն այդքան էլ բնորոշ է հայերենին, որտեղ շարահյուսությամբ որոշիչը նախորդում է որոշյալին: Բացի այդ, իսպաներենում որոշիչ-

որոշյալ հարաբերություններում դարձվածքները կարող են հանդես գալ ինչպես նախդրի կիրառությամբ (Azote de Dios, Bolsa de Dios), այնպես էլ առանց նախդրի (Diablo predicador, Diablo cojuelo և այլն): Նշենք նաև, որ հին հայերենում որոշիչը հիմնականում հետադաս էր, ինչպես օրինակ՝ **Մարդ Աստուծոյ** դարձվածքում: Այս դարձվածքում, որը դասվում է ոչ ստորոգումային եղանակավորող դարձվածքների շարքում, բաղադրիչների տեղափոխության հետևանքով փոխվում է դարձվածքի իմաստն ու խոսքիմասային պատկանելությունը: «Մարդ Աստծո»-ն եղանակավորող դարձվածք է, որը կիրառվում է որպես որևէ հորդորով կամ խնդրանքով մեկին դիմելու արտահայտություն, իսկ «Աստծո մարդ» դարձվածքը գոյականական դարձվածային միավոր է, որը նշանակում է «Աստծո ներկայությունը երկրի վրա»: Իսպաներեն «Dios delante» դարձվածքի հայերեն համարժեքն է «Աստված առաջ» դարձվածային միավորը, որը հայերենում կարող է կրել բաղադրիչների փոփոխությունն՝ նախաբերություն, այն է՝ երկրորդ բաղադրիչը կարող է գալ առաջ՝ «Առաջ Աստված», ընդ որում երկու տարբերակներն էլ գործածական են:

Ի տարբերություն իսպաներենի, որը վերլուծական լեզու է և զուրկ է հոլովման հարացույցից, հայերենում միևնույն շարահյուսական կաղապարում գոյականը կարող է հանդես գալ տարբեր հոլովածներով:

Իսպաներենի որոշ դարձվածքներում սովորաբար ուղիղ և անուղղակի խնդիրները փոխարինվում են լրացում դերանուններով, օրինակ՝ «Entregar el alma a Dios» և «Dejarlo a Dios» դարձվածքներում մի դեպքում ուղիղ խնդիրը (el alma) առկա է, իսկ մյուս դեպքում փոխարինված է **lo** լրացում դերանունով:

Դարձվածային նախադասությունները, որտեղ առկա է ստորոգում, այսինքն՝ բայը խոնարհված է, առավելապես աչքի են ընկնում նախադասության կազմիչների կայուն շարադասությամբ, որը պայմանավորված է կառույցի կուռ լինելու և նրա բաղադրիչների իմաստային ամուր կապերի հանգամանքով: Որոշ դեպքերում նման դարձվածքները կարող են օգտագործվել շրջուն շարադասությամբ՝ ձեռք բերելով իմաստային որոշ

Նրբերանգներ: Օրինակ՝ *Աստված տա* և *Տա Աստված* դարձվածային միավորները միայն շարահասու թյամբ են տարբերվում. առաջինը՝ *Աստված տա* դարձվածքը, բացի բարեմաղթանքից կամ «երանի թե» իմաստից, երկրորդ իմաստով նշանակում է նաև «չկա», օրինակ՝ «Փող Աստված տա, ընկել եմ սար ու ձոր, փողի եմ ման գալիս» /Բեդիրյան, 2011: 161/: Իսկ երկրորդ դարձվածքը՝ *Տա Աստված*, նշանակում է միայն «երանի թե»: Եթե առաջին դարձվածքը երբեմն կարող է նաև կիրառվել «երանի թե» իմաստով (Աստված տա, որ մենք այդ դժոխքից ազատվենք), ապա երկրորդը՝ *Տա Աստված*, երբեք չի կարող կիրառվել «չկա» իմաստով: Իսպաներենի մեր լեզվանյութում նմանատիպերևույթ չի դիտարկվել:

Այսպիսով, սրանք են հիմնականում այն հատկանիշները, որոնցով այս երկու լեզուների շարահյուսական կաղապարները նմանվում կամ տարբերվում են միմյան-ցից: Նույնիսկ շարահյուսական կաղապարների միանման բաղադրիչային կազմի առկայության դեպքում բացարձակ համընկնումներ չեն դիտարկվում: Հիմնական տարբերությունը բառակապակցության բաղադրիչների դիրքն է, որը պայմանավորված է տվյալ լեզվի շարահյուսական կառուցվածքի առանձնահատկություններով:

ԳԼՈՒԽԵՐՐՈՐԴ

«DIOS» (ԱՍՏՎԱԾ) ԵՎ «DIABLO» (ՍԱՏԱՆԱ) ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐՈՎ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԱՌԱՆՁՆԱՅ ԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՍՊԱՆԵՐԵՆՈՒՄ ՀԱՅԵՐԵՆԻ ՉՈՒԳԱԴՐՈՒԹՅԱԲ

3.1. Իմաստային վերափոխման առանձնահատկությունները «dios» (աստված) և «diablo» (սատանա) բաղադրիչներով դարձվածքներում

Ինչպես հայտնի է, դարձվածքի հիմնական հատկանիշը նրա բաղադրիչների իմաստային վերափոխումն է, որը տարիներ շարունակ եղել է տարբեր դարձվածաբանների ուսումնասիրության կենտրոնում: Տարբեր լեզվաբաններ իմաստային գործոնի դերը միշտ էլ կարևորել են դարձվածքի սահմանման գործում՝ դիտարկելով այն որպես *միասնական ամբողջական իմաստ* (ըստ Վ. Վ. Վինոգրադովի), *անվանման ամբողջականություն* (ըստ Օ. Ախմանովայի), *ամբողջական իմաստ* (ըստ Կորպաս Պաստորի և Սուլևուզայի) և այլն: Տեղին է նաև մեջբերել ռուս դարձվածաբան Բ. Ա. Լարինի խոսքերը դարձվածքների իմաստային վերափոխման վերաբերյալ, քանզի դարձվածայնացումը երբեմն նույնիսկ նույնացվում է իմաստային վերափոխման հետ: Ըստ նրա՝ դարձվածաբանության ուսումնասիրության առարկա կարող են լինել միայն այն կայուն կապակցությունները, որոնք ենթարկվել են «իմաստային նորացման» /Парин, 1956: 220/: Սակայն Բ. Ա. Լարինի կիրառած «իմաստային նորացում» եզրը այդպես էլ տարածում չգտավ լեզվաբանական գրականության մեջ, քանի որ այն մեկնաբանվում էր նեղ իմաստով և կիրառվում միայն իդիոմներն ու փոխաբերական բառակապակցությունները քննելիս: Ավելի ուշ այլ լեզվաբանների կողմից այն վերանվանվեց «իմաստային վերափոխում», քանզի համաձայն լայն տարածում գտած տեսակետի, որը նաև հիմնովին պատճառաբանում է տվյալ երևույթը, «իմաստային վերափոխումը ենթադրում է ամեն մի անհամապատասխանություն տվյալ կայուն կապակցության

արտահայտության և բովանդակության պլաների, և համապատասխանաբար տվյալ կապակցության իմաստի և նրա նախատիպի արդի, հնացած կամ տեսականորեն հնարավոր իմաստի միջև» /Назарян, 1987: 43/: Իմաստային վերափոխումը դարձվածայնացման գործընթացն է, որը խթանում է որակապես նոր լեզվական միավորների ստեղծումը:

Ֆրանսերենի հարուստ լեզվանյութի հիման վրա իմաստային վերափոխման խնդիրը մանրամասն ուսումնասիրել է հայ տնի դարձվածաբան Ա. Նազարյանը: Նա առանձնացրել է *իմաստային վերափոխում* և *վերափմաստավորում* հասկացությունները, առաջարկել դրանց հստակ սահմանումները, տարբերակիչ առանձնահատկությունները, քանի որ երբեմն լեզվաբանության մեջ այս երկու հասկացությունները նույնացվում են: Ըստ նրա՝ դարձվածքի իմաստային վերափոխումը դարձվածային միավորի հիմնական տարբերակիչ հատկանիշն է, որը թույլ է տալիս առանձնացնել դարձվածքը ինչպես ազատ, այնպես էլ կայուն ոչ դարձվածային կապակցություններից /Назарян, 1987: 41/: Իսկ դարձվածային վերափմաստավորումը ընկալվում է որպես ամեն մի իմաստային տեղադրությամբ, որը հանգեցնում է դարձվածային միավորների բաղադրիչների կամ նրանց միմասի բուն իմաստների կորստին և նոր իմաստների ձեռքբերմանը, որն առկայանում է միայն տվյալ դարձվածքում /Назарян, 1987: 153/:

Վերափմաստավորումը՝ որպես իմաստային վերափոխման մի տեսակ, առանձնապես կարևորվում է դարձվածքների առաջացման գործընթացում, քանի որ դարձվածքների մեծ մասը լեզվում առաջանում է ազատ կապակցությունների վերափմաստավորման արդյունքում:

Սովորաբար դարձվածքը զանազանում են ինչպես ազատ, այնպես էլ կայուն կապակցություններից: Ազատ կապակցությունները, որոնք առանձին բաղադրիչներից կազմված լեզվական միավորներ են, կայուն կապակցությունների պես կանխեն-թաղրված իմաստ ունեցող լեզվական միավորներ են, քանի որ նրանց բաղադրիչների իմաստից կարելի է կռահել ամբողջ արտահայտության իմաստը, մինչդեռ դարձվածքը, ինչպես և կայուն

կապակցությունը, ունի կայուն կառուցվածք և վերարտադրվում է պատրաստի ձևով, սակայն վերջինից առանձնանում է բաղադրիչների իմաստային վերափոխմամբ: Իսպանացի հայտնի դարձվածաբան Կորասա Պաստորը դարձվածային միավորների շարքին է դասում նաև colocación (ոչ դարձվածային կայուն կապակցություն) հասկացությունը, որը շարահյուսորեն միմյանց հետ կապված երկու բառային միավորներից կազմված այն բառակապակցությունն է, որն ինքնին չի ստեղծում խոսքային ակտ և ոչ էլ ասույթ և, ֆիքսված լինելով նորմայում, ներկայացնում է կապակցելիության սահմանափակումներ /Corpas Pastor, 1996: 66/: Լեզվական համայնքի անդամները տեսականորեն հնարավոր մեծաթիվ բառակապակցությունների շարքում փորձում են ստեղծել կոնկրետ բառակապակցություններ: Սրանք գուտքերականական, տիպիկ, մասնավորեցված, կիրառելի, կայուն և վերարտադրելի կապակցություններ են, որոնք ցույց են տալիս մեզ շրջապատող իրականությանը առավել բնորոշ երևույթներ, հարաբերություններ, առարկաներ և իրեր, օրինակ՝ correr un rumor, estallar una guerra, asumir una responsabilidad, entablar la amistad, fuente fidedigna, relación estrecha և այլն:

Դարձվածային միավորի կայունությունն առաջին հերթին կապված է տվյալ կայուն կապակցության իմաստային վերափոխման հետ, որը տվյալ դարձվածքը բնորոշում է որպես մյուս կապակցություններից որակապես տարբերվող լեզվական յուրահատուկ միավոր: Ինչպես փաստում է Ի. Չերնիշևան, կառուցվածքի և բաղադրիչների բառային կազմի կայունությունը սոսկ իմաստային վերափոխման արդյունք է, որը կատարվում է դարձվածքի կայացման պահին /Чернышева, 1965: 157/:

Դարձվածային միավորները, ինչպես և կայուն կապակցությունները, տարածված լեզվական միավորներ են, որոնք պատրաստի ձևով վերարտադրվում են խոսքում: Սա նշված լեզվական միավորների հիմնական միավորիչ հատկանիշն է, մինչդեռ տարբերակիչ հատկանիշները ակներև են դառնում իմաստային վերափոխման գործընթացում:

Լինելով իմաստային վերափոխման ամենատարածված տեսակը՝ դարձվածք-ների վերափմաստավորումը սերտորեն կապված է պատկերավորության գաղափարի հետ, որը դարձվածային միավորների ստեղծման հիմնական աղբյուրներից մեկն է: Այն մասնավորապես հիմնվում է տվյալ միավորների փոխաբերական կիրառության վրա և իր կարևոր դերն ունի դարձվածքի իմաստի ձևավորման մեջ:

Փոխաբերականացման վրա հիմնված վերափմաստավորումը ընդլայնում կամ մասնավորեցնում է դարձվածային միավորի նախնական իմաստը՝ խթանելով բազմ-իմաստությունը, քանի որ այս երկու լեզվական երևույթները սերտորեն փոխկապակցված են: Շատ լեզվաբաններ պնդում են, որ բազմիմաստությունը բազմակի փոխաբերականացման գործընթացն է: Փոխաբերությունը նաև ոճական հնար է, որը հարստացնում է լեզուն՝ սկսած բանաստեղծական ոճից մինչև ժողովրդախոս-սակցականը /Tristá Pérez y Carneado Moré, 1995: 47/:

Համաձայն Պ. Բեդիրյանի՝ «պատկերավորումը մարդկային մտածողության ամենասովորական և բնական հնարներից է, որի տարբեր միջոցներ ընկած են հարյուրավոր դարձվածքների հիմքում, և եթե դարձվածքները կապակցության մեջ ստացվում են բառերի վերափմաստավորումից, ապա պատկերավորումն ինքը հենց բառերի վերափմաստավորումն է» /Բեդիրյան, 1973: 99/: Ահա թե ինչու դարձվածքի իմաստային էության բացահայտման խնդրում առանձնապես կարևորվում է դարձվածքի պատկերավորության լեզվաբանական մեկնաբանությունը:

Լեզվաբանական գրականության մեջ տարբերակում են վերափմաստավորման երկու տեսակ՝ պատկերավոր և ոչ պատկերավոր: Պատկերավոր վերափ-մաստավորման խմբին պատկանող դարձվածքները, որպես կանոն, ունեն երկու պլան՝ արտահայտության և բովանդակության: Այս դարձվածքներն ունեն պատկերավոր՝ դարձվածային և բառացի իմաստ: Իսկ ոչ պատկերավոր դարձվածքներն այն կայուն կապակցություններն են, որոնք կորցնում են իրենց պատկերավորությունը դարձվածքների առաջացման գործընթացում կամ բաղադրիչների իմաստափոխու-

թյան արդյունքում, ինչպես նաև, երբ նրանց բառային կազմը համալրվում է հնաբանություներով: Վերջիններս այլևս չեն հատկանշվում երկու պլաններնալու առանձնահատկությամբ:

Չարկ է նշել, որ փոխաբերական վերափոխատվորումը լեզվի դարձվածային ֆոնդի հարստացման կարևորագույն աղբյուրն է, որը հիմնվում է երկու առարկաների կամ երևույթների միջև առկա նմանության վրա /Tristá Pérez, 1988: 21/: Այն դարձվածայնացման հիմնական աղբյուրն է: Առհասարակ, փոխաբերությունը իմաստափոխության մի տեսակ է, որի ազդեցությունը նկատելի է հատկաբանական (իդիոմատիկ) դարձվածքների կազմավորման գործընթացում՝ խթանելով դրանց իմաստի ընդլայնումը: Փոխաբերությունը A իմաստի իմաստափոխությունն է C իմաստի մերրորդ B իմաստի միջոցով (tertium comparationis, բառացի՝ երրորդ համեմատելի)՝ նախորդ երկուսի միջև բացահայտված նմանության հիման վրա: Այն կապող օղակ է դարձվածքի պատկերավոր իմաստի և նրան նախատիպի իմաստի միջև:

Ինչպես տեսնում ենք, պատկերավորությունը դարձվածքների իմաստային կառուցվածքի կարևորագույն գործոններից է, դարձվածքի էական տարբերակիչ հատկանիշներից մեկը, որով դարձվածային միավորը տարբերվում է բառից:

Չամաձայն լայն տարածում գտած տեսակետի՝ դարձվածքի բովանդակային պլանում գերակշռում է հարանշանակային բաղադրիչը, որը դարձվածքի վերացարկ-ման առանձնահատկություններից է, և հաճախ հենց ազատ կապակցությունների հարանշանակային իմակներն են հիմք դառնում նոր դարձվածքների ստեղծման համար: Սա այնքան էլ բնորոշ չէ բառին, քանի որ նոր բառերի առաջացման ժամանակ նրա հիմնանշանակային և հարանշանակային իմակները գտնվում են տարբեր հարաբերությունների մեջ /Назарян, 1987: 147/:

Ի տարբերություն բառի՝ պատկերավորությունը բնորոշ է կոնկրետ դարձվածքների ներքին ձևին՝ գոնե սվյալ միավորների առաջացման ժամանակ, քանի որ դարձվածքի վերաբերային հարաբերությունները եռաստիճան են, որի մեջ ներառվում են *առարկա*, *նշյալ* և *պատկերավորություն* հասկացությունները,

մինչ դեռ բառինը երկաստիճան են, որտեղ հանդես են գալիս միայն *առարկա* և *նշյալ* հասկացությունները: Պատկերավորությունը բնորոշ է բառի ներքին ձևին, որը, ելնելով լեզվում իր կատարած գործառույթից, ունի անմիջական ուղղվածություն՝ անվանելու որևէ առարկա կամ հասկացություն՝ այսպիսով իրականացնելով անվանողական գործառույթ: Յուրաքանչյուր դարձվածային միավորի հիմքում ընկած է որևէ կոնկրետ պատկեր, և լեզվում այն գոյություն ունի այնքան ժամանակ, որքան տվյալ պատկերն արդիական է, ոչ հնացած:

Պատկերավորության հարցի շուրջ իր ուրույն տեսակետն է ներկայացրել Վ. Գ. Գակը, որի տեսության համաձայն, պատկերավորության հիմքում ընկած է երկու պատկերների գաղափարը. առաջինը ստեղծում է բառի կամ արտահայտության պատկերավոր՝ փոխաբերական իմաստը, իսկ մյուսը համապատասխանում է նրա բացահայտելու համար /Դաք, 1977: 110/:

Ինչպես նշել ենք, ֆրանսերենի հարուստ լեզվանյութի հիման վրա Ա. Նազարյանն առանձնացրել է դարձվածքների իմաստային վերափոխման յոթ տեսակ.

- I. Վերափոխատավորում
- II. Դարձվածային միավորների բաղադրիչների բառային իմաստի թուլացում
- III. Հնաբանությունների առկայություն
- IV. Չեղչում
- V. Ժողովրդաստուգաբանական աղավաղում
- VI. Իմաստի իրադրային ընդլայնում
- VII. Բառակապակցության իմաստային գերած:

Իսպանագիտական աղբյուրներում դարձվածքների իմաստային վերափոխման տեսակները դեռևս հատուկ քննության առարկա չեն եղել: Մեր ուսումնասիրությունը ցույց է տվել, որ դարձվածքների իմաստային վերափոխման վերոհիշյալ տեսակները հատուկ են նաև իսպանական դարձվածաբանությանը, և այն կարող է հիմք ծառայել իսպաներենի դարձվածքների իմաստային կառուցվածքի առանձնահատկությունները քննելիս:

I. Վերափմաստավորում: «Dios» (աստված) և «diablo» (սատանա) բառադրիչներով դարձված քների քննությանը ցույց է տալիս, որ նշված դարձվածքների իմաստային վերափոխման առավել տարածված տեսակը վերափմաստավորումն է: Սովորաբար տարբերակում են փոխաբերական վերափմաստավորման վեց տեսակ՝ տարբեր գործողությունների նմանությամբ: Երբեմն շատ բարդ է կամ գրեթե անհնար սահմանազատել փոխաբերական վերափմաստավորման տեսակները: Փոխաբերական վերափմաստավորման վրա հիմնված որոշ պատկերավոր գույնգործողություններ կարող են խթան հանդիսանալ մի շարք դարձվածային միավորների ստեղծման համար:

Մեր լեզվանյութի քննությանը հնարավորություն է ընձեռել տարբերակելու փոխաբերական վերափմաստավորման հետևյալ տեսակները.

1. Փոխաբերությունն ըստ գործողության, վարքի նմանության
Comerse a Dios por las patas (բառացի՝ աստծուն ուտել ոտքերից) - լինել որկրամոլ, անհագուրդ, *Dar cada golpe que Dios tiembla* (բառացի՝ ամեն հարված այնպես տալ, որ աստված դողա) - լինել շատ ուժեղ, *Dios da ciento por uno* (բառացի՝ աստված մեկի փոխարեն հարյուրն է տալիս) - շռայլ, առատածեռն լինել, *quebrar el ojo al diablo* (բառացի՝ սատանի աչքը կոտրել / հանել) - վարվել ճիշտ, ընտրել ճիշտ ուղին

2. Փոխաբերությունն ըստ իրադրային նմանության
Como Cristo con los mercaderes/ como Cristo y Satanás (բառացի՝ ինչպես Քրիստոսն առևտրականների հետ / ինչպես Քրիստոսն ու սատանան) - անհամատեղելի, *Como la cruz y el diablo/ demonio* (բառացի՝ ինչպես խաչն ու սատանան) - անհամատեղելի, *Estar una cosa como el diablo* (բառացի՝ որևէ բանն այն չլինել / գտնվել սատանայի վիճակում) - անավոր վիճակում լինել, *Poner a uno como un cristo* (բառացի՝ ինչ-որ մեկին դնել Քրիստոսի տեղը / հասցնել Քրիստոսի վիճակին) - 1. հանդիմանել, նախատել; 2. վարկաբեկել; 3. դաժան ծեծի ենթարկել

3. Փոխաբերությունն ըստ արտաքին ձևի նմանության
Cara de demonio (բառացի՝ սարայելի դեմք) - զայրացած, դժգոհ դեմքով մարդ, *Poner cara de demonios* (բառացի՝ սատանի դեմք դնել / հագնել) - զայրացած հայացք նետել, զայրանալ, *Դիմակավոր սատանա* -

քողարկված չար մարդ, *Ճգնավորի հագուստով սատանա* - կեղծ հոգևորական, ազնիվ ձևացող չարագործ, *Սատանի բուրվառ* - հնց. ծխախոտի գլանակ, սիգար

4. Փոխաբերությունն ըստերևույթների նմանությամբ
Llueve de Dios (բառացի՝ անձրևում է աստուծոց) - հորդառատ անձրև է գալիս, *Azote de Dios* (բառացի՝ աստուծու մտրակ/ հարված) - արհավիրք, *Fuego de Dios* (բառացի՝ աստուծու կրակ) - զայրույթ, *Աստուծու պատիժ* - անխիղճ, չար, *Աստուծու պեժուկ կրակ* - անխիղճ, դաժան

5. Փոխաբերությունն ըստգույնի նմանությամբ
Demonio amarillo (բառացի՝ դեղին սատանա) – փող, *Սև սատանա - ժող.* չար մարդ

6. Փոխաբերությունն ըստբնավորություն/բնույթի նմանությամբ
Alma de Dios (բառացի՝ աստուծու հոգի) - բարի մարդ, *Pobre diablo* (բառացի՝ խեղճ սատանա) - պարզամիտ, ոչ խորամանկ մարդ, *Աստուծու հոգի*, *Աստուծու գառ/գառնուկ/ ոչխար/ գառն Աստուծոց*:

Դարձվածային միավորների պատկերավոր վերափոխաստավորման մյուս տեսակը փոխանվանական վերափոխաստավորումն է: Վերափոխաստավորման այս ենթատեսակը, թեև ի տարբերությունն փոխաբերականի, մեծ տարածում չունի, նույնպես համարվում է արդյունավետ: Այն հիմնվում է երկու առարկաների, հասկացությունների կամ երևույթների միջև գոյություն ունեցող առնչակցության վրա: Առհասարակ փոխանունությունը անվան փոխանցումն է մի նոր առարկայի, ոչ թե նախկին և նոր առարկաների միջև գոյություն ունեցող արտաքին կամ ներքին հատկանիշների նմանությամբ, այլ վերջիններիս միջև առկա առնչակցության, այսինքն՝ առարկաների տարածական և ժամանակային փոխառնչակցության հիման վրա:

Փոխանունությունը լինում է բացարձակ և մասնակի: Բացարձակ փոխանունություն դեպքում տվյալ կապակցությունն ամբողջությամբ վերափոխաստավորվում է, մինչդեռ մասնակի փոխանունության դեպքում դարձվածակազմությունը տեղի է ունենում մեկ՝ հիմնականում անվանական բաղադրիչի փոխանվանական վերափոխաստավորման արդյունքում /Алефиренко, Семеновко, 2009: 161/: Որպես կանոն, գոյականի գործառնությունը

կատարող դարձվածային համըմբռնմանը բնորոշ է մաս-նակի վերափոխմաստավորում, մինչդեռ բայական համըմբռնմանը հատուկ է բացարձակ վերափոխմաստավորում:

Մեր լեզվանյութում դիտարկվում են փոխանվանական վերափոխմաստավորման հետևյալ տեսակները՝

ա) մարմնի մասը ամբողջի փոխարեն

Pelos de diablo /demonio (բառացի՝ սատանայի մազեր) - անփուլթ, թափթփված կին; *Աստճու աջ* - գորություն; *Սատանի կոտոշ* - 1.խորամանկ, ճարպիկ; 2.խաբեբա (մարդ)

Վերոնշյալները համըմբռնման օրինակներ են, որը համարվում է փոխանուն-նության տեսակ:

Փոխանուննությամբ արտահայտվում են նաև այլ հարաբերություններ՝

բ) տվյալ անձի անվանումը (բնութագրումը)՝ ըստ նրակողմից գործածվող գործիքի, որը համարվում է նրա անբակտելի մասը.

Սատանի ճախարակ - չարածճի, խորամանկ; *Սատանի չեքուճ* - շատ ճարպիկ

դ) մարմնի մասի անվանումը նրակատարած գործառնության փոխարեն
Սատանի աչք ունեցող; *Սատանի լեզու ունեցող*; *Սատանի ականջը խուլ*; *Սատանի աչքը քոռ*; *Սատանի աչքը քաղցր լինել մեկի վրա*; *Սատանի կրունկ*:

Իսպաներենում «dios» և «diablo» բաղադրիչներով կազմված դարձվածային միավորների շարքում չի արձանագրվել տվյալ ենթախմբին պատկանող օրինակ:

ե) առարկայի, գործիքի անվանումը իր կատարած գործառնության փոխարեն.

Como la trompeta de diablo (բառացի՝ ինչպես սատանայի շեփորը) – անբարեհունչ; *Como retorta de diablo* (բառացի՝ ինչպես սատանի թորանոթ) – այրող:

Առհասարակ փոխաբերական վերափոխմաստավորումը բնորոշվում է վերագարկման ավելի բարձր աստիճանով, քան փոխանվանականը: Դա հիմնավորվում է այն փաստով, որ չնայած վերափոխմաստավորման այս երկու տեսակների հիմքում էլ ընկած է իմաստային վերափոխման ընդհանուր մի ձև, այնուամենայնիվ

վերջիններս զգալիորեն տարբերվում են իրենց իմաստային կառուցվածքով: Փոխանվանական վերափոխադրման դեպքում դարձվածքի և իր նախադասի իմաստների միջև ավելի սերտ կապ է ստեղծվում, քան փոխաբերական վերափոխադրման ժամանակ: Երբեմն փոխանվանական դարձվածային միավորները կարող են նաև համարվել փոխաբերական կամ հակառակը, երբ առնչակցությունը շփոթում են երկու առարկաների կամ երևույթների միջև առկա նմանություն հետ, կամ նրանց միջև առկա սահմանն այլևս անհնար է տարբերակել:

Փոխաբերական և փոխանվանական վերափոխադրումներն աչքի են ընկնում նաև մեկ այլ ընդհանուր առանձնահատկությամբ՝ գերիմակի և տարբերակիչ իմակի գործառույթով /Назарян, 1987: 158/: Գերիմակը մատնանշում է դարձվածքի հիմնանշանակիչ իմաստը՝ արդեն իսկ վերափոխադրված տարբերակով, մինչդեռ տարբերակիչ իմակը միայն ընդգծում է որևէ հատկանիշ, որով տարբերակվում է տվյալ դարձվածքը: Օրինակ՝ demonio amarillo (բառացի՝ դեղին սատանա, դարձվածային իմաստը՝ փող), որտեղ գերիմակը փողն է, իսկ տարբերակիչ իմակը՝ գույնը (ոսկու գույնը):

Այսպիսով, մերլեգվանյութի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թեև երբեմն շատ բարդ է կամ գրեթե անհնար հստակորեն սահմանազատել փոխաբերական և փոխանվանական վերափոխադրման տեսակները, այնուամենայնիվ հիմնական տարբերակիչ հատկանիշը հետևյալն է. դարձվածային միավորների փոխաբերական վերափոխադրումը հիմնվում է երկու առարկաների կամ երևույթների միջև գոյություն ունեցող նմանության, իսկ փոխանվանական վերափոխադրումը՝ վերջիններիս միջև գոյություն ունեցող առնչակցության վրա:

II. Դարձվածային միավորների բաղադրիչների բառային իմաստի թուլացումը դարձվածքների վերափոխադրման շատ տարածված տեսակներից է, որը երբեմն նույնացվում է դարձվածային վերափոխադրման հետ: Համաձայն Ա. Նազարյանի սահմանման՝ «դարձվածային վերափոխադրումը իմաստային տեղաշարժ է, որի արդյունքում դարձվածային միավորի բաղադրիչները ձեռք

են բերում այնպիսի իմաստ, որը տարբերվում է նրանց սովորական իմաստներից, ինչպես ուղղակի, այնպես էլ փոխաբերական: Այսպիսով, վերաիմաստավորումը հանգեցնում է դարձվածքի բաղադրիչների (կամ բաղադրիչների միմասի) բուն իմաստի կորստին» /Назарян, 1987 :161/: Մինչդեռ դարձվածային միավորների բաղադրիչների բառային իմաստների թուլացման դեպքում դարձվածքի բաղադրիչները ամբողջությամբ չեն կորցնում իրենց սեփական իմաստները: Ի տարբերություն դարձվածային միավորների վերաիմաստավորման՝ տվյալ տեսակի առկայության դեպքում բաղադրիչները ոչ թե ձեռք են բերում նոր իմաստ, այլ ուժգնանում են նրանց հուզարտահայտչական գործառնությամբ:

Դարձվածային միավորների բաղադրիչներում բառային իմաստների թուլացումից (իմաստային տեղաշարժի բացակայության պատճառով) հնարավոր է դառնում տվյալ դարձվածային միավորների իմաստի կանխենթադրումը: Այստիպիսի պատկանող դարձվածային միավորների բաղադրիչների իմաստից կարելի է հստակ կանխորոշել ամբողջ դարձվածքի իմաստը, այսինքն՝ նման դարձվածքներին հատուկ է վերացարկման նվազաստիճան, քան դարձվածային միավորների վերաիմաստավորման դեպքում: Այս պարագայում բաղադրիչները մասամբ են վերաիմաստավորվում, որը նաև խթանում է դարձվածքի՝ երկուսի նկատմամբ առանձնահատկությունը:

Վերաիմաստավորման տվյալ տեսակը հաճախ հանդիպում է համեմատության դարձվածքներում, ինչպես նաև միագագաթներում: Օրինակ՝ Como el diablo (բառացի՝ սատանի պես) - սարսափելի; Como la cruz y el diablo (բառացի՝ ինչպես խաչն ու սատանան) - շուն ու կատվի պես; Աստճո պես; Սատանի նման; De Dios (բառացի՝ աստճոց/ աստճո կողմից) - շատ ուժեղ; De (mil) diablos (բառացի՝ սատանայական) - սարսափելի; Con Dios (աստճո հետ) - Աստված քեզ հետ:

Բացառությամբ ¡Como la cruz y el diablo՝ դարձվածքի, որը ¡Como el diablo՝, «Աստճո պես», «Սատանի նման» օրինակների հետ հանդես է գալիս որպես համեմատության դարձվածք, թվարկված մյուս բոլոր դարձվածային միավորները միագագաթ են՝ կազմված

նախդիր + գոյական կամ հայերենում՝ գոյական + կապ կաղապարներով:

Բաղադրիչների իմաստային թուլացմամբ են բնութագրվում նաև հետևյալ դարձվածքները. Hacer un frío **de** mil diablos (բառացի՝ հազար սատանի ցուրտանել) - անտանելի ցուրտանել; Oler **a** demonios (բառացի՝ սատանայի հոտ գալ) - վատ հոտ գալ / վատ հոտ արձակել, Sonar **a** demonios (բառացի՝ սատանայական հնչել) - շատ անբարեհունչ լինել; Varón **de** Dios (բառացի՝ աստծո որդի) - սուրբ մարդ:

Իսպաներենում, ինչպես նաև ռոմանական այլ լեզուներում, իմաստային վերափոխման այս տեսակին պատկանող դարձվածային միավորներում բաղադրիչների բառային իմաստի թուլացումը առավել հաճախ տեղի է ունենում նախդիրների օգնությամբ: Օրինակ՝ Hacer pacto **con** diablo (բառացի՝ սատանայի հետ դաշինք կնքել) - հոգին սատանին ծախել; Anda **con** Dios (բառացի՝ գնա աստծու հետ) - աստված քեզ հետ (բարեմաղթանք); Creerle **como** a Dios (բառացի՝ վստահել մեկին, ինչպես աստծուն) - անսահման վստահել մեկին; Alzar las manos **a** Dios (բառացի՝ ձեռքերը երկինք բարձրացնել) - աղոթել: Երբեմն կարող են հանդես գալ նաև առանց նախդիրների, օրինակ՝ Amanecer Dios – լույսը բացվել:

Հայերենում նախդրավոր համակարգի փոխարեն կիրառվում է հոլովականը: **De** նախդրի համարժեքներն են սեռական և բացառական հոլովները իրենց համապատասխան հոլովական վերջավորություններով: Օրինակ՝ Աստծո տաճար / տուն - եկեղեցի:

A նախդրի համարժեքն է տրական հոլովը, օրինակ՝ Միայն աստծո**ւն** է հայ տնի-ոչ ոք չգիտի: Ինչպես նշել ենք, հազվագյուտ դեպքերում դարձվածային միավորի վերափոխմամբ կազմված և չվերափոխմամբ մասերը միավորվում են առանց կապերի, օրինակ՝ Agua Dios (բառացի՝ աստծո ջուր) - երկարատև անձրևներ; Աստված խելք տալ - խելոքանալ; Աստված խելքն առնել - խելագարվել:

Այսպիսով, ի տարբերություն իմաստային վերափոխման մյուս տեսակների՝ դարձվածային միավորի բաղադրիչների բառային իմաստի թուլացման դեպքում դարձվածքի բաղադրիչների հանրագումարից, այսինքն՝ բաղադրական կաղապարից, կարելի է

կանխենթադրել ամբողջ դարձվածքի իմաստը, որը հեշտացնում է նրա իմաստի ընկալումը և եզրակիրների կողմից:

III. Դարձվածային միավորների զեղչում: Իմաստային վերափոխման տվյալ տեսակը նույնպես ունի լայն տարածում և համարվում է դարձվածակազմության միջոցներից մեկը: Չեղչումը՝ որպես և եզրական երևույթ, և եզրաբանության ուսումնասիրության առարկա է հանդիսացել դեռևս անտիկ ժամանակներից: Հնում այն հայտնի էր որպես ճարտասանական միջոց, իսկ հետագայում այն գրավեց նաև մի շարք և եզրաբանների ու շարժողությունները՝ և եզրական տարբեր մակարդակներում իր ոճական կիրառության լայն հնարավորություններով:

Քննվող խնդրի վերաբերյալ և եզրաբանական գրականության մեջ շրջանառվում են շատ տեսակետներ: Չեղչումը դարձվածայնության ցուցիչ է, քանի որ հանդես է գալիս որպես իմաստային վերափոխման ձև: Կայուն բառակապակցություններում առանցքային բառային բաղադրիչները պահպանվում են, իսկ զեղչված անդամները խոսողի կողմից կարող են վերականգնվել համատեքստում: Դրա հետ մեկտեղ հարկ է նշել, որ դարձվածքներին հատուկ զեղչումը ի հայտ է գալիս ոչ թե հաղորդակցության կոնկրետ պայմաններում՝ խոսքում, այլ և եզրի մակարդակում:

Համաձայն լայն տարածում գտած մեկ այլ տեսակետի՝ զեղչումը և եզրական խոսքման դրսևորում է, որի նպատակը և եզրի տնտեսումն է: Այն բնորոշվում է նաև որպես արտահայտության պահանջարկի կրճատում, սեղմում՝ չհանգեցնելով բովանդակության պահանջարկի:

Չեղչված անդամով դարձվածային միավորներն առաջանում են կայուն կապակցությունների բառ-բաղադրիչների կրճատմամբ, որի արդյունքում դարձվածքի կառուցվածքը ավելի պարզ է դառնում /Հазарян, 1987: 163/: Տեղի է ունենում մտքի խոսքում, որում արտացոլվում է դարձվածային միավորների վերափոխման տվյալ տեսակը՝ զեղչումը:

Չեղչված կաղապարները երբեմն նույնացվում են թերի նախադասությունների հետ, սակայն դա թյուր կարծիք է: Թերի

Նախադասու լ թ յ ու ն ը խոսաց ված արտահայտու լ թ յ ու ն է, որի լ ի արժեք տարբերակը հնարավոր չէ վերականգնել, իսկ զեղջված նախադասու լ թ յ ու ն ները կամ կաղապարները, իրենց բնույթով լ ի նել ով ն ու յ ն պես խոսաց ված, հիմնականում բնորոշվում են ամբողջական հարաբերակցի առկայ ու լ թ յ ամբ:

Չնայած այն հանգամանքին, որ դարձվածային միավորների զեղջ ու մը հնարավոր է մեկնաբանել, այնուամենայնիվ գործնականում անհնար է ճշգրտորեն կանխորոշել տվյալ դարձվածքի իմաստը, որը ենթարկվել է դարձվածային միավորի իմաստային վերափոխման այս տեսակին:

Շարահյուսական մակարդակում, այն է՝ նախադասու լ թ յ ան դեպքում զեղջման հիմնական չափորոշիչը կրճատ կաղապարի լ ի արժեք հարաբերակցի գոյ ու լ թ յ ու ն ն է, և տվյալ կաղապարը հեշտորեն կարելի է վերականգնել ըստ վերջինիս նախորդող կամ հաջորդող խոսքի կամ տվյալ իրադրու լ թ յ ան, սակայն դարձվածքը՝ որպես կայ ու ն վերափոխատվորված կապակց ու լ թ յ ու ն, չի ենթարկում կանխենթարկում, վերջինիս կաղապարը միշտ չէ, որ կարելի է հեշտորեն վերականգնել, երբեմն դան ու յ ն իսկ անհնար է:

Անհրաժեշտ է նշել, որ դարձվածային միավորների զեղջ ու մը հիմնականում տեղի է ու ն են ու մ լ եզվի տարածամանակյա (դիախորոնիկ) ալ ան ու մ:

Իմաստային վերափոխման տվյալ տեսակը երկու լ եզ ու ն եր ու մ ու ս ու մ ն աս ի-ր ել ի ս բացահայտվել են միշտ ք ն մ ան ու լ թ յ ու ն ն եր և տարբեր ու լ թ յ ու ն ն եր: Ի ս պ ան ե-ր ե ն ի դարձվածքները հատկապես աչքի են ընկնում տարբեր խնդիրների և բայական բաղադրիչի զեղջմամբ: Օրինակ՝ **A la** (lo) de Dios (**a la buena** de Dios) - չմտածված, բախտի քմահաճ ու յ ք ի ն թողած; **Dejarlo** a Dios (dejar **algo** a Dios) - աստ ու վրահ ու յ ս դ ն ել; **Que lo** tenga Dios de su mano (tener Dios **a uno** de su mano) - աստված պահապան:

Լրացում դերան ու ն ն եր ով դարձվածային միավորները՝ որպես լ եզվական երև ու յ թ, բնորոշ են ոչ միայն իսպաներենին, այլ նաև ռոմանական այլ լ եզ ու ն եր ի ն: Յարկ է նշել, որ իսպաներենում կիրառվում են մասնավորապես իգական սեռի *la/las*

դերանունները, որոնք երրորդ դեմքի եզակի և հոգնակի թվի ella/ellas անձնական դերանունների հայցական հոլովի ձևերն են և իրականում որևէ գոյականի հետ չեն հարաբերակցվում: Որոշ լեզվաբաններ պնդում են, որ տեղի է ունեցել զեղչում (տվյալ դեպքում զեղչված է իգական սեռի գոյականը), իսկ որոշ դեպքերում էլ սահամարում են կեղծ զեղչում, որը շատ անգամ անհնար է վերականգնել: Վերոնշյալ առաջին՝ A **la** de Dios օրինակում **la** դերանունը հանդես է գալիս ուղիղ խնդրի դերում: Շատ հազվադեպ դարձվածային միավորներում ուղիղ խնդրի դերում կարող է հանդես գալ նաև **lo** դերանունը: Սակայն վերջինս իսպաներենում այնքան էլ կիրառելի չէ, քանի որ **lo** և **la** լրացում դերանուններով դարձվածային տարբերակ-ներում, որոնք ունեն միևնույն բառային կազմը, հիմնականում նախապատվությունը տրվում է **la/las** դերանուններին. օրինակ՝ A **la** (lo) de Dios - չմտածված, բախտի քմահաճույքին թողած: Տվյալ երևույթի շուրջ շրջանառվում է մեկ այլ տեսակետ, համաձայն որի, իտալերենում և իսպաներենում հաճախ չեզոք սեռի փոխարեն հայտնի արտահայտություններում օգտագործվում է իգական սեռի **la** դերանունը «causa» (պատճառ) իմաստով» /Курчаткина, Суррун, 2009: 68/:

Ինչպես արդեն նշել ենք, երբեմն գործնականում անհնար է վերականգնել զեղչված անդամը, որի փոխարեն հանդես է գալիս լրացում դերանունը: Օրինակ՝ Traer **las** del demonio (սատանի պես խորամանկ լինել); A **la** de Dios que es Cristo/ A **la** de Dios que es grande (երդման բանաձևում), Armar **la** de Dios es Cristo (մեծ աղմուկ բարձրացնել): Երբեմն տվյալ դերանունները կայուն կապակցությամբ ավելացնելիս վեջինիս հաղորդում են նոր իմաստ, սակայն մեր ուսումնասիրություն-ներում նման օրինակ չի բացահայտվել:

Պակաս կիրառելի չեն նաև դարձվածային այն միավորները, որտեղ զեղչված է բայական բաղադրիչը: Օրինակ՝ De Dios el medio (de Dios **venga** el (re)medio) - միայն հրաշքը կփրկի; Después de Dios, la olla (depués de Dios **que sea** la olla) - ինձնից հետո անգամ ջրիեղեղ; Al diablo/ a todos los diablos (**vete/manda/anda** al diablo/ a todos los diablos) - գրողի ծոցը կորչի/կորչեն/ուղարկի՛ր: Վերջիններս իրականում ավելի

ամբողջական բառային կազմ ունեցող դարձվածքների կրճատ տարբերակներն են:

Իսպաներենում հանդիպում են նաև անվանական բաղադրիչի զեղչման դեպքեր: Օրինակ՝ *Armar una de todos los demonios* (իրարանցում, ծեծկռտուք սարքել, ստեղծել): Տվյալ օրինակում զեղչված է *escaramuza* (բախում, վեճ) գոյական անունը:

Հայերենի դարձվածքներին հիմնականում բնորոշ է բայական բաղադրիչի զեղչումը: Օրինակ՝ Իմը՝ դու, քոնն՝ Աստված (իմը դու **ես**, քոնն աստված **է**) - խնդիրք ներկայացնելու արտահայտություն; Հույս Աստված (**իմ** հույսն աստված **է**) - Աստծո կամոք; Աստված արդար (աստված արդար **է**) - արդարությունը աստված կգնահատի; Սատանի աչքը քոռ; Սատանի ականջը խուլ; Աստված քեզ հետ:

Հայերենում հանդիպում են նաև անվանական բաղադրիչի զեղչման դեպքեր: Օրինակ՝ Աստված էն կանաչ մեռունը (երդում); Էն Աստվածը (ճիշտոր, հաստատ); Աստված երկինք (երդման բանաձևում) և այլն: Երեք դեպքում էլ զեղչված է «վկա» անվանական բաղադրիչը:

Այսպիսով, երկու լեզուների դարձվածային ֆոնդն ուսումնասիրելով՝ կարելի է եզրակացնել, որ զեղչումը՝ որպես լեզվական երևույթ, առկա է երկու լեզուներում էլ:

Հայերենի լեզվանյութում, ի տարբերություն իսպաներենի, չի բացահայտվել խնդրի զեղչմամբ (կամ փոխարինմամբ) դարձվածք, որն առավել բնորոշ է ռոմանական լեզուներին: Սակայն անհրաժեշտ է նշել, որ ինչպես իսպաներենում, այնպես էլ հայերենում, դարձվածային միավորների իմաստային վերափոխման տվյալ տեսակը շատ քիչ է հանդիպում, քանի որ դարձվածային միավորները, լինելով կայուն կապակցություններ, մեծամասամբ փոփոխության չեն ենթարկվում:

IV. Ժողովրդաստուգաբանական աղավաղումը իմաստային վերափոխման ամենահազվադեպ հանդիպող և ամենաքիչ ուսումնասիրված տեսակներից է: Թերևս, սա է պատճառը, որ այն գրեթե չի դիտարկվում մեր լեզվանյութում: Ըստ լայն տարածում գտած տեսակետի՝ ժողովրդաստուգաբանական աղավաղումը կապակցության, այն է՝ դարձվածային միավորի բաղադրիչներից

մեկի փոխարինումն է որևէ համանունով կամ հնչյունային կառուցվածքով նրան մոտ բառով՝ հարանունով, օրինակ՝ Por Dios և Par Dios (երդում): Տվյալ օրինակում կարելի է դիտարկել հարանվան դեպք, քանի որ տվյալ բառերը մոտ են իրար հնչյունային կառուցվածքով:

Սակայն ուսումնասիրությանն են տալիս, որ ոչ միշտ է, որ ժողովրդա-ստուգաբանական աղավաղումը կատարվում է բաղադրիչներից մեկը փոխարինելով որևէ համանունով կամ հարանունով. կարևոր դեր են խաղում նաև իմաստային գործոնները: Ըստ որոշ լեզվաբանների՝ ժողովուրդը, ըստ իր հայեցողության, ար-տահայտությանն են հնացած և անհասկանալի բառերը փոխարինում է նորով՝ դրանք ավելի հասկանալի դարձնելու նպատակով:

Ժողովրդաստուգաբանական աղավաղումը հանգեցնում է դարձվածքի լիարժեք ապապատճառաբանման, որը վերջինիս բաղադրիչների միջև իմաստային-տրամաբանական կապի խախտման արդյունք է: Բաղադրիչների փոխարինումը բնականաբար ազդում է տվյալ դարձվածքի մեկնաբանման վրա՝ դարձնելով պատկերն ավելի բարդ ու դժվար մեկնաբանելի:

V. Հնաբանություններ: Դարձվածային միավորների վերաիմաստավորման մյուս տեսակը հնաբանություններն են: Ի տարբերություն այլ կառուցվածքաիմաստային խմբերի՝ հնաբանություններով դարձվածային միավորներն աչքի են ընկնում բաղադրիչների կապակցման (ծուլման) ամենաբարձր աստիճանով, և նրանց բնորոշ չէ տարբերակայնությունը: Այս խմբին պատկանող դարձվածային միավորներում բաղադրիչները ենթարկվում են մասնակի կամ ամբողջական/րիվ վերաիմաստավորման, և քանի որ կազմված են հնացած, արդեն իսկ գործածությունից դուրս եկած բառերից կամ բառակապակցություններից, բաղադրիչների իմաստից հաճախ գրեթե անհնար է կռահել ամբողջ դարձվածային միավորի իմաստը:

Մեր լեզվանյութում առկա են հնաբանությունների հետևյալ տեսակները՝

Ա. *Շարահյոսական հնաքանություններ.* այս հնաքանությունները ժամանակակից իսպաներենում և հայերենում հանդիպում են այն դարձվածային միավորներում, որոնք ունեն քերականորեն հնացած կաղապար և բնորոշվում են հետևյալ առանձնահատկություններով՝

ա) հոդի բացակայությամբ.

Օրինակ՝ *Estar ojo al Cristo con uno* (զգոն է ինքն); Աստված էն կանաչ մեռն (երդման բանաձևում)

բ) *que* շաղկապի բացակայությամբ.

Օրինակ՝ *Digan que de Dios dijeron* (թագավորի հետևից անգամ խոսում են); *Dios mantenga* (աստված պահապան); *Dios me haga bien con esto* (այսքանն էլ ինձ բավարար է); *Dios te ayude* (աստված քեզ օգնական); *El diablo sea sordo* (սատանի ականջը խուլ է)

գ) շրջուն շարահյուսությամբ.

Օրինակ՝ *Más dijeron de nuestro Señor Jesucristo* (միևնույն է, տարբերություներ չկա); *Alabado sea Dios* (փառք քեզ աստված); *Bendito sea Dios* (օրհնանք); Երկինքը Աստված կաքստե՝ չեմ հավատար (ստախոս է):

Բ. *Բառային հնաքանություններ.* հանդիպում են այն դարձվածային միավորներում, որոնք կազմված են ժամանակակից իսպաներենի կամ հայերենի արդի քերականական կաղապարներով, բայց իրենց կազմում ունեն հնացած բառեր, որոնք տվյալ դարձվածքի կազմից դուրս կիրառելի չեն:

Օրինակ՝ *De cras en cras, vase el triste a Satanás* (ասվում է գայթակղության պատճառով կործանման մատնվող մարդկանց մասին); *De Dios en ayuso* (աստված վկա):

Գ. *Իմաստային հնաքանություններ.* հանդիպում են այն դարձվածային միավորներում, որոնք ունեն ժամանակակից իսպաներենի կամ հայերենի արդի քերականական կաղապար, բայց իրենց բառային կազմում ունեն բառեր՝ հնացած (գործածությունից դուրս եկած) իմաստներով: Տարբերակում ենք իմաստային հնաքանության երկու տեսակ՝ բառաշարահյուսական և իմաստաշարահյուսական:

Բառաշարահյուսական հնաքանությունների խմբին պատկանող դարձվածքները իրենց կազմում ունեն հնացած բառեր,

ինչպես նաև գործածությունից դուրս եկած շարահյուսական կաղապարներ: Օրինակ՝ Տերը/ Աստծ մի արասցե (աստված չանի); Տիարն ընդ առաջ (աստված առաջ); Տեր ողորմյա:

Իմաստաշարահյուսական հնաքանություններ. այս խմբին պատկանող դարձ-վածային միավորները միաժամանակ ունենև՝ իմաստային հնաքանություններ, և՛ շարահյուսական: Օրինակ՝ plega (կամ plegue, pluguiese) a Dios դարձվածքը (հին իսպաներենից), որը կարելի է գտնել Դոն Կիխոտում և Ոսկեդարի այլ գրական գործերում «agrade a Dios, plazca a Dios» իմաստով (plega a Dios, Sancho, que así sea porque del dicho al hecho hay gran trecho): Plegar բայի նշված իմաստը (հաճելի լինել) այսօր այլևս գործածական չէ:

Չնայած գործնականում հնաքանությունները դարձվածային միավորներում այնքան էլ հաճախ չեն հանդիպում, այնուամենայնիվ վերջիններս հարստացնում են խոսքը՝ հաղորդելով նրան նոր շունչ, երբեմն էլ նոր իմաստային երանգավորում:

VI. Կայուն կապակցությունների իմաստի իրադրային ընդլայնում:

Դարձվածային վերափոխատվորման տվյալ տեսակը բնորոշ է հաղորդակցական դարձվածքների մեջ մտնող ասացվածքներին, որոնք, ձեռք բերելով ընդհանուր իմաստ, վերաբերում են ոչ թե կոնկրետ իրավիճակի կամ դեպքի, այլ միանման իրադրությունների միամբողջ դասի: Օրինակ՝

1. Hay muchos diablos que se parecen unos a otros (բառացի՝ շատ սատանաներ իրար նման են) - ձկնորսը ձկնորսին հեռվից է ճանաչում:
2. Dar a Dios lo que es de Dios y dar a César lo que es de César - (բառացի՝ աստծունը տալ աստծուն, կայսրինը՝ կայսեր) - ամեն մեկին իրենը (իր հասանելին) տալ:

Առաջին օրինակում (Hay muchos diablos que se parecen unos a otros) «diablo» (սատանա) բաղադրիչը ոչ թե բնութագրում է կոնկրետ սատանային, այլ միանման մարդկանց: Նույնը տեղի է ունենում նաև աստվածաշնչյան առածային հաղորդակցական դարձվածային միավորում (Կայսրինը՝ կայսրին, Աստծունը՝ Աստծուն) /Ավետարան ըստ Մաթևոսի 22: 15-22/, որտեղ «աստված» և «կայսր»

բաղադրիչները մարմնավորում են հասարակ մարդու հավաքական կերպարը:

VI. Իմաստային գերաճ: Դարձվածային միավորների իմաստային վերափոխման տվյալ տեսակը գործնականում ունի բավականին լայն տարածում: Տվյալ դեպքում դարձվածքի իմաստը ոչ թե փոխարինում է տվյալ միավորի ազատ շարահյուսական հարաբերակցի իմաստին, այլ հիմնվում է նրա վրա, որի արդյունքում կայուն կապակցության նախնական իմաստը ներառվում է դարձվածքի իմաստի մեջ՝ դառնալով վերջինիս բաղկացուցիչ մասը: Ձեռք բերված նոր իմաստը, այսինքն՝ նոր իմակը, ավելի է բարդացնում վերջինիս իմաստային կառուցվածքը և տվյալ ազատ կապակցությանը հաղորդում է դարձվածային բնույթ, այսինքն՝ այլաբերական իմաստ: Օրինակ՝ Աստծու ճամփաճանապարհ (աստվածապաշտություն) դարձվածքը ժամանակի ընթացքում ձեռք է բերել նոր՝ այլաբերական իմաստներ՝ արդարություն, բարություն, որոնք հիմնվում էին առաջնային, նախնական իմաստի վրա:

Իմաստային գերաճի մեկ այլ տեսակ է ազատ կապակցության կողմից խորհրդանշանային իմաստի ձեռքբերումը: Տվյալ դեպքում սովորաբար ազատ կապակցության կազմում առկա է սոմատիկ (կազմաբանական) բաղադրիչ՝ արտահայտելով ինչ-որ ժեստ կամ դիմադարձություն, ավելի հազվադեպ վերջիններս արտահայտում են ծիսակարգային կամ այլ երևույթներ՝ հանդես գալով որպես կոնկրետ հասկացությունների խորհրդանշաններ: Տվյալ աշխատանքում վերջիններս արտահայտում են կրոնական հավատամք (աստված և սատանա հասկացությունների հետ կապված), աստծո պաշտամունքը և այլն: Օրինակ՝ *Alzar las manos a Dios* (բարացի՝ ձեռքերը մեկնել (վեր) առ աստված); Աստծո աջ: Առաջին ազատ կապակցության նախնական իմաստն աղոթելն է, իսկ այլաբերականը՝ աստծուն ինչ-որ բան (գթասրտություն, ներողամտություն) խնդրելը: Իսկ երկրորդ օրինակի (աստծո աջ) նախնական իմաստը աստծո աջ ձեռքն է, իսկ այլաբերականը խորհրդանշում է զորություն:

Վերափմաստավորման տվյալ տեսակի արդյունքում առաջացած դարձվածքը առկայանում է միայն մեկ՝ դարձվածային իմաստով, որն իր մեջ ներառում է նաև տվյալ դարձվածքի ազատ շարահյուսական հարաբերակցի իմաստը /Назарян, 1987: 168/: Սակայն հարկ է տարբերակել դարձվածային միավորների իմաստային գերաճը փոխանվանական վերափմաստավորումից, քանի որ երկու դեպքում էլ պահպանվում է դրանց նախատիպի հիմնանշանակիչ իմակը: Ինչպես նշում է Ա. Նազարյանը, փոխանվանական դարձվածքի դեպքում տեղի է ունենում նախնական իմաստի փոխադրում-փոխարինում (ինչ-որ մի բան մյուսի փոխարեն), իսկ իմաստային գերաճի դեպքում՝ նախնական իմաստի համալրում (ինչ-որ մի բան և մեկ այլ բան) /Назарян, 1987: 169/:

Այսպիսով, իմաստային վերափոխման վերոնշյալ տեսակները, բացառությամբ ժողովրդաստուգաբանական աղավաղման, հատուկ են նաև իսպաներենի և հայերենի «dios» (աստված) և «diablo» (սատանա) բաղադրիչներով դարձվածքներին և թույլ են տալիս բացահայտել լեզվում դարձվածակազմության մեթոդներն ու եղանակները, քանի որ դարձվածային միավորների մեծամասնությունն առաջանում է ազատ կապակցությունների վերափմաստավորման արդյունքում:

Իսպաներենում իմաստային վերափոխման տեսակների շարքում հատկապես առանձնանում են վերափմաստավորումը՝ իր փոխաբերական և փոխանվանական տարատեսակներով, դարձվածային միավորների բաղադրիչների բառային իմաստի թուլացումը (հաճախ համեմատություն-դարձվածքներում և միագագաթներում) և զեղչումը (որի դեպքում զեղչվում են հատկապես դարձվածքի անվանական և բայական բաղադրիչները): Նույն երևույթը կարող է դիտարկվել նաև հայերենում: Իսպաներենում երբեմն խնդիրը փոխարինվում է լրացում դերանունով:

Հարկ է նաև նշել, որ միևնույն դարձվածային միավորը կարող է առաջանալ միաժամանակ իմաստային վերափոխման մի քանի տեսակի (սովորաբար երկու) արդյունքում: Օրինակ՝ իսպաներենում «llueve de Dios» դարձվածքը հանդես է գալիս միաժամանակ ինչպես դարձվածային միավորների բաղադրիչների բառային իմաստի

թուլացման տեսակ, այնպես էլ փոխաբերության տեսակ՝ ըստ երևույթների նմանության:

3.2 «Dios» (աստված) և «diablo» (սատանա) բաղադրիչ ներով դարձվածակազմական կաղապարները

Լեզվաբանական գրականության մեջ դարձվածքների կաղապարման խնդիրն առ այսօր չի դարձել խորը ուսումնասիրության առարկա, և այդ խնդրի շուրջ դեռևս գոյություն ունեն իրարամերժ տեսակետներ: Տարիներ շարունակ լեզվաբանության մեջ շրջանառվել է այն թյուր կարծիքը, որ դարձվածային կաղապարները կանխենթադրված իմաստ ունեցող իմաստային կաղապարներ են: Սակայն, ի հակադրություն տվյալ վարկածի, հայտնի դարձվածաբաններ Ա. Նազարյանը և Ն. Ամոսովան փաստում են, որ դարձվածքները չեն ստեղծվում կոնկրետ կաղապարով, որը կարող է արտացոլել տվյալ դարձվածային միավորի բառային-նյութական կազմն ու կոնկրետ իմաստը, այլ առաջանում են կամայականորեն, ձեռք բերում լայն կիրառում՝ հետագայում արձանագրվելով համապատասխան բառարաններում որպես դարձվածային միավորներ /Назарян, 1987: 44-45/: Ի տարբերություն բառի, որն ունի անվանողական բնույթ և կոչված է անվանելու որևէ կոնկրետ երևույթ, հասկացություն կամ առարկա, դարձվածքը հիմնականում ունի պատկերավոր-հուզարտահայտչական բնույթ և արտահայտում է անհատի վերաբերմունքը տվյալ երևույթի նկատմամբ: Դարձվածքները քիչ դեպքերում են ունենում բառային հոմանիշներ և հիմնականում մեկնաբանվում են բառակապակցությամբ կամ նախադասությամբ: Ի վերջո, դարձվածքները չեն ստեղծվում խոսքում, այլ վերարտադրվում են որպես լեզվի պատրաստի միավորներ:

Դարձվածքների իմաստային կաղապարման խնդրի լուծումը իրականում կախված է նրանից, թե ինչպես է ընկալվում տվյալ դարձվածային միավորը և ինչպե՞ս անում է այն ուսումնասիրվում: Ինչպես դիտարկում է Ա. Նազարյանը, դարձվածային կաղապարներն

անհրաժեշտ է ուսումնասիրել բացառապես նկարագրական պլանում և ոչ թե սերող մեթոդական եղանակով /Назарян, 1987: 49-53/: Ահա թե ինչու գիտական աշխատություններում նմանատիպ հետազոտություններ կատարելիս առաջնային է բովանդակային պլանի ուսումնասիրությունը, որից հետո միայն անցում է կատարվում արտահայտության պլանին¹:

Հարկ է նշել, որ երկու և ավելի լեզուների տիպաբանական-համեմատական վերլուծության ժամանակ կարևոր նախապայման է համարվում տվյալ դարձվածային միավորների ներքին ձևի ուսումնասիրությունը, որը երբեմն նաև կարող է փոխառված լինել մեկ այլ լեզվից: Այդպիսի դարձվածքները չեն կարող լինել իմաստային կաղապարման ուսումնասիրության առարկա, քանի որ վերջիններիս ներքին ձևը չի ձևավորվում ինքնուրույնաբար, այլ պատճենվում է՝ մեխանիկորեն կրկնելով միայլ լեզվի դարձվածքի ներքին ձևը: Տվյալ դեպքում խոսքը այն դարձվածքի մասին է, որը սկզբում առաջացել է մի լեզվում, այնուհետև պատճենվել մեկ այլ կամ մի քանի օտար՝ ցեղակից կամ ոչ ցեղակից լեզուների կողմից:

Անհրաժեշտ է նաև նշել, որ իմաստային կաղապարման կարող են ենթարկվել բացառապես պատկերավոր դարձվածային միավորները՝ շնորհիվ իրենց ներքին ձևի արտահայտչականության:

Իմաստային կաղապարման խնդիրը քննելիս հարկ է նաև նախապես ծանոթ լինել լեզվաբանական ժամանակակից իմաստաբանական որոշ ուսմունքներին, ինչպես, օրինակ՝ սերող իմաստաբանությանը (Ն. Խոմսկի) և բաղադրական իմաստաբանությանը (կառուցվածքային իմաստաբանության բաղադրական վերլուծության մեթոդին)²:

Դարձվածային միավորների կաղապարման խնդիրն ուսումնասիրելիս անհրաժեշտ է նաև անդրադարձնալ լեզվի համակարգայնության խնդրին, որը սերտորեն կապված է «դարձվածային միավոր» և «դարձվածային կաղապար» հասկացությունների հետ: Դեռևս անցյալ դարի սկզբին Ֆ. դը Սոսյուրը նշում էր, որ լեզուն՝ որպես համակարգ, ներառում է տարբեր միկրոհամակարգեր, որոնցից մեկն էլ հենց լեզվի

դարձվածային համակարգն է կամ դարձվածապաշարը, իսկ դարձվածային կաղապարի առկայությունը՝ որպես դարձվածային անփոփոխակի, որն ինտեգրվում է մի կայուն կապակցության կազմի մեջ և ձեռք բերում ընդհանուր իմաստ, այս դեպքում դիտվում է որպես վերոհիշյալ համակարգայնության ակնառու օրինակ:

Ըստ Ա. Նազարյանի՝ դարձվածքների համակարգայնության ցուցիչներն են դարձվածային միավորների տարբերակայնությունը, հոմանիշությունն ու հականիշությունը /Назарян, 1987: 28/: Դարձվածային միավորների փոփոխակների փոխաբերությունը նույնպես համակարգված բնույթ ունի, քանի որ արտահայտում է իմաստային փոխկապակցվածություն և փոխներթափանցում տվյալ միավորների անդամների միջև /Кунин, 1970: 27/:

Դարձվածային միավորների կաղապարումը գիտական ուսումնասիրության մի բնագավառ է, որը դեռևս բավարարչափոփոխի ուսումնասիրվել: Այստեղ վիճահարույց հարցերի շարքում կարելի է առանձնացնել նոր դարձվածքների առաջացման խնդիրը, պրտենցիալ (ներունակային) դարձվածային միավորների ի հայտ գալը (նրանց վերածվելը բուն դարձվածքների), դարձվածային կաղապարների զարգացման հիմնական միտումները, մանրակաղապարները և այլն:

Ամեն մի լեզվի դարձվածային ֆունդիսամիկ համակարգ է, որը գտնվում է մշտական շարժի և փոփոխության մեջ: Տվյալ համակարգը իսպաներենում և հայերենում ուսումնասիրելու համար մենք դիմել ենք հետևյալ լեզվական մեթոդներին՝

ա) ներքին համադրական մեթոդ,

բ) դարձվածային միավորների բաղադրական վերլուծության մեթոդ:

Դարձվածքների իմաստային-բաղադրական վերլուծությունն կատարելիս անհրաժեշտ է նկատի ունենալ հետևյալ խնդիրները.

1. որոշել բաղադրիչների դերը դարձվածային իմաստի ստեղծման մեջ (մեր ուսումնասիրության մեջ առանցքային են «dios» (*աստված*) և «diablo» (*սատանա*) բաղադրիչները),

- II. կատարել իմաստային դասակարգում,
- III. բացահայտել և վերլուծել գոյություն ունեցող հիմնական դարձվածային կաղապարները,
- IV. որոշել դարձվածային կաղապարների դերը դարձվածային միավորների իմաստի կազմավորման խնդրում,
- V. ցույց տալ դարձվածային միավորների համակարգայնության հնարավորությունն ու արդյունավետությունը խմբավորման եղանակով՝ ըստ դարձվածային կաղապարների:

Իմաստային-բաղադրական վերլուծությունը տվյալ ուսումնասիրության մեջ մեզ թույլ է տալիս բացահայտել «dios» (աստված) և «diablo» (սատանա) բաղադրիչներով դարձվածային միավորների իմաստային առանձնահատկությունները, կատարել վերջիններիս իմաստային դասակարգումը և ուսումնասիրել տվյալ միավորների ամենաարդյունավետ դարձվածային կաղապարները: Դարձվածային կաղապարը թույլ է տալիս ոչ միայն պարզել տվյալ դարձվածային միավորի տիպարանական առանձնահատկությունները, այլ նաև ուսումնասիրել վերջինիս իմաստային կառուցվածքը՝ ելնելով նրա միավորիչ (ինտեգրալ) և տարբերակիչ հատկանիշներից: Իմաստային կաղապարում, ըստ Ա. Դ. Ռայխտեյնի, բաղադրական, իրադրային և դարձվածային անփոփոխականների միջև տիպիկ հարաբերակցությունների ստեղծումն է /Райхштейн, 1980: 61-66/: Բաղադրական անփոփոխակը, ըստ Ռայխտեյնի, միշտ քբ բառախմբերի բաղադրական իմաստների ընդհանրացումն է: Իրադրային անփոփոխակը միշտ քբ բառախմբերի իրադրային բովանդակության ընդհանրացումն է: Իսկ դարձվածաիմաստային անփոփոխակը միշտ քբ դարձվածային միավորների իմաստների ընդհանրացումն է:

Մեր ուսումնասիրության մեջ իմաստային կաղապարման համարելակետ է ծառայել է Ա. Ռայխտեյնի առաջարկած մեթոդը, ըստ որի, առաջին հերթին պետք է առանձնացնել իմաստային-թեմատիկ միջանի խումբ: Ստորև բերված աղյուսակում քննվում են իմաստային երկու թեմատիկ խումբ, որոնք, ինչպես

իսպաներենում, այնպես էլ հայերենում իրենց թվաքանակով առանձնանում են «dios» (աստված) և «diablo» (սատանա) բաղադրիչներով կազմված դարձվածային միավորների շարքում:

№	Դարձվածաիմաստային խումբ	Դարձվածքների թվաքանակը իսպաներենում	Դարձվածքների թվաքանակը հայերենում
1.	Խորամանկությունն diablo (սատանա)	8	47
2.	Բարեմաղթությունն dios (աստված)	41	53

Ստորև քննենք վերոհիշյալ աղյուսակի առաջին դարձվածաիմաստային թեմա-տիկ խմբի իմաստային կադասարումն ըստ Ռայխշտեյնի մեթոդի «diablo» (սատանա) բառիմաստային դաշտում.

**Խորամանկությունն
Բաղադրական անվոփոխակ**

1. *Սատանայի վրաներգործությունն/ազդեցությունն ունենալ*
Engañar uno al diablo, Սատանա խաբել, Սատանա պայտել, Սատանա նալել, Սատանախաղացնել, Սատանային թարսնալել
2. *Սատանի մարմնի մի մասը լինել*
Սատանի առջևի ճիվը լինել, Սատանի ետևի կրունկը, Սատանի ետևի ճիվը, Սատանի ետևի ոտը, Սատանի պոչ, Սատանի կոտոշ, Սատանի խելք
3. *Սատանային հարազատմտերիմ լինել*
Սատանի կաթծծել, Սատանի ծիծուտել
4. *Սատանայի հետևորդը լինել/սատանի գործն անել*
Tener uno el diablo en (dentro del) cuerpo, Սատանի պիպել, Սատանի ճուտ, Սատանի ձագ, Սատանի լակոտ, Սատանի տակից քաշած, Սատանայի ծնունդ, Սատանի վիլականոդ
5. *Սատանայից սովորած միջոցներին դիմել*

Ser capaz de contarles los pelos al diablo, Estudiar con el diablo, Idear con el diablo, Սատանայ ու թյ ու ն բանեցնել , Սատանա կտրել

6. Սատանայ ին ինչ -որ հագու ստկամ կոշիկ տրամադրել

Սատանայ ին տրեխ հագցնել , Սատանայ ին շ ապիկ կարել

7. Սատանայ ից շ ու տ ծ ն վ ել

Սատանայ ից յ ոթ օր առաջ ծ ն վ ել , Սատանայ ից առաջ աշխարհ գալ , Սատանայ ից առաջ ծ ն վ ել , Սատանայ ի հե տ ծ ն ու ն դ ն ս տ ել

8. Սատանայ ի գործիք լ ի ն ել

Սատանայ ի ճ ախարակ , Սատանայ ի սրոց

9. Սատանի հե տ ս ե դ ա ն ն ս տ ել / Սատանայ ի հե տ շ ա տ մ տ եր ի մ լ ի ն ել

Hablar con el diablo, Inventar con el diablo, Idear con el diablo, Սատանի հե տ ս ոխ ու սխտր ու տ ել , Սատանայ ից սխտր ի հո տ առ ն ել

10. Սատանայ ին կամ իր հարազատներին խորամանկ ու թյ ամբ տեղահան անել

Սատանայ ին բնից հանել , Սատանի ծոցի ճ ու տը գողանալ , Սատանայ ին ջ ու ը տանել ` ծարավ հե տ բ եր ել

11. Սատանայ ից մի բան կորզել

Traer uno las¹ del diablo/demonio, Սատանի մանգաղ գողացող , Սատանի բյ ու լ լ ա թ ղ ց ն ող

Իրադրայ ին անփոփոխակ

1. Շատ խորամանկ և աչքաբաց լ ի ն ել

Engañar uno al diablo, Սատանա խաբել , Սատանայ ին ջ ու ը տանել ` ծարավ հե տ բ եր ել , Սատանայ ին տրեխ հագցնել , Սատանայ ին շ ապիկ կարել , Սադոնի հե տ խնամ ու թյ ու ն անել , Սատանի հե տ մի կտոր հաց կիսած լ ի ն ել , Սատանի հ ու ն ար ու ն ի , Սատանի հե տ ս ոխ ու սխտր ու տ ել , սատանայ ից սխտր ի հո տ առ ն ել

2. Վատ, չար, խաբեբա՝ խորամանկ մարդ

¹ Traer uno las del diablo դարձվածքում զեղչված է (las) cosas գոյականը, որի փոխարեն հանդես է գալիս las խնդիր դերանունը, որը, որպես լեզվական երևույթ, շատ բնորոշ է իսպաներենին:

Սատանի առջևի ճիվը (լիներ), Սատանի կոտոշ, Սատանայի ծնունդ, Սատանայի ձագ, Սատանայի մրցակից, Սատանախաբող, Սատանանալող, Սատանապայտող

3. *Իսկական սատանալիներ (չար, խաբեբա, խորամանկ)*

Hablar con el diablo, Idear con el diablo, Ser capaz de contarles los pelos al diablo, Estudiar con el diablo, Inventar con el diablo, Traer uno las del diablo/demonio, Սատանի կաթ ծծել, Սատանի ծիծ ուտել, Սատանայ ությ ուն քանեցնել, Սատանա կտրել, Սատանի վիլակ մանել, Սատանա պայտել, Սատանա նալել, Սատանային թարս նալել

4. *Չարածճի, խորամանկ երեխա (մարդ)*

Tener uno el diablo en (dentro del) cuerpo, Սատանի պիպել, Սատանի ճուտ, Սատանի ձագ, Սատանի լակոտ, Սատանի տակից քաշած, Սատանի վիլակ անող

5. *Անչափ խորամանկ լիներ՝ գերազանցելով սատանային*

Սատանայից յոթ օր առաջ ծնվել, Սատանայից առաջ աշխարհ գալ, Սատանայից առաջ ծնվել, Սատանայի հետ ծնունդ նստել, Սատանային բնից հանել, Սատանայի ծոցի ճուտը գողանալ

6. *Խիստ ճարպիկ, ճարտար, չարածճի՝ խորամանկ (մարդ)*

Սատանայի ճախարակ, Սատանայի սրոց, Սատանի վիլակ, Սատանի չեքուճ, Սատանի ետևի կրունկը, Սատանի ետևի ճիվը, Սատանի ետևի ոտը, Սատանի պոչ, Սատանա խաղացնող, Սատանի սլաք, Սատանի քյուլլա թռցնող, Սատանի մանգաղ գողացող, Սատանայի եղունգ, Սատանի խելք

Դարձվածակազմական կաղապար

1. *Սատանայի վրա ներգործող թյուներ / ազդեցող թյուներ ու նենալ - շատ խորամանկ և աչքաբաց լիներ*

Engañar uno al diablo, Սատանա խաբել

2. *Սատանի մարմնի մի մասը լիներ - խիստ ճարպիկ, ճարտար, չարածճի՝ խորամանկ (մարդ)*

Սատանի ետևի կրունկը, Սատանի ետևի ճիվը, Սատանի ետևի ոտը, Սատանի պոչ, Սատանի խելք

3. *Սատանայ ին հարազատ/մտերիմ լինել - իսկական սատանալ ինել (չար խաբեբա, խորամանկ)*
Սատանի կաթ ծծել , Սատանի ծիծ ու տել
4. *Սատանայ ի հետևորդը լինել / սատանի գործն անել - չարածի, խորամանկ երեխա (մարդ)*
Tener uno el diablo en (dentro del) cuerpo, Սատանի պիպել , Սատանի ճ ու տ, Սատանի ձագ, Սատանի լակոտ, Սատանի տակից քաշած, Սատանի վիլակ անող
5. *Սատանայ ից սովորած միջոցներին դիմել - իսկական սատանալ ինել (չար, խաբեբա, խորամանկ)*
Ser capaz de contarles los pelos al diablo, Estudiar con el diablo, Սատանայ ությ ու ն բանեցնել , Սատանակտրել
6. *Սատանայ ին ինչ-որ հագուստ կամ կոշիկ տրամադրել – շատ խորամանկ և աչքաբաց լինել*
Սատանայ ին տրեխ հագցնել , Սատանայ ին շապիկ կարել
7. *Սատանայ ից շուտ ծնվել - անչափ խորամանկ լինել՝ գերազանցել ով սատանայ ին*
Սատանայ ից յոթ օր առաջ ծնվել , Սատանայ ից առաջ աշխարհ գալ , Սատանայ ից առաջ ծնվել , Սատանայ ի հետծնունդ նստել
8. *Սատանայ ի գործիք լինել - խիստ ճարպիկ, ճարտար, չարածի՝ խորամանկ (մարդ)*
Սատանայ ի ճախարակ , Սատանայ ի սրոց
9. *Սատանի հետսեղան նստել / Սատանայ ի հետ շատ մտերիմ լինել - իսկական սատանալ ինել (չար, խաբեբա, խորամանկ)*
Hablar con el diablo, Inventar con el diablo, Idear con el diablo
10. *Սատանայ ին կամ իր հարազատներին խորամանկ ությամբ տեղահան անել – անչափ խորամանկ լինել՝ գերազանցել ով սատանայ ին*
Սատանայ ին բնից հանել , Սատանի ծոցի ճ ու տը գողանալ
11. *Սատանայ ից մի բան կորզել - խիստ ճարպիկ, ճարտար, չարածի՝ խորամանկ (մարդ)*
Սատանի քյ ու լ լ աթոցնող , Սատանի մանգաղ գողացող

Ստորև ներկայացնում ենք «Խորամանկություն» դարձվածաբանական խմբի դարձվածակազմական կաղապարի աղյուսակը.

Աղյուսակ 5.

**«Խորամանկություն» դարձվածաբանական խմբի
դարձվածակազմական կաղապարը**

բ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	ի
	+					h						1
												2
			h		+				ի			3
				+								4
							h			h		5
		h						h			h	6

Այժմ քննենք իմաստային կաղապարման մեկ այլ օրինակ «dios» (աստված) բառի իմաստային դաշտում:

Բարեմաղթություն

Բաղադրական անփոփոխակ

1. Աստված մարդուն կյանք (արև) պարգևել

Աստված արևդ երկարե; Աստված արև տա (քեզ, նրան); Աստված բաշխի; Աստված երկարե քո կյանքի օրերը; Աստված երկար (երկայն) արև (կյանք) տա (անե); Աստված իմ կյանքից կտրե ձերի վրա ավելացնե; Աստված մեկ օրը հազար անի; Աստված կանաչ ու կտրիճ արևդ անվնաս պահե

2. Աստված պաշտպան կանգնել մեկին

Así Dios te guarde; Dios nos tenga de su mano; Dios mantenga; Աստված պահապան; Աստված պահի/պահպանի; Աստված պահի ու պահպանի; Աստված ամանաթիլ ինես; Աստված ողջ/սաղ պահե; Աստված

² Հորիզոնական ուղղությամբ գրված թվանշանները համապատասխանում են բաղադրական անփոփոխակներին, իսկ ուղղահայաց գրվածները՝ իրարից ին անփոփոխակներին: Նրանց խաչածևումը ենթադրում է դարձվածակազմական կաղապարի առկայություն երկու լեզուներում, որը նշվում է աղյուսակում (+) տեսքով, իսկ եթե միայն մի լեզվում է, ապա նշվում է **h** (հայերեն) կամ **ի** (իսպաներեն) սկզբնատառերով:

խնայի; Աստված է մեզ գորավիզ; Աստված մեկի շուքը
մեր/ձեր/սրանց վրայից անպակաս անի

3. *Աստծու աջը մեկին բարիք, հաջողություն և բերել*

Աստծու աջը մեկի վրաքաղցր լինել; Աստծու աջը մեկի վրա
քաղցր մնալ; Աստծու աջը մեկի վրաքաղցր պահել

4. *Աստված իր բարի կամքն իրականացնել՝ թույլ տալով, որ
իրականանան որոշ նախածեռնություններ*

Dios dará; Permita Dios; Plega a Dios; A la mano de Dios; Dios mediante; Dios
delante; Quiera Dios; Si Dios es servido; Siendo Dios servido; Աստծո/
Աստծու բարին; Աստված բարին կատարի; Աստված բարին տա;
Աստված թող հաջողություն և տա; Աստված տա; Աստված բանն
հաջողի (աջողել)

5. *Աստված լինել մեկի հետ*

Anda con Dios; Irse uno con Dios; Irse uno (mucho) con Dios; Estar uno con
Dios; Աստված ընդքեզ; Աստված քեզ հետ; Աստված հետդ

6. *Աստծու ցուծստանալ*

Dios ponga tiento en sus manos; Así Dios te dé la gloria; Աստված կռներիդ
ուծտա; Աստված ուծտա; Աստված թող կտրուկ անի

7. *Աստծո կամոք կրկնապատկվել մեկի ունեցվածքը, Աստված
մեկին լի ու թյուն տալ*

Dios da ciento por uno; Աստված շեն պահի; Աստված ձեր սեղանը շեն
պահի; Աստված մեկդ հազար անի

8. *Աստված մեկի մեղքերը թեթևացնել*

Dios nos coja confesados; Աստված մեկի դատաստանը քաղցր անի;
Աստված մեկի մեղքերին թողություն տա/անի

9. *Աստված հաջողություն և, երջանկություն և տալ (նաև
նորապսակներին)*

Աստված միապսակի պահել/պահի; Աստված շնորհավոր անի;
Աստված բարի վայել ու մտա

10. *Աստված հոգու և հանգստություն և, խաղաղություն և տալ*

Vaya con la paz de Dios; Vaya por Dios; A la paz de Dios; Que de Dios haya;
Que de Dios goce; Աստված հոգին լուսավորի; Աստված ողորմի;

Աստված բարին հիշել; Աստված (խերդ) հոգուդ դեմ բերել

11. *Աստծու նդիմել, օգնություն և հայցել*

Dios nos la depare buena; Dios dé el remedio; De Dios venga el remedio; Dios nos asista; Dios te ayude; Աստված ողորմած է ; Աստված հասնի ; Աստված փրկիր / փրկե , Աստված լինի քո օգնականը

12. *Աստված ճիշտ ճանապարհը ցույց տալ*

A Dios, que esquilan; Vete con Dios; Vaya con Dios; Vaya con Dios, el alegre e iba llorando; Աստված բարի ճամփատա

13. *Աստծու նվկայակոչել*

Mi padre es Dios; Voto a Dios; Como Dios está en los cielos; Աստված վկա; Աստված երկիրք; ճշմարիտ Աստված

14. *Աստծո օրհնութիւնը հայցել*

Bendito sea Dios; Que es una bendición de Dios; Irse uno bendito de Dios

15. *Աստծու հոռյսին թողնել , հոռյսը դնել աստծու վրա*

A Dios que me mudo; A Dios y a ventura; A la de Dios; A la de Dios es Cristo; A la de Dios es grande; A la de Dios que es padre; Յու Աստված

Իրադրային անփոփոխակ

1. *Մեկին երկար կյանք ցանկանալ / մաղթել*

Աստված արևդ երկարե ; Աստված արև տա (քեզ , նրան); Աստված բաշխի ; Աստված երկարե քո կյանքի օրերը ; Աստված երկար (երկայն) արև (կյանք) տա (անե); Աստված իմ կյանքից կտրե ձերի վրա ավելացնե ; Աստված կանաչ ու կտրիճ արևդ անվնաս պահե ; Աստված մեկ օրը հազար անի

2. *Աստծու ցհովանավորութիւնը , օգնութիւնը , գործութիւնը խնդրել*

Así Dios te guarde; Así Dios te dé la Gloria; Dios nos asista; Dios nos tenga de su mano; Dios te ayude; Dios mantenga; Dios nos la depare buena; Dios ponga tiento en sus manos; Dios dé el remedio; De dios venga el remedio; Աստված ողորմած է ; Աստված կռներիդ ու ժտա ; Աստված ու ժտա ; Աստված թող կտրուկ անի ; Աստված հասնի ; Աստված փրկիր / փրկե ; Աստված պահապան ; Աստված պահի / պահպանի ; Աստված պահի ու պահպանի ; Աստծու ամանաթ լինես ; Աստված ողջ / սաղ պահե ; Աստված խնայի ; Աստված է մեզ գորավիզ ; Աստված մեկի շուքը մեր / ձեր / նրանց վրայից անպակաս անի ; Աստծու աջը մեկի վրա քաղցր

լ ի ն ե լ ; Աստժոնւ աջ ը մեկի վրա քաղցր մնալ ; Աստժոնւ աջ ը մեկի վրա քաղցր պահել

3. *Աստժոնւ բարեհաճոնւ թյոնւ նը, օրհնոնւ թյոնւ նը հայցել*

Dios dará; Permita Dios; Plega a Dios; Bendito sea Dios; Que es una bendición de Dios; Irse uno bendito de Dios; A la mano de Dios; Si Dios es servido; Siendo Dios servido; Աստժոն / Աստժոնւ բարին ; Աստված բարին կատարի ; Աստված բարին տա ; Աստված թող հաջողոնւ թյոնւ ն տա ; Աստված տա ; Աստված բանն հաջողի (աջողէ) ; Աստված թող գլխիդ խոնվ չանի

4. *Աստված ընկերակից լ ի ն ե լ*

Anda con Dios; Irse uno con Dios; Irse uno mucho con Dios; Estar alguien con Dios; Gozar de Dios; Աստված ընդ քեզ ; Աստված քեզ հետ ; Աստված լ ի ն ի քո օգնականը ; Աստված հետդ

5. *Մեկին աստժոնւ բարիքը՝ հաջողոնւ թյոնւ ն ներ մաղթել*

Dios da ciento por uno; A Dios, que esquilan; Vete con Dios; Vaya con Dios; Vaya con Dios, el alegre e iba llorando; Dios mantenga; Աստված մեկդ հազար անի ; Աստված շեն պահի ; Աստված ձեր սեղանը շեն պահի ; Աստված բարի ճամփա տա ; Աստժոն / Աստժոնւ բարին ; Աստված միապակի պահե / պահի (ասվոն մէնորապակներին) ; Աստված շնորհավոր անի ; Աստված բարի վայել ում տա

6. *Աստժոնւ գոն թը շարժել*

Dios nos coja confesados; Աստված մեկի դատաստանը քաղցր անի ; Աստված մեկի մեղքերին թողոնւ թյոնւ ն տա / անի

7. *Աստժոնւ g հանգոնւ gյալ ի հոգոնւ համար հանգստոնւ թյոնւ ն խնդրել*

Vaya con la paz de Dios; Vaya por Dios; A la paz de Dios; Que de Dios haya; Que de Dios goce; Աստված հոգին լ ու սավորի ; Աստված ողորմի ; Աստված բարին հիշէ ; Աստված (խերդ) հոգոնւ դ դեմբերէ

8. *Բախտի քմահաճոնւ յ քին թողած*

A Dios, que me mudo; A Dios y a ventura; A la de Dios; A la de Dios es Cristo; A la de Dios es grande; A la de Dios que es padre

9. *Երդվել աստժոն անոն նը հիշատակել ով*

Mi padre es Dios; Voto a Dios; Como Dios está en los cielos; Աստված վկա ; Աստված երկի ՚նք ; Ճշմարիտ Աստված

Դարձվածակազմական կադապր

1. *Աստված մարդու ն կյ անք պարգևել - Մեկին երկար կյ անք ցանկանալ / մաղթել*
Աստված արևդ երկարե; Աստված արև տա (քեզ, նրան); Աստված բաշխի; Աստված երկարե քո կյ անքի օրերը; Աստված երկար (երկայ ն) արև (կյ անք) տա (անե); Աստված իմ կյ անքից կտրե ձերի վրաավել ացնե; Աստված կանաչ ու կտրիճ արևդ անվնաս պահե; Աստված մեկ օրը հազար անի
2. *Աստված պաշտպան կանգնել մեկին - Աստճոց հովանավորող թյ ու ն, օգնող-թյ ու ն, զորող թյ ու ն խնդրել*
Así Dios te guarde; Dios nos tenga de su mano; Dios mantenga; Աստված պահա-պան; Աստված պահի/ պահպանի; Աստված պահի ու պահպանի; Աստճոց ամանաթ լ ինես; Աստված ողջ/ սաղ պահե; Աստված խնայի; Աստված է մեզ զորավիգ; Աստված մեկի շ ու քը մեր/ ձեր/ նրանց վրայ ից անպակաս անի
3. *Աստճոց աջը մեկին բարիք, հաջողող թյ ու ն բերել - Աստճոց հովանավորող թյ ու ն, օգնող թյ ու ն, զորող թյ ու ն խնդրել*
Աստճոց աջը մեկի վրաբաղցր լ ինել; Աստճոց աջը մեկի վրա քաղցր մնալ; Աստճոց աջը մեկի վրաքաղցր պահել
4. *Աստված իր բարի կամքն իրականացնել ` թոյլ տալ ով, որ իրականանան որոշ նախածեռնող թյ ու ններ - Աստճոց բարեհաճող թյ ու նը, օրհնող թյ ու նը հայցել*
Dios dará; Permita Dios; Plega a Dios; A la mano de Dios; Si Dios es servido; Siendo Dios servido; Աստճոց/Աստճոց բարին; Աստված բարին կատարի; Աստված բարին տա; Աստված թող հաջողող թյ ու ն տա; Աստված տա; Աստված բանն հաջողի (աջողե)
5. *Աստված լ ինել մեկի հետ- Աստված ընկերակից լ ինել*
Anda con Dios; Irse uno con Dios; Irse uno (mucho) con Dios; Estar alguien con Dios; Աստված ընդ քեզ; Աստված քեզ հետ; Աստված հետդ
6. *Աստճոց ու ժ ստանալ - Աստճոց հովանավորող թյ ու ն, օգնող թյ ու ն, զորող թյ ու ն խնդրել*
Dios ponga tiento en sus manos; Así Dios te dé la gloria; Աստված կռներիդ ու ժ տա; Աստված ու ժ տա; Աստված թող կտրող կ անի

7. Աստժո կամոք կրկնապատկվել մեկի ու նեցվածքը, Աստված մեկին լ իոու թյ ու ն տալ - Մեկին աստժոու բարիքը՝ հաջողուու թյ ու ն ներ մաղթել
 Dios da ciento por uno; Աստված մեկդ հազար անի; Աստված շեն պահի; Աստված ձեր սեղանը շեն պահի
8. Աստված մեկի մեղքերը թեթևացնել - Աստժոու գու թը շարժել
 Dios nos coja confesados; Աստված մեկի դատաստանը քաղցր անի; Աստված մեկի մեղքերին թողուու թյ ու ն տա՛ անի
9. Աստված հաջողուու թյ ու ն, երջանկուու թյ ու ն տալ (նաև նորապսակներին) – Մեկին աստժոու բարիքը՝ հաջողուու թյ ու ն ներ մաղթել
 Աստված միապսակի պահե/պահի; Աստված շնորհավոր անի; Աստված բարի վայել ու մտա
10. Աստված հոգու ն հանգստուու թյ ու ն, խաղաղուու թյ ու ն տալ - Աստժոու ց հանգուու ցյալի հոգու համար հանգստուու թյ ու ն խնդրել
 Vaya con la paz de Dios; Vaya por Dios; A la paz de Dios; Que de Dios haya, Que de Dios goce; Աստված հոգին լ ու սավորի; Աստված ողորմի; Աստված բարին հիշե; Աստված (խերդ) հոգու դ դեմ բերե
11. Աստժոու ն դիմել, օգնուու թյ ու ն հայցել - Աստժոու ց հովանավորուու թյ ու ն, օգնուու թյ ու ն, գորուու թյ ու ն խնդրել
 Dios dé el remedio; De Dios venga el remedio; Dios nos asista; Dios te ayude; Dios nos la depare buena; Աստված ողորմած է; Աստված հասնի; Աստված փրկի /փրկե
12. Աստված ճիշտ ճանապարհը ցույց տալ – Մեկին աստժոու բարիքը՝ հաջողուու -թյ ու ն ներ մաղթել
 A Dios, que esquilan; Vete con Dios; Vaya con Dios; Vaya con Dios, el alegre e iba llorando; Աստված բարի ճամփատա
13. Աստժոու ն վկայակոչել - երդվել աստժոու անու նը հիշատակել ով
 Mi padre es Dios; Voto a Dios; Como Dios está en los cielos; Աստված վկա; Աստված երկի ՚նք; ճշմարիտ Աստված
14. Աստժոու օրհնուու թյ ու նը հայցել - Աստժոու բարեհաճուու թյ ու նը, օրհնուու թյ ու նը հայցել
 Bendito sea Dios, Que es una bendición de Dios; Irse uno bendito de Dios

15. Աստճո հույ սիւն թողնել , հույ սը դնել աստճո վրա- Բախտի քմահաճույ քիւն թողած

A Dios, que me mudo; A Dios y a ventura; A la de Dios, A la de Dios es Cristo; A la de Dios es grande; A la de Dios que es padre

Ստորև ներկայացնում ենք «Բարեմաղթու թյ ու ն»

դարձված փմաստայ ին խմբի դարձվածակազմական կաղապարի աղյուսակը .

Աղյուսակ 6.

«Բարեմաղթու թյ ու ն» դարձված փմաստայ ին խմբի դարձվածակազմական կաղապարը

μ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	ի
	h															1
		+	h			+					+					2
				+										ի		3
					+											4
							+		h			+				5
								+								6
										+						7
															ի	8
													+			9

Վերոհիշյալ դարձվածակազմական կաղապարների ուսումնասիրությունը ևս մեկ անգամ հաստատում է, որ դարձվածային միավորներն անհրաժեշտ է ուսումնասիրել բացառապես նկարագրական պլանում՝ բացառելով սերող կաղապարին ներհատուկ դարձվածային միավորների փմաստի կանխենթադրումը :

Դարձվածային միավորները չեն առաջանում լեզուներում արդեն իսկ գոյությութ ունեցող փմաստային կաղապարների հիման վրա, այլ ստեղծվում են կամայականորեն: Ըստ այսմ՝ վերահաստատվում է այն գաղափարը, որ դարձվածային

կաղապարները իմաստային տեսակետից չեն կարող լինել սերող կաղապարներ:

Ինչ վերաբերում է այս կամ այն կաղապարի արդյունավետությանը, ապա այն որոշվում է տվյալ կաղապարի դարձվածային միավորների պատկերավորության արդիականության ամբ և տվյալ կաղապարի արտահայտած իմաստով:

Ա. Ռայխշտեյնի առաջարկած մեթոդը մեզ թույլ է տալիս եզրակացնել, որ միևնույն իրադրային անփոփոխակն կարող է համապատասխանել մի շարք բաղադրական անփոփոխակների: Անհրաժեշտ է փաստել նաև, որ դարձվածա-կազմական կաղապարները կարող են լինել նաև միջլեզվական: Մեր օրինակներում կարելի է առանձնացնել ինչպես իսպաներենին, այնպես էլ հայերենին հատուկ կաղապարներ՝ ելնելով ուսումնասիրվող լեզուների դարձվածապաշարի ազգային առանձնահատկություններից:

Կատարված ուսումնասիրության հիման վրակարող ենք նշել հետևյալ դիտարկումները. դարձվածային կաղապար կարելի է համարել միևնույն անբաժանելի բաղադրական կազմ ունեցող դարձվածային միավորների իմաստային անփոփոխակները: Դարձվածային կաղապարները այն դարձվածային միավորներն են, որոնք արտահայտում են միևնույն իմաստը, սակայն առանձնանում են դարձվածային բաղադրիչների քերականական և բառաճային որոշ առանձնահատկություններով:

Այսպիսով, իմաստային կաղապարման խնդիրը նկարագրական պլանում, ինչպես և նշվել է լեզվաբանական գրականության մեջ, չի համարվում յուրաքանչյուր լեզվի ողջ դարձվածապաշարին ներհատուկ համընդհանուր երևույթ: Սակայն ինչպես ցույց է տալիս «խորամանկություն» և «բարեմադթություն» դարձվածաիմաստային խմբերի իմաստային կաղապարման ուսումնասիրությունը (Ռայխշտեյնի մեթոդով), հնարավոր է առանձնացնել որոշակի կաղապարներ, որոնք միջլեզվական մակարդակում հանդես են գալիս որպես դարձվածային ընդհանրություններ:

Ուսումնասիրված բոլոր դարձվածային միավորներն առանձնանում են իրենց ներքին ձևի արտահայտչականության ամբ և

պատկերավորությունը, որը դարձվածային միավորների իմաստային կադասարման և տիպաբանական-համեմատական ուսումնասիրության կարևոր նախապայմանն է:

Ինչպես նշում է Ա. Նազարյանը, դարձվածային միավորների իմաստային կադասարման հարաբերական և սահմանափակ բնույթը ամենևին էլ չի նվազեցնում այդ խնդրի կարևորությունը դարձվածային ֆոնդի տեսական հիմքերն ուսումնասիրելու համար, մասնավորապես այն կարևորվում է դարձվածային միավորների իմաստային էության գիտական հիմնավորման և դարձվածակազմական գործընթացների համակարգայնության ուսումնասիրության մեջ, որի կարևոր, թեև ոչ բացարձակ, հատկանիշներից մեկը դարձվածքների իմաստային կադասարումն է /Назарян, 1987: 53/:

3.3 Բազմիմաստություն, հոմանիշություն և տարբերակայնություն համակարգային կապերը «dios» (ասված) և «diablo» (սատանա) բաղադրիչներով դարձվածքներում

Ընդունված է կարծել, որ բազմիմաստությունն իբրև լեզվական երևույթ, այնքան էլ բնորոշ չէ դարձվածային միավորներին, այլ ավելի ներհատուկ է բառին, քանի որ տրամաբանորեն անսահմանափակ թվով բառերի ստեղծումը կբարդացներ լեզվի յուրացումը: Ինչպես նշում են Ա. Նազարյանը, Վ. Ժուկովը և այլ լեզվաբաններ, դարձվածքները կարող են լինել բազմիմաստ, քանի որ «յուրաքանչյուր դարձվածային միավորի՝ նույնիսկ մենիմատների առաջացումը վերջինիս նախադիպի, այն է՝ տվյալ դարձվածքի շարահյուսորեն ձևավորված ազատ հարաբերակցի նոր իմաստ ձեռք բերելու արդյունքն է» /Назарян, 1987: 212/: Ա. Եֆիմովն ու Յ. Ռ. Գեպները պնդում են տրամաբանորեն հակառակը՝ նշելով, որ «դարձվածային միավորի իմաստային ծավալը շատլայն է, որը կարող է հանգեցնել վերջինիս շատլայն կիրառմանը և ոչ թե մի քանի իմաստների առաջացմանը» /Гепнер, 1959: 159/:

Մեր օրերում դարձվածային բազմիմաստությունը
լեզվաբանական գրականության մեջ արդեն ընդունված
լեզվական երևույթ է համարվում:

Ինչպես բառային միավորներին, այնպես էլ դարձվածքներին
բնորոշ են ոչ միայն բազմիմաստությունը, այլ նաև
մենիմաստությունը, տարբերակայնությունը, հոմանիշությունը,
հականիշությունը, հարանունությունը և համանունությունը,
որոնք արտացոլում են նրանց համակարգային
հարաբերությունները ինչպես բառային, այնպես էլ
դարձվածային մակարդակում:

Դարձվածային բազմիմաստությունը համարվում է
լեզվի հարստացման միջոց: Համաձայն որոշ գիտնականների՝
լեզվի հարստության մասին կարելի է դատել ոչ թե ըստ բառերի
քանակի, այլ ըստ տվյալ բառի ունեցած իմաստների
քանակի. մի քանի տարբեր իմաստ ունեցող բառը
համարժեք է մի քանի տարբեր բառերի:

Դարձվածային միավորների բազմիմաստության
խնդիրը գտնվել է լեզվաբանների ուշադրության
կենտրոնում դեռևս դարձվածաբանության
զարգացման ակունքներից սկսած, այն է՝
քսաներորդ դարի սկզբից, երբ որոշ
լեզվաբաններ սկսեցին քննության
առնել դարձվածային իմաստի, այդ թվում
նաև դարձվածքի բազմիմաստության
խնդիրը: Ավելի ուշ՝
մասնավորապես քսաներորդ դարի
կեսերին, բազմիմաստության
խնդիրը կենտրոնացավ հատկապես
հետևյալ հարցերի շուրջ.

ա) գոյություն ունի՞ «դարձվածային
միավորի բազմիմաստություն»
հասկացությունը, թե՞, համաձայն
ավանդական մոտեցման, դարձվածքն
այնուամենայնիվ օժտված է
մեկ ընդհանուր իմաստով,

բ) ինչո՞վ են տարբերվում
բազմիմաստ դարձվածային
միավորները իմաստային
լայն ծավալ ունեցող
դարձվածքներից,

գ) ի՞նչ գործոններով է
պայմանավորված
դարձվածային
միավորների
բազմիմաստության
զարգացումը:

Ըստ լեզվաբանների
մեծամասնության
տեսակետի՝
յուրաքանչյուր
դարձվածք
կարելի է
ուսումնասիրել
որպես

բազմիմաստությունը ան գործընթացի արդյունք: Տ. Չեր-դանցևան նույնպես հարում է տվյալ տեսակետին՝ նշելով, որ բազմիմաստությունը (հուն․՝ polysemos) լեզվական նշանի՝ մեկից ավելի իմաստ ունենալու արդյունքն է, և եթե մենիմաստությունը ենթադրում է նշանակիչի և նշանակյալի ամբողջական համընկնում, այսինքն՝ տարրական իմաստների այնպիսի խմբավորում, որն անփոփոխ կերպով կամ չնչին վերապահումներով բնորոշ է այս կամ այն լեզվական միավորին, ապա բազմիմաստությունը ենթադրում է, որ մի նշանակիչին հատուկ են մի քանի տարրական իմաստների խմբավորումներ /Черданцева, 2007: 111-112/:

Օրինակ՝ Echar uno por los trigos de Dios-1. գնալ ուր պատահի; 2. վարվել ,

ինչպես խել քին փչի

En paz y en gracia de Dios- 1. մաքուր հոգով; 2. հաշտուկ խաղաղ

Encender una vela a Dios y otra al diablo-1. երկերեսանիություն անել ; 2. երկակի

խաղ խաղալ

Como el Cristo de Pardo-1. լուրջ ; 2. երկարամորուս

Երկրորդ խնդիրը բազմիմաստ և իմաստային լայն ծավալ ունեցող դարձ-վածքների ուսումնասիրությունն է: Լայն իմաստային ծավալ ունեցող դարձվածային միավորները հարաբերակցվում են մեկ ընդհանուր, սակայն բավականին ծավալուն սիգնիֆիկատի հետ, որը դարձվածային իմաստի անփոփոխակն է /Алефиренко, Валюх, 1990: 27-28/: Այսինքն՝ այն դարձվածային միավորները, որոնց իմաստները միավորվում են մեկ ընդհանուր սիգնիֆիկատով, համարվում են ավելի շուտ իմաստային լայն ծավալ ունեցող, քան բազմիմաստ դարձվածքներ: Մեր ուսումնասիրած նյութում իմաստային լայն ծավալով առանձնանում են հատկապես «բարեմաղթանք» արտահայտող դարձվածային միավորները:

Նոր իմաստների առաջացումը արդեն գոյություն ունեցող դարձվածային միավորների մոտ պայմանավորված է ինչպես լեզվական, այնպես էլ արտալեզվական՝ սոցիալ-քաղաքական,

տնտեսական և այլ գործոններով, սակայն դարձվածային բազմիմաստությունը հիմնականում որոշվում է լեզվական գործոնով: Ա. Նազարյանը դարձվածային բազմիմաստությունը համարում է երկրորդային իմաստային վերափոխման արդյունք, ինչպես վերաիմաստավորումը, գեղջումը, հնաբանությունը, իմաստի իրադրային ընդլայնումը, ժողովրդաստուգաբանական աղավաղումը և այլն /Назарян, 1987: 210/: Դարձվածային բազմիմաստությունը զուգահեռ և հաջորդական վերաիմաստավորման արդյունք է, այսինքն՝ դարձվածային միավորի յուրաքանչյուր նոր իմաստի առաջացումը իրականանում է ելակետային, ազատ կապակցության հիման վրա, որի դեպքում վերջիններիս իմաստային կապը միջնորդավորված է, այն է՝ տվյալ դարձվածքի իմաստը կարելի է վերականգնել միայն նշված ազատ կապակցության իմաստի միջոցով: Ըստ Վ. Ժուկովի՝ դարձվածային յուրաքանչյուր առանձին իմաստ ստեղծվում է միևնույն ազատ կապակցության հաջորդական փոխաբերականացման արդյունքում՝ առանձին իմաստների համար ծառայելով որպես փոխաբերականացման ընդհանուր աղբյուր: Սա է պատճառը, որ նրա առանձին իմաստների միջև կասերտ իմաստային կապ /Жуков, 1978: 132/: Ինչ վերաբերում է մեր ուսումնասիրության նյութին, ապա դարձվածքի կազմում «dios» և «diablo» բաղադրիչների՝ որպես գերբնական էակների առկայությունն արդեն իսկ ենթադրում է փոխաբերական կիրառության լայն հնարավորություններ:

Եթե դարձվածքը ձեռք է բերում նոր իմաստ համապատասխան ազատ կապակցության հիման վրա, ապա տվյալ կապակցությունը պիտի ունենա կենդանի ներքին ձև: Թերևս, դա յուրաքանչյուր զուգահեռ վերաիմաստավորման նախապայմանն է, սակայն շատ դեպքերում դարձվածային միավորները ձեռք են բերում նոր իմաստ նույնիսկ իրենց պատկերավորությունը կորցնելուց հետո:

Դարձվածային բազմիմաստությունն ուսումնասիրելիս հարկ է նաև մանրամասն քննության առնել «դարձվածային հոմանիշ» և

«դարձվածային տարբերակ» հասկացությունները, քանի որ վերջիններս սերտորեն փոխկապակցված են:

Դարձվածային տարբերակները լեզվաբանական գրականության մեջ հայտնի են նաև որպես նույնիմաստ դարձվածային միավորներ, որոնք տարբերվում են բազմիմաստներից այն տարբերակիչ հատկանիշով, որ նույն դարձվածքի տարբեր ձևերն են և արտահայտում են միևնույն իմաստը: Դարձվածային տարբերակը, ինչպես նաև դարձվածային բազմիմաստությունը, լեզվի դարձվածային ֆունդի հարստացման կարևոր միջոցներ են: Ըստ Շանսկու՝ «դարձվածային միավորների տարբերակները նրա բառաբերականական տեսակներն են, որոնք նույնն են իրենց իմաստով և իմաստային ձուլվածություն աստիճանով / Шанский, 1985: 50/:

Ա. Նազարյանն /Назарян, 1987: 225/ առանձնացրել է դարձվածային տարբերակի հետևյալ տարբերակիչ հատկանիշները՝

1. Պատկերի միասնականություն,
2. Նշողական-նշանակողական իմաստի ընդհանրացում,
3. Լեզվում կատարած գործառնություն և կարգային (բառաբերականական) իմաստի համընկնում,
4. Իմաստների քանակի համընկնում,
5. Բառային անփոփոխակի առկայություն:

Առաջին երեք հատկանիշները դասվում են պարտադիր հատկանիշների շարքում, իսկ հաջորդ երկուսը՝ կամընտրականների: Վերջին տարբերակիչ հատկանիշն ընդգծում է այն կարևոր հանգամանքը, որ դարձվածային տարբերակների կազմում՝ անկախ տվյալ տարբերակների կրած կառուցվածքաիմաստային փոփոխությունների, գոնե մեկ բաղադրիչը պետք է մնա անփոփոխ:

Օրինակ՝

Día de Dios
Día del Señor

} Աստուծոն նվիրված տուն

Աստված հեռու անի
Աստված հեռու պահի

} Աստված չանի

Աստված հետոու հեռու անի

Աստված գերծ պահի

Առաջին օրինակում “día”-ն է տվյալ անփոփոխակ բաղադրիչը, իսկ երկրորդում՝ «աստված»:

Ինչպես նշում է Ա. Նազարյանը, ըստ նշողական-նշանակողական իմաստի ընդհանրության, դարձվածային տարբերակները նույնն են իմաստով, սակայն տարբերվում են իրենց հուզարտահայտչականությամբ և ոճական երանգավորմամբ /Назарян, 1987: 226/:

Դարձվածային տարբերակների հարցը անգլերենի լեզվանյութի հիման վրա գիտական ուսումնասիրության առարկա է դարձել Ա. Վ. Կուլնիսի աշխատություններում, ըստ որի, դարձվածային տարբերակները դարձվածային միավորի տարատեսակներ են, որոնք նույնական են իրենց իմաստների բնույթով ու քանակով, ոճական ու շարահյուսական գործառնություններով, ուրիշ բաների հետ կապակցելի ությամբ, ունեն բառային ընդհանուր անփոփոխակ՝ մասամբ տարբեր բառային կազմի առկայությամբ, կամ էլ բառաների կամ շարահյուսության տարբերակումով /Кунин, 1970: 62/:

Յամաձայն Սուլուազայի՝ երկու տարբեր դարձվածային միավորներ դարձվածային տարբերակներ են, եթե գտնվում են միևնույն գործառական ոճի սահմաններում, չեն տարբերվում իրենց իմաստներով, ազատ են և անկախ այն համատեքստից, որում կիրառվում են, իրենց կառուցվածքով և բաղադրիչների կազմությամբ մասնակիորեն համընկնում են և կայուն (\$իքսված) են, այն իմաստով, որ սահմանափակ և կայուն շարքի մաս են կազմում /Zuluaga, 1980: 225/:

Չնայած այն փաստին, որ դարձվածային տարբերակները սովորաբար ունեն նույն իմաստը, նույն պատկերը և լեզվում կատարում են նույն գործառնությունը, այնուամենայնիվ, շատ հազվադեպ լեզվի պատմական զարգացման տարբեր փուլերում դարձվածային տարբերակներից մեկը կարող է ձեռք բերել նոր իմաստ, որը չի տարածվում այդ շարքին պատկանող մյուս

տարբերակների վրա՝ գարկ տալով դարձվածային բազմիմաստությունը:

Օրինակ՝	}	Տեր Աստված
Hijo de Dios		
Varón de Dios		

Սատանի ձագ	}	խարդախ, խաբեբամարդ
Սատանի ճուտ		
Սատանի լակոտ		
Սատանի պիպեղ		

Հայերենում «սատանի ձագ» դարձվածային տարբերակը ձեռք է բերել նաև այլ իմաստներ. կիրառվում է որպես անարգական արտահայտություն, ինչպես նաև արտահայտում է *չարածի* իմաստը՝ մտնելով բազմիմաստության դաշտ, որի դեպքում դարձվածային այս տարբերակի մեկ նշանակչին համապատասխանում են երկու և ավելի նշանակյալներ: Այն նաև ունի իր համանուն տարբերակը (սատանի ձագ - սևուկ), որը, լինելով համագիր համանուն և պատկանելով միևնույն քերականական կարգին, վերջիններից տարբերվում է իր արտահայտած իմաստով:

Հարկ է նշել, որ տարբերակայնությունը հիմնականում բնորոշ է պատկերավոր դարձվածքներին, թեև շատ հազվադեպ կարելի է հանդիպել նաև ոչ պատկերավոր դարձվածքներում և գրեթե չի դիտարկվում դարձվածային հնարանություններում:

Տարբերակայնության ամենակարևոր հատկանիշներից է այն, որ անփոփոխակը միևնույն երևույթի վերացարկված նշանակությունն է, ի տարբերություն իր կոնկրետ ձևափոխման (մոդիֆիկացիա) կամ ձևափոխչի, այն է՝ փոփոխակի: Անփոփոխակը որպես առանձին առարկա հանդես է գալիս, ոչ էլ ներկայացնում է մի ամբողջ դաս, այլ, ավելի շուտ, միասեռ առարկաներին վերաբերող դասի անվանումն է:

Տարբերակայնությունը լեզվի անկայունության, ներքին փոփոխության ու շարժի դրսևորումն է, ինչպես նաև վերջինիս պատմական փոփոխության խթաններից մեկը:

Ն. Կուրչատկինան և Ա. Սուլպրոկունը առաջարկում են դարձվածային տարբերակների հետևյալ դասակարգումը /Курчаткина, Супрун, 2009: 39-53/

1. Իմաստային տարբերակներ
2. Բառային տարբերակներ
3. Ձևաբանական տարբերակներ
4. Շարահյուսական տարբերակներ
5. Քանակական տարբերակներ:

Ելնելով դարձվածային տարբերակների դասակարգման այն սկզբունքներից, որ առաջադրել է Ա. Նազարյանը /Назарян, 1987: 228-231/, «dios» (աստված) և «diablo» (սատանա) բաղադրիչներով դարձվածքների իմաստային դաշտերում առանձնացրել ենք դարձվածային տարբերակների հետևյալ տիպերը.

1. Կառուցվածքային-քերականական տարբերակներ

Այս շարքի մեջ են մտնում այն դարձվածային միավորները, որոնք ունեն միևնույն բառային կազմը, բայց տարբերվում են իրենց քերականական առանձնահատկություներով:

Այս շարքում առանձնանում են հետևյալ ենթատեսակները.

ա) **Ձևաբանական տարբերակներ**, որոնք առանձնանում են իրենց ձևաբանական առանձնահատկություներով: Այս կարգի տարբերակայնությունը կարող է արտահայտվել հետևյալ կերպ՝

1. գոյականական բաղադրիչի եզակի և հոգնակի թվի կիրառությամբ.

Օրինակ՝ *qué diablo/ qué demonio/ qué diablos/diantres/demonios* (գրողը տանի)

2. հոդի գեղջմամբ.

Օրինակ՝ *el demonio cargue contigo/ demonio cargue contigo, el demonio que le aguante/ demonio que le aguante, por el amor de Dios/ por amor de Dios, Սատանին ճվերը կոտրեցի/ Սատանի ճվերը կոտրեցի*

3. տարբեր նախդիրների կիրառությամբ.

Օրինակ՝ *como arte de diablo/ por arte de diablo*

4. նախդրի գեղջմամբ.

Օրինակ՝ *de la piel de demonio/ la piel de demonio, de Dios para abajo/ de Dios abajo*

5. հոդի եզակի և հոգնակի թվի գործածությամբ.

Օրինակ՝ tener uno el demonio/ los demonios en el cuerpo

բ) **Դիրքային տարբերակներ**, որոնք տարբերվում են գլխավորապես իրենց շարադասությամբ՝ չազդելով բաղադրիչների շարահյուսական հարաբերությունների վրա: Օրինակ՝ Dios sabe/ Sabe Dios, Փառք Աստծո/ Աստծուն փառք, Աստված առաջ/ Առաջ Աստված

II. Բառային տարբերակներ

Այս խմբին պատկանող դարձվածքները տարբերվում են իրենց բառային կազմով: Փոփոխվող բաղադրիչ կարող են լինել գաղափարանիշ հոմանիշները: Օրինակ՝ Idear con el demonio/ Inventar con el demonio, Demonio que le aguante/ Demonio que le resista, Hijo/ varón de Dios, Que diablos/ diantres, Vicario de Dios/ Jesucristo, Como Cristo/ Dios es mi padre, Al diablo/ demonio, (de) La piel de Satanás/ Barrabas/ diablo, Dar cada golpe que Dios tirita/ Dar cada golpe que Dios tiembla, Աստծու/ Զրիստոսի մոտ/ քով ուղարկել, Աստծու/ Զրիստոսի/ Երկնքի սիրուն, Սատանան/ Սադայելը գիտե, Սատանի պես/ նման, Աստված/ Տեր մի արագե, Սատանի գիրկն/ գոգն ընկնել, Սատանի ձին թամբել / թամբել / հեծնել / նստել՝ ցած չգալ:

Այս խմբին են դասվում նաև այն դարձվածային միավորները, որոնց փոփոխվող բաղադրիչները հոմանիշ են միայն տվյալ դարձվածքներում: Օրինակ՝ Dar al diablo/ Mandar al diablo, Dejar a alguien hecho un Cristo/ Poner a alguien hecho un Cristo, Más grande/ largo que la voluntad de Dios, Donde Cristo dio/ pegó las tres voces, Que de Dios goce/ haya, Estarle/ sentarle/ venirle (a alguien) como un par de pistolas a un Santo, Աստված այն օրը չանել/ չտա/ չցուցանել, Աստծու տվածով կերակրել / հյուրասիրել, Սատանայի գիրկը գլորել / Սատանայի գիրկն ուղարկել:

Տվյալ խմբին պատկանող դարձվածքների փոփոխվող բաղադրիչները կարող են արտահայտվել նաև տարբեր դերանուններով և թվականներով: Օրինակ՝ Al diab-lo/ A todos (անորոշ դերանուն) los diablos/ A mil (քանակական թվական) diablos:

Տվյալ դարձվածային տարբերակին պատկանող դարձվածքներում կարող են նաև փոփոխվել մի քանի բաղադրիչ: Օրինակ՝ Ser uno como Dios quiere/ ha hecho/ que todo lo sabe/ adivina:

III. Ռճական տարբերակներ

Տվյալ խմբին են պատկանում այն դարձվածային միավորները, որոնց փոփոխվող բաղադրիչները ոճական հոմանիշներ են: Օրինակ՝ Entregar el alma a Dios/ Entrgar la osamenta a Dios (հոգին ավանդել, մահանալ): Որպես փոփոխվող բաղադրիչ կարող են նաև հանդես գալ այն ոճական հոմանիշները, որոնք պատկանում են լեզվի ոչ գործուն (պասիվ) կամ սահմանափակ գործածություներ ունեցող բառերի շերտին, լեզվի հասարակական և տարածական տարբերակներին և այլն: Օրինակ՝ Սատանի փայ դառնալ / Սատանայի բաժին դառնալ, Աստված սաղ պահի / Աստված ողջ պահի, Աստծո մոտ ուղարկել / ղրկել:

IV. Քանակական տարբերակներ

Այս դարձվածային միավորներն աչքի են ընկնում առաջադաս, միջադաս կամ հետադաս մեկ կամ մի քանի բաղադրիչների զեղչմամբ, շատ հազվադեպ նաև որոշ բաղադրիչների ավելացմամբ: Ըստ Պ. Բեդիրյանի՝ տվյալ դարձվածային միավորները կազմվում են բաղադրիչների հավելարթումով կամ զեղչումով (համառոտումով) /Բեդիրյան, 1973: 215/: Վերջիններս նույն դարձվածքի ամբողջական կամ կրճատ ձևերն են, որոնք երբեմն որոշ դարձվածաբանների կողմից նույնացվում են դարձվածային հոմանիշի հետ: Օրինակ՝ Աստծու բարևը կտրել - բարևը կտրել (բարևել), Աստծու բարևը մոռանալ / բարևը մոռանալ: Շատ հազվադեպ որոշ բաղադրիչներ ավելանում են: Մեր լեզվանյութում կարելի է առանձնացնել քանակական տարբերակների մի շարք օրինակներ. No es Dios viejo/ No se ha muerto Dios de viejo (ոչ ինչ կորած չէ, ամեն ինչ դեռ առջևում է), Armar un Cristo/ Armar la de Dios es Cristo, A la de Dios/ A la buena de Dios (թեթևամտորեն), Irse uno con Dios/ Irse uno mucho con Dios (հրաժեշտ տալ), Աստված հեռու / հետու հեռու անի, Աստծո կրակը թափվել / Աստծո կրակը գլխին թափվել և այլն:

V. Ուղղագրական տարբերակներ

Տվյալ խմբին պատկանող դարձվածային միավորները տարբերվում են միմյանցից իրենց ուղղագրությամբ, որը չի ազդում ո՛չ վերջիններիս կառուցվածքի, ո՛չ էլ իմաստի վրա: Այս տարբերակները գրեթե չեն դիտարկվում իսպաներենի մեր լեզվանյութում, իսկ հայերենում բացահայտվել են մի քանի

դեպք: Օրինակ՝ Աստված պել ադ տա/ Աստված բել եդ (բալ եդ) տա: Ըստ Ա. Սուքիասյանի և Ս. Գալստյանի՝ դարձվածային տարբերակ չի կարելի համարել միևնույն դարձվածքի կազմի մեջ մտնող բաղադրիչների ուղղագրական և բառային աննշան տարբերությունները, օրինակ՝ Աստված (կամ Աստոծ) հեռու անի, Աստված չանի/ Աստված ոչ անի: Դարձվածային տարբերակը բաղադրիչների միևնույն, հաստատուն կազմի առկայությունը ամբայս կամ այն բառ-բաղադրիչի քերականական փոփոխակն է, ինչպես նաև դարձվածքի բաղադրիչը հանդիսացող բարբառային և փոխառյալ բառերն ու բառածևերը գրականով փոխարինելու դեպքերը: Դարձվածային տարբերակ կարող են համարվել այն տեսակները, որոնց բաղադրիչը կամ բաղադրիչներն ունեն քերականական տարբերակ (դարձվածային միավորի որևէ կոնկրետ բաղադրիչի կիրառություն, ինչպես եզակի, այնպես էլ հոգնակի թվում, երբեմն տվյալ բաղադրիչը կամ բաղադրիչները կարող են հանդես գալ տարբեր հոլովածներում և այլն) /Սուքիասյան, Գալստյան, 1975: 10/:

Չայերենում դարձվածային տարբերակ է համարվում նաև արևմտահայերեն տարբերակը արևելահայերենով փոխարինելու դեպքը կամ գրաբարյան քարացած ձևերով կազմված դարձվածքը և վերջինիս ժամանակակից հայերենի համարժեքը, օրինակ՝ Աստված ընդ քեզ և Աստված քեզ հետ: Իսպաներենում նմանապես կարող ենք տարբերակներ համարել *Por Dios* և *Par Dios* դարձվածքները, որտեղ հանդես են գալիս իսպաներեն por և լատիներեն par նախդիրները:

Դարձվածքի բաղադրիչներից մեկը կամ մեկից ավելին կարելի է փոխարինել նույն նշանակությունն ունեցող բառով կամ բառերով, սակայն բայի դեպքում հայերենում այն կարող է փոխարինվել նույն իմաստն արտահայտող մեկ այլ հարադրավոր բայով, օրինակ՝ Աստված կյանքդ երկարի կամ Աստված կյանքդ երկար անի:

Դարձվածային ֆոնդի հարստացման երրորդ միջոցը դարձվածային հոմանիշությունն է, որը երբեմն նույնացվում է դարձվածային տարբերակի հետ: Դարձվածային տարբերակ են համարվում միևնույն դարձվածքի տարբեր ձևերը, իսկ

դարձվածային հոմանիշները հանդես են գալիս որպես լեզվի առանձին և անկախ միավորներ /Назарян, 1987: 226/: Դարձվածային տարբերակի և դարձվածային հոմանիշի գլխավոր տարբերակիչ հատկանիշն այն է, որ դարձվածային հոմանիշները կառուցվում են տարբեր պատկերների հիման վրա, այսինքն՝ առաջանում են տարբեր աղբյուրներից: Հոմանիշ դարձվածքների ներքին ձևի բառաբանության կազմը պետք է տարբեր լինի: Եթե այն համընկնում է կամ գրեթե համընկնում է, ապա տվյալ դարձվածքները չեն գիտակցվում որպես հոմանիշներ, այլ միևնույն դարձվածքի տարբերակներ են:

Վ. Մոկիենկոն նույնպես ուսումնասիրել է դարձվածային հոմանիշության խնդիրը և փաստում է, որ դարձվածքի բաղադրիչների բառային փոփոխությունը ոչ միշտ է փոխում դարձվածային միավորի պատկերը, բնույթը: Ըստ նրա՝ հաճախ կարող են փոխարինվել բառ-հոմանիշները, որոնք ապահովում են պատկերավոր ներ-կայացման կայունությունը: Այդ բառերի շրջանակը կենդանի խոսքում բավականին լայն է /Мокиенко, 1989: 31/:

Ի տարբերություն բառային հոմանիշի, որն ավելի վերացարկված և ընդ-հանուր ձևով է արտահայտում հասկացություններ, հատկանիշներ ու երևույթներ, դարձվածային հոմանիշն ավելի կոնկրետ է արտահայտում հասկացություններ (հատկանիշներ ու երևույթներ), որը բացատրվում է դարձվածային միավորի յուրահատկությամբ: Լինելով լեզվի արտահայտչականության կարևորագույն միջոց և լեզվաոճական անհրաժեշտ տարր՝ դարձվածքները հանդես են գալիս բանավոր և գրավոր խոսքի բոլոր ոճերում՝ խոսքը դարձնելով պատկերավոր, կուռ և արտահայտիչ, ինչպես նաև նրան հաղորդում դիպուկություն ու սեղմություն: Այս առանձնահատկությամբ է որոշվում դարձվածային միավորի բարդ իմաստային կառուցվածքը, այդ թվում նաև դարձվածային հոմանիշներինը, որոնք, լինելով փոխկապակցված ընդհանուր իմակով (գերիմակով), աչքի են ընկնում իրենց ուրույն իմաստային և ոճական առանձնահատկություններով, որոնք զգալիորեն թուլացնում են հոմանիշային շարքի անդամների միջև իմաստային կապը:

Ինչպես արդեն նշվեց, դարձվածային հոմանիշները բնորոշվում են իմաստների մերձավորությամբ և ընդհանրությամբ: Իրենց քերականական կառուցվածքով, ըստ Վ. Ս. Վինոգրադովի, հոմանիշ դարձվածքները կարող են լինել երեք տեսակ /Виноградов, 2003: 180/:

Ամենաթույլ իմաստային կապը սովորաբար ունենում են տարակառույց դարձվածային հոմանիշները, որոնք տարբերվում են ոչ միայն իրենց բառային կազմով, այլ նաև քերականական կառուցվածքով: Օրինակ՝ A Dios y a dicha/ A la buena de Dios (աստծո կամոք); Dios nos asista/ Dios nos la depare buena/ Dios nos coja confesados/ Dios nos tenga de su mano (Պահպանի՛ր մեզ, Տե՛ր Աստված); Սատանայի հետ սոխու սխտոր ու տող/ Սատանային բնից հանող (խորամանկ, խարդախ); Աստծո ձեռքը մեկի վրա ծանրանալ / Աստծո կրակը թափել (աստված մեկին պատժել):

Որոշակիորեն ավելի սերտ կապով են փոխկապակցված այն դարձվածային հոմանիշները, որոնք ունեն մերձավոր կառուցվածք և մասնակիորեն նման բառային կազմ: Օրինակ՝ No nos oiga Dios/ Sea sordo el diablo (սատանի ականջը խուլ է); Tan amigos como Dios y el diablo/ como la cruz y el diablo (շուն ու կատու լինել); Վարագույրի վրայի սատանա/ Քարե ձորի սատանա (շատագեղ մարդ):

Ամենասերտ կապով փոխկապակցված են այն դարձվածային հոմանիշները, որոնք ունեն ընդհանուր բաղադրիչ կամ բաղադրիչներ և միևնույն շարահյուսական կառուցվածքը: Օրինակ՝ A la mano de Dios/ A la paz de Dios (աստված քեզ հետ); Սատանայի ծիծկերած/ Սատանայի կաթ ծծած (չարաբարո, խորամանկ); Աստու մոտ գնալ / Աստու փայ դառնալ (մահանալ): Սակայն այս դեպքում էլ խոսքը չի գնում բացարձակ հոմանիշության մասին, քանի որ պատկերների տարբերությունը որոշակիորեն ազդում է դարձվածային միավորների իմաստների վրա:

Լեզվաբանական գրականության մեջ հստակորեն առանձնացնում են դարձվածային տարբերակայնությունը դարձվածային հոմանիշությունից: Ըստ Վ. Պ. Ժուկովի՝ դարձվածային հոմանիշները չափազանց մոտ իմաստ ունեցող դարձվածային միավորներն են, որոնք, որպես կանոն,

հարաբերակցվում են միևնույն խոսքի մասի հետևաքի են ընկնում մասնակի կամ միևնույն բառադարձվածային կազմով, սակայն տարբերվում են իրարից իմաստային կամ ոճական նրբերանգներով, երբեմն որոշ դարձվածքներում երկու հատկանիշները հանդես են գալիս միասին /Жыков, 1986: 178/:

Յոմանիշ դարձվածքներով հարուստ են հատկապես խոսակցական լեզուն, բարբառները, որտեղից էլ հաճախ անցնում են գրական լեզվին:

Այսպիսով, ուսումնասիրելով նյութը, կարելի է հանգել հետևյալ եզրակացության.

«Dios» և «diablo» բաղադրիչներով դարձվածքներին հատուկ են դարձվածային բազմիմաստությունը, տարբերակայնությունը և հոմանիշությունը:

Դարձվածային բազմիմաստությունը ենթադրում է դարձվածային միավորի նախադիր՝ նորիմաստների ձեռքբերում:

Դարձվածային տարբերակները միևնույն դարձվածքի տարբեր ձևերն են, որոնք ունեն գրեթե նույն բառաբերականական կազմը, արտահայտում են նույն իմաստը և հայտնի են նաև որպես նույնիմաստ դարձվածքներ՝ հիմնականում տարբերվելով մեկ կամ երկու բաղադրիչով, երբեմն նաև որոշ բաղադրիչների զեղչումով: «Dios» (աստված) և «diablo» (սատանա) բաղադրիչներով դարձվածքներում մենք առանձնացրել ենք կառուցվածքային-բերականական, բառային, ոճական, քանակական տարբերակներ՝ վերհանելով նրանց առանձնահատկությունները իսպաներենում՝ հայերենի գուցադրությամբ:

Դարձվածային հոմանիշներն արտահայտում են միևնույն իմաստը, սակայն տարբերվում են իրենց բառաբերականական կազմով. հոմանիշ դարձվածային միավորները իրենց կառուցվածքով կարող են համընկնել, տարբերվել կամ լինել մերձավոր: Վերջիններս կարող են առաջնապես տարբեր աղբյուրներից՝ տարբեր պատկերների հիման վրա: Յոմանիշ դարձվածքները փոխկապակցված են մեկ ընդհանուր իմակով (գերիմակով), սակայն տարբերվում են միմյանցից ոճական առանձնահատկություններով: Մեր լեզվանյութում մենք

առանձնացրել ենք. ա) տար-բեր բառային կազմ և քերականական կառուցվածք ունեցող դարձվածային հոմանիշներ, բ) մերձավոր կառուցվածք և մասնակիորեն նման բառային կազմ ունեցող և գ) ընդհանուր բաղադրիչ և նմանատիպ շարահյուսական կառուցվածք ունեցող դարձվածային հոմանիշներ:

Դարձվածային տարբերակները նույնն են իմաստով, ունեն նույն պատկերն ու լեզվում կատարում են միևնույն գործառնություն, իսկ դարձվածային հոմանիշները, առաջանալով տարբեր աղբյուրներից, կառուցվում են տարբեր պատկերների հիման վրա, սակայն նույնպես արտահայտում են նույն կամ մոտ իմաստներ:

Դարձվածքների իմաստային կառուցվածքի համակարգային հարաբերություններն արտացոլող այս երեք տեսակներն էլ ծառայում են լեզվի դարձվածային ֆունկցիոնալ հարստացմանը:

ՃԱՆՈՒԹԱԳՐՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ

1. Դարձվածաբանության մեջ դարձվածային միավորների իմաստային կադապարման հնարավոր կամ անհնար լինելու խնդիրը երկար տարիներ եղել է սուր վիճաբանությունների առարկա: Դարձվածքների պատճառաբանվածությունը քննելիս Ա. Նազարյանը անհրաժեշտ է համարում զանազանել երկու տարբեր՝ նկարագրության և սերման պլաններ (план описания և план порождения):

Սերման պլանում, երբ ուսումնասիրությունը կատարվում է տվյալ դարձվածային միավորների ձևից դեպի իմաստ, այսինքն՝ նախապես հայտնի է նրանց իմաստը, դարձվածքների և առձևերի մեծ մասի իմաստը անկանխատեսելի է: Չէ՞ որ վերջիններս երկրորդային անվանման միջոցներ են, այսինքն՝ արտաքին իրականության առարկաներն ու երևույթները անվանում են միջնորդավորված ձևով՝ ի տարբերություն բառերի, որոնք ունեն ուղղակի անվանողական իմաստ: Այդ մասին է վկայում նաև այն փաստը, որ դրանց գերակշիռ մասը անհասկանալի է նաև տվյալ լեզվի կրողներին և պահանջում է թարգմանություն:

Խնդիրն այլ է նկարագրության պլանում, երբ ուսումնասիրությանը կատարվում է բովանդակության նից դեպի ձև: Այս դեպքում արդեն տվյալ դարձվածքի իմաստը նախապես հայտնի է և հեշտորեն կապ է ստեղծվում այդ դարձվածքի և այն ստեղծող առարկայական իրադրության միջև: Այս դեպքում կարելի է պնդել, որ ներքին ձևն ունի պատճառաբանող իմաստ /Назарян, 1987/:

2. Ըստ ակադեմիկոս Գ. Ջահուկյանի՝ բաղադրական վերլուծությանը կապված է առաջին հերթին հնչույթաբանական վերլուծության սկզբունքները իմաստաբանության բնագավառ տեղափոխելու հետ: Արտահայտության պլանում հնչույթի և նրա տարբերակիչ հատկանիշների առանձնացումը բերում է այն գաղափարին, որ բովանդակության պլանում էլ կարելի է տարբերակել իմաստային համապատասխան միավոր և առանձնացնել միավորի տարբերակիչ հատկանիշներ /Ջահուկյան, 1989: 11-12/:

Ինչպես հնչույթաբանության մեջ տարբերակվում են հնչույթային (\$ոնեմատիկ) և տարբերակիչ (մերիզմատիկ) հատկանիշների մակարդակները, այդպես էլ փորձ է արվում որոշելու համապատասխան մակարդակները իմաստաբանության մեջ: Գ. Ջահուկյանը գտնում է նաև, որ դարձվածային միավորների իմաստային կաղապարում բաղադրական (կոմպոնենտային) վերլուծության մեթոդական եղանակով թույլ է տալիս ուսումնասիրել դարձվածքները իմաստային նվազագույն միավորի՝ իմակի տեսակետից /Ջահուկյան, 1989: 12/:

ԳԼՈՒԽՉՈՐՐՈՐԴ
«DIOS» (ԱՍՏՎԱՃ) ԵՎ «DIABLO» (ՍԱՏԱՆԱ) ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐՈՎ
ԴԱՐՁՎԱՃԱՅԻՆ ՄԻԱԿՈՐՆԵՐԻ ԱԶԳԱՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԱՌԱՆՁՆԱՅ ԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՍՊԱՆԵՐԵՆՈՒՄ
ՉԱՅԵՐԵՆԻ ՉՈՒԳԱԴՐՈՒԹՅԱՄԲ

4.1 Չոլրաքանչյուր քաղաքակրթություն, լեզվամշակութային համայնք բնորոշվում է իր ուրույն աշխարհընկալմամբ, որը դրսևորվում է տվյալ ժողովրդի գիտակցության մեջ: Ինչպես նշում է հայտնի ռուս լեզվաբան Վ. Միրկինը, «Աշխարհն անմիջականորեն չի արտացոլվում լեզվում, աշխարհն արտացոլվում է գիտակցության մեջ, իսկ գիտակցությունն ամրապնդում, կայունացնում, կոդավորում է այդ արտացոլումը պայմանական նշաններում» /Мыркин, 1986: 55/: Աշխարհի լեզվական պատկերը, որը ենթադրում է ժողովուրդների աշխարհընկալման գրավոր արտացոլում, առանձնացնում է իրականության՝ նրանց համար մեծ կարևորություն ունեցող հատվածները: Սակայն աշխարհի լեզվական պատկերում արտացոլվում է ոչ միայն օբյեկտիվ աշխարհը՝ իրականությունը, այլ նաև վերջինիս վերաբերյալ դատողությունները, տվյալ լեզվահամայնքի արժեհամակարգը և անհատի սուբյեկտիվ վերաբերմունքը, որոնք իրենց լեզվական արտացոլումն են գտնում յուրաքանչյուր լեզվին ներհատուկ

արտահայտչամիջոցներում: Վերջիններիս շարքում իրենց ուրույն տեղն են զբաղեցնում նաև դարձվածքները՝ իրենց յուրօրինակ ազգային առանձնահատկություններով:

Դարձվածային միավորների ազգային առանձնահատկությունները բացահայտում են այդ լեզվական միավորների սերտկապը տվյալ ժողովրդի մշակույթի և ազգային մտածելակերպի հետ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դարձվածային միավորը ազգային ուրույն առանձնահատկությամբ օժտված լեզվական միավոր է, որը կուտակում և սերնդեսերունդ փոխանցում է ժողովրդի մշակութային ներուժը /Зайнүүллина, 2005: 157/: Նրանցում են ամփոփված յուրաքանչյուր լեզվի ազգային ոգին և ինքնատիպությունը:

Ըստ Է. Սեփրի՝ մշակույթն արտացոլում է, թե տվյալ լեզվական հանրույթը ինչ է անում և մտածում, իսկ լեզուն՝ թե ինչ պես է մտածում /Сепир, 1993: 193/: Այստեղից հետևում է, որ որևէ լեզվի ազգային առանձնահատկությունները կարելի է բացահայտել՝ միայն ուսումնասիրելով վերջինիս լեզվամշակույթը:

Լեզվամշակութանության տեսանկյունից դարձվածքը մի մանրախոսքաշար (միկրոհամատեքստ) է, որն առաջանում է տվյալ լեզվակիրների մշակութային գիտակցության իմաստային տիրույթում արտալեզվական իրույթների մեկնաբանության արդյունքում, որը պատկանում է խոսքային ակտն իրականացնող սուբյեկտին, այն է՝ խոսողին և լսողին /Чикина, 2001: 3/:

Դարձվածքներում պատկերավոր ձևով արտացոլվում է լեզվական համայնքի պատմական և հոգևոր փորձը, որն ուղղակիորեն կապված է տվյալ լեզվի մշակութային ավանդույթների հետ: Յուրաքանչյուր լեզվի դարձվածապաշարը տվյալ ազգի մշակույթն արտահայտող գիտելիքների յուրօրինակ աղբյուր է: Ըստ Վ. Տելիայի՝ լեզվի դարձվածային ֆոնդը մի հայելի է, որում լեզվամշակութային համայնքը արտացոլում է ազգային ինքնագիտակցությունը /Телия, 1996: 9/: Տելիան կարծում է, որ դարձվածքների հիմքում ընկած պատկերները «թափանցիկ» են

տվյալ լեզվամշակութային համայնքի համար, քանի որ արտահայտում են վերջինիս բնորոշ աշխարհայացքն ու աշխարհընկալումը, որը համարվում է դարձվածային միավորի լեզվամշակութային առանձնահատկությունը:

Դարձվածային միավորները լեզվում ձևավորվում են ազգամշակութային կարծրատիպերի և չափանմուշների (էտալոնների) հիման վրա: Նրանց կրած տեղեկությունը հարանշանակորեն արտացոլում է գուգորդական-պատկերավոր կամ մշակութային հետ (չափանմուշների, խորհրդանիշների, կարծրատիպերի միջոցով): Տվյալ դարձվածային միավորները լեզվի ազգամշակութային առանձնահատկություններն արտացոլում են առավել վառ կերպով, քանի որ ներկայացնում են մշակութային հիմնավոր արժեքներ և հետագայում նույնիսկ դառնում են մշակութային կարծրատիպեր:

Դարձվածքի ազգամշակութային առանձնահատկությունները բացահայտելու համար նախ և առաջ հարկ է անդրադառնալ ազգամշակութային բաղադրիչին՝ դիտարկելով այն որպես լեզվական երևույթ: Սովորաբար լեզվաբանական գրականության մեջ շրջանառվում է երկու տեսակետ: Առաջին դեպքում ազգամշակութային բաղադրիչը ուսումնասիրվում է միայն դարձվածային միավորների բառ-իրույթներում: Իսկ երկրորդ դեպքում ազգամշակութային հասկացության մեջ ներառվում է լեզվական երևույթների շատավելի այն շրջանակ:

Այնուամենայնիվ հարկ է փաստել, որ ոչ բոլոր դարձվածային միավորներն են ազգամշակութային տեղեկություն կրողներ: Եթե այլ լեզուներում չի բացահայտվում որևէ դարձվածքի համարժեքը, հաճախ պատճառը ոչ թե ազգային ինքնատիպությունն է, այլ տարբեր լեզուներում երկրորդային անվանման միջոցների անհամապատասխանությունը: Հաճախ նույնիսկ միևնույն դարձվածային միավորը տարբեր լեզուներում արտահայտվում է տարբեր կերպ (բառային այլ կազմով և այլն):

Վ. Տելիան գտնում է, որ դարձվածքներն իրոք ունեն ազգամշակութային հարանշանակություն, քանի որ նրանց հատուկ է պատկերավոր պատճառաբանվածությունը, որն ուղղակիորեն

փոխկապակցված է տվյալ ժողովրդի՝ Լեզվակիրների աշխարհայացքի հետ/Телня, 1996: 214-215/:

Ըստ մեկ այլ տեսակետի՝ Լեզվի դարձվածային ֆոնոլոգիա և ազգային մտածելակերպի արտացոլման և ավագույն աղբյուրն է, որում ներկայացված են առասպելների, ավանդույթների, կրոնական ծիսակարգերի, սովորույթների, բարոյականության, վարք ու բարքի վերաբերյալ ազգային պատկերացումները: Իսկ ինչպես նշում է Բ. Ա. Լարինը, դարձվածային միավորները միշտ անուղղակի կերպով արտացոլում են ազգային մտածելակերպը, հասարակարգը և տվյալ դարաշրջանի գաղափարախոսությունը /Ларин, 1974: 167/:

Դարձվածքները ազգային մշակույթը կարող են արտահայտել՝

ա) իրենց ամբողջական իմաստով, քանի որ բաղադրիչների իմաստները երբեմն մթազնած են,

բ) իրենց կազմության մեջ մտնող առանձին բառ-բաղադրիչների իմաստներով,

գ) իրենց նախադասության իմաստներով (վերջիններս ազատ կապակցություններ են, որոնք հետագայում վերամաստավորվելով դարձել են դարձվածք և նկարագրում են ազգային որոշակի ավանդույթներ, սովորույթներ, առօրյա և մշակութային կյանքի մանրամասներ, պատմական իրադարձություններ և այլն):

Բոլոր Լեզուներում կան դարձվածային միավորներ, որոնք տվյալ Լեզվական համայնքի, այսինքն՝ Լեզվակիրների կողմից ընկալվում են որպես գուտ ազգային դարձվածքներ և ընկալելի չեն այլ Լեզվամշակույթի ներկայացուցիչներին: Միևնույն ժամանակ կան նաև այնպիսի դարձվածքներ, որոնք ընդհանուր են տարբեր Լեզվամշակույթների կրողների համար: Այսպիսով, յուրաքանչյուր Լեզվի դարձվածային ֆոնոլոգիա կարելի է առանձնացնել և՛ համընդհանուր գծեր, և՛ ազգային առանձնահատկություններ, որոնք դրսևորվում են ինչպես արտահայտության, այնպես էլ բովանդակության պլանում և հանդիսանում են տարբեր դարձվածային համակարգերի

տի պաբ ան ակ ան -գ ու գ ադր ակ ան ու ս ու մ ն ա ս ի թ ու թ յ ան կ արև ո թ չ ա փ ան ի շ :

Ս ո վ ո թ ա բ ար լ Ե գ վ ա բ ան ակ ան գ թ ակ ան ու թ յ ան մ Ե ջ առ ան ձ ն ա գ ն ու մ Ե ն ը ն դ - հ ան թ ու լ յ թ ն Ե թ ի Ե թ կ ու տ Ե ս ակ ` լ Ե գ վ ակ ան, ո թ ո ն ց շ ա թ ու մ առ ան ձ ն ան ու մ Ե ն ն ան Բ առ ա յ ի ն ը ն դ հ ան թ ու լ յ թ ն Ե թ ը, և հ աս կ ա գ ակ ան, ո թ ո ն ք հ ա յ տ ն ի Ե ն ն ան մ շ ակ ու թ ա յ ի ն ը ն դ հ ան թ ու լ յ թ ն Ե թ ան վ ա մ Բ :

Յ ու թ ա ք ան չ յ ու թ լ Ե գ վ ի դ ար ձ վ ա ծ ա յ ի ն Ֆ ո ն դ ու մ ը ն դ հ ան թ ու լ յ թ ն Ե թ ը ո թ ո շ վ ու մ Ե ն ն Ե թ լ Ե գ վ ակ ան և ար տ ալ Ե գ վ ակ ան մ ի շ ա թ ք գ ո թ ծ ո ն ն Ե թ ո վ `

ա) **ը ն դ հ ան թ ու լ յ թ ն Ե թ, ո թ ո ն ք ու ն Ե ն մ Ե կ ը ն դ հ ան ու թ ա ղ Բ յ ու թ,** օ թ ի ն ակ ` մ շ ակ ու թ ա յ ի ն ժ առ ան գ ու թ յ ու ն ը, ո թ ն ը ն դ հ ան ու թ Ե տ ար Բ Ե թ լ Ե գ ու ն Ե թ ի հ ամ ար (Ա ս տ վ ա ծ ա շ ու ն չ, առ աս ա Բ Ե լ ա Բ ան ու թ յ ու ն, հ ի ն ա շ խ ար հ ի գ թ ակ ան ու թ յ ու ն և ա յ լ ն): Օ թ ի ն ակ ` Dar a Dios lo que es de Dios y dar a César lo que es de César - Ա ս տ ծ ու ն ը ` ա ս տ ծ ու ն, կ ա յ ս թ ի ն ը ` կ ա յ ս թ ի ն /Ա վ Ե տ ար ան ը ս տ Մ ա թ և ո ս ի 22: 15-22, 23: 1-5/:

բ) **ը ն դ հ ան թ ու լ յ թ ն Ե թ, ո թ ո ն ք ա յ լ լ Ե գ վ ի ց կ աս ար ա ծ փ թ խ առ ու թ յ ու ն կ ամ պ առ ճ Ե ն ու մ** Ե ն, և ձ Ե ո ք Ե ն Բ Ե թ ո վ Ե լ ժ ո ղ ո վ ու թ ո ղ ն Ե թ ի պ ա տ մ ա հ աս ար ակ ակ ան և մ շ ակ ու թ ա յ ի ն փ թ խ ար ա Բ Ե թ ու թ յ ու ն ն Ե թ ի ար դ յ ու ն ք ու մ: Օ թ ի ն ակ ` Dios delante - Ա ս տ վ ա ծ առ ա շ, Dios sabe/ sabe Dios - Ա ս տ վ ա ծ գ ի տ ի, Dios guarde - Ա ս տ վ ա ծ պ ա հ ա պ ան: Տ ար Բ Ե թ լ Ե գ վ ա մ շ ակ ու լ յ թ ն Ե թ ու մ ն մ ան դ ար ձ վ ա ծ ք ն Ե թ ի գ ո յ ու թ յ ու ն ը, թ Ե թ և ս, կ ար ո ղ Ե պ առ ճ առ ա Բ ան վ Ե լ ա յ ն հ ան գ ա մ ան ք ո վ, ո թ հ ա վ ա տ ն առ աս տ վ ա ծ ` Ա մ Ե ն ա Բ ար ձ թ յ ալ ը, շ ա տ մ Ե ծ Ե, ո թ ի ց Բ ո լ ո թ մ ար դ ի կ խ ն դ թ ու մ Ե ն հ ո վ ան ա վ ո թ ու թ յ ու ն, ա շ ակ ց ու թ յ ու ն:

Ե թ Բ Ե մ ն մ ի ն ն ու լ յ ն դ ար ձ վ ա ծ ա յ ի ն մ ի ա վ ո թ ը մ Ե կ ա յ լ լ Ե գ վ ի դ ար ձ վ ա ծ ք ի հ Ե տ գ ու գ ա դ թ Ե լ ի ս Բ ո վ ան դ ակ ա յ ի ն ալ ան ու մ կ ար ո ղ Ե ու ն Ե ն ալ ը ն դ հ ան թ ու լ յ թ ու ն ն Ե թ, ս ակ ա յ ն տ ար Բ Ե թ ո վ Ե լ Բ առ ա յ ի ն կ ա գ մ ո վ, կ առ ու ց վ ա ծ ք ո վ և ա յ լ ն: Օ թ ի ն ակ ` Compañía de dos, compañía de Dios (Բ առ ա ց ի ` Ե թ կ ու ս ի ը ն կ Ե թ ակ ց ու թ յ ու ն ը, ա ս տ ծ ո ը ն կ Ե թ ակ ց ու թ յ ու ն ն Ե) - մ Ե կ ը մ Ե կ ո վ, Ե թ կ ու ս ը ա ս տ ծ ո վ: Ի ս կ յ ու թ ա ք ան չ յ ու թ կ ո ն կ թ Ե տ լ Ե գ վ ու մ ա գ - գ ա յ ի ն առ ան ձ ն ա հ ա տ կ ու թ յ ու ն ն Ե թ ն

առավել ապես բացահայտվում են դարձվածքի ներքին ձևի միջոցով: Օրինակ՝ Que Dios no nos oiga (բառացի՝ աստված մեզ չլսի) - Աստված մի արասցե:

Լեզվամշակութային ընդհանրությները կարող են արտահայտվել ինչպես մենաբառությներով, այնպես էլ ամբողջական բառակապակցություններով, որոնք ձևավորում են մշակութային պատկերի հիմքը: Վերջիններս մի կողմից վերաբերում են արտավերջական նյութական աշխարհին, մյուս կողմից՝ էթնոսի ազգամշակութային, բարոյախոսական խնդիրներին:

Խոսելով մենաբառությի մասին՝ անհրաժեշտ է նշել, որ բառը, նույնիսկ փոխաբերաբար կիրառվելիս, չի ստեղծում այն պատկերավորությունն ու հուզականությունը, ինչ դարձվածքը: Չայտնի է, որ յուրաքանչյուր լեզվի բառաֆոնդի զարգացման և հարստացման կարևոր նախապայմանը բառաշարահյուսական կազմություններն են, որոնց շարքում իր ուրույն տեղն է զբաղեցնում դարձվածքը: Ունենալով ավելի բարդ կառուցվածք, քան բառը, լեզվական համակարգում արտահայտելով կայուն իմաստ՝ դարձվածքներն ավելի արտահայտիչ են դարձնում լեզվի ազգային ինքնությունը /Копыленко, Попова, 1989: 148/: Երբեմն այլ ազգեր տվյալ ժողովրդի ազգային մտածելակերպի վերաբերյալ պատկերացում կազմում են դարձվածային միավորների միջոցով:

Այսպիսով, համընդհանուրն ու ազգայինը դարձվածքներում միջտհանդես են գալիս սերտորեն փոխկապակցված՝ կազմելով դիալեկտիկական միասնություն: Ընդհանուրն արտահայտվում է բովանդակության ավանում, իսկ ազգայինը՝ արտահայտության ավանում՝ դարձվածքի ներքին ձևում:

4.2 «Dios» (աստված) բաղադրիչով դարձվածային միավորների ազգամշակութային առանձնահատկությունները

Քանի որ տվյալ ենթագլխում քննությունը կատարվել է լեզվամշակութաբանության տեսանկյունից, նախևառաջ հարկ ենք համարում մեկնաբանել «հասկացույթ» եզրույթը որպես

լեզվական երևույթ և այն առանձնացնել «հասկացողություն» գաղափարից: «Հասկացույթ» եզրույթը լեզվաբանական գրականության մեջ դեռևս չունի միանշանակ մեկնաբանություն, որի պատճառով տարբեր լեզվաբաններ փորձում են այն վերափոխադրել և մեկնաբանել նորովի: Ըստ Ն. Կրասավսկու՝ ի տարբերություն հասկացողության՝ հասկացույթը ոչ միայն կարելի է պատկերացնել, այլ զգալ և ապրել /Красавский, 2001/, քանի որ տվյալ լեզվական երևույթը հասկացողության և վերջինիս վերաբերյալ մարդու գնահատողական պատկերացումների հանրագումարն է: Իսկ ըստ Ս. Խ. Լյապինի տեսական մեկնաբանության՝ «հասկացույթի խորքում առկա ծում է հասկացողությունը» /Ляпин, 1997: 27/: Յուր Ստեպանովը սահմանել է հասկացույթն ավելի լայն տեսանկյունից: Ըստ նրա՝ «հասկացույթը կարծես մշակույթի թանձրույթ լինի մարդու գիտակցության մեջ. դա այն է, ինչի տեսքով մշակույթը մտնում է մարդու մտավոր աշխարհ: Իսկ մյուս կողմից, հասկացույթն այն է, ինչի միջոցով մարդը՝ շարքային և սովորական, այլ ոչ թե մշակութային արժեքների ստեղծող, մտնում է մշակույթի մեջ, իսկ որոշ դեպքերում ազդում նրավրա» /Степанов, 1997: 40/: Այսպիսով, կարելի է սահմանել հասկացույթը որպես մշակույթի և մարդու փոխկապակցում, որտեղ մեկնառանց մյուսի գոյությունն չունեն:

«Dios» (աստված) հասկացույթը՝ որպես կարևորագույն մշակութային ընդհանրույթ, համարվում է համաշխարհային կրոնների հիմք և եղել է գիտական տարբեր ոլորտների ուսումնասիրության առարկան: Յուրաքանչյուր լեզվամշակույթում, ելնե-լով կրոնական առանձնահատկություններից, աստծո վերաբերյալ գաղափարները տարբերվում են, քանի որ յուրաքանչյուր էթնոս երկնային արքայի՝ Արարչի վերաբերյալ ստեղծում է իր ուրույն պատկերը: Աստվածադավանների պատկերացմամբ (թեիստ)՝ աստված ամենակարող է, բազմաստվածության դավանողները հավատում են մեկից ավելի աստվածների գոյությանը, որոնք իրավահավասար են, պանթեիստների մոտ աստված տիեզերքն է, տիեզերքն էլ՝ աստված, աթեիստները մերժում են աստծո գոյությունը և այլն

/Арутюнян, 2008: 115/: Իսկ ըստ քրիստոնեական հավատամքի՝ աստված՝ Արարիչը, որը ստեղծել է երկինքն ու երկիրը, հանդես է գալիս երեք կերպարով՝ որպես Յայր, Որդի և Սուրբ հոգի (սուրբ երրորդության դավանանք), և աստված հենց սուրբ հոգին է, որը փրկեց աշխարհն իր որդու՝ Յիսուս Քրիստոսի միջոցով:

«Աստված»՝ որպես առասպելական, աստվածաշնչյան կերպար, մեծ չափով արտացոլված է դարձվածային միավորներում, քանի որ լեզվի դարձվածային ֆոնդում մեծ տեղ ունեն առասպելների, ավանդույթների, կրոնական ծիսակարգերի, սովորույթների վերաբերյալ ազգային պատկերացումները: Մեծ է նաև քրիստոնեության՝ որպես պետական կրոնի ազդեցությունը քննվող երկու լեզուների դարձվածային համակարգերի վրա:

Իսպաներենի և հայերենի դարձվածային համակարգերի ազգամշակութային առանձնահատկությունները բացահայտելու համար կարևոր է ուսումնասիրել քրիստոնեության և քրիստոնեական մշակույթի ազդեցությունը տվյալ լեզուների ազգամշակութի և դարձվածային համակարգի վրա: Վերջինիս ազդեցությունը երկու դեպքում էլ անհերքելի է, իսկ մեր քննության առարկա դարձվածային միավորները հանդես են գալիս որպես աշխարհընկալման ազգամշակութային կարծրատիպեր:

Տեղին է մեջբերել մի քանի օրինակ «Cristo» (Քրիստոս) բաղադրիչով, որտեղ վառ կերպով արտացոլվում են իսպաներենի և հայերենի ազգամշակութային առանձնահատկությունները կրոնական գաղափարախոսության տեսակետից:

Յետաքրքիր է նշել, որ իսպանացիների կողմից Քրիստոսը երբեմն ընկալվում է որպես հասարակ մարդ (օժտված մարդկային բոլոր հատկանիշներով), որի հետևանքով նրա անունը հաճախ է հանդիպում առօրյա խոսակցական տարբեր դարձվածային միավորներում (օրինակ՝ Como a un cristo dos pistolas – շատ վատ): Նման դեպքերում այն այլևս չի ընդգծում աստծո գաղափարը, վերածվում է հասարակ անվան (նաև «խաչելություն» իմաստով) և նույնիսկ գրվում է փոքրատառ: Օրինակ՝ Ni cristo padre (ոչ ոք), Ni cristo lo apea (նրան չես կարող համոզել):

Իսպաներենում «Cristo» բաղադրիչով կազմված դարձվածային միավորները կիրառվում են նաև բացասական հարանշանակությամբ: Օրինակ՝ Dejar/poner a alguien hecho como un cristo - վատ վերաբերվել; Ponerse hecho/ como un Cristo - կեղտոտվել; Poner a uno como un cristo - նախատել, վարկաբեկել, դժան ծեծի ենթարկել: Երբեմն տվյալ բաղադրիչով դարձվածային միավորները կատարում են ժխտական դերանվան գործառույթ, օրինակ՝ Ni Cristo/ Ni cristo padre (ոչ ոք): Հանդիպում են նաև դեպքեր, երբ վերջիններս հանդես են գալիս տեղի պարագայի գործառույթով: Օրինակ՝ Donde Cristo dio las tres voces (շատ հեռու), A todo Cristo (ամենուրեք) և այլն:

Հայ իրականության մեջ, իհարկե, Քրիստոսը նախ և առաջ ընկալվում է որպես աստծո որդի՝ աստված, օրինակ՝ «Իսեր Քրիստոսի» (իսեր աստծո), «Քրիստոս գիտենալ» (աստված վկա), «Քրիստոսի սիրուն» (աստծո սիրուն), Քրիստոսի/աստծու քով ուղարկել (սպանել՝ երկինք ուղարկել) և այլն, սակայն կան նաև այնպիսի դարձվածքներ, որտեղ չի մատնանշվում աստվածայինը: Օրինակ՝ «Մարդ Քրիստոսի/ աստծու» (հասարակ մարդ), «Քրիստոս կփսփսա» (բացարձակ լռություն է):

Հայերենում «Քրիստոս» բաղադրիչով դարձվածքները չեն կիրառվում ժխտական դերանվան գործառույթով: Հազվադեպ են հանդիպում նաև բացասական հարանշանակությամբ օրինակներ, օրինակ՝ Քրիստոսի քով ուղարկել - սպանել:

Որոշ լեզուներում «Քրիստոս», «աստված», «սատանա» բաղադրիչները նույն-իսկ համարվում են տաբու, և լեզվական համայնքը խիստ սահմանափակում է վերջիններիս հաճախակի կիրառությունը: Տվյալ բաղադրիչներով դարձվածային միավորների իմաստային կառուցվածքի վերլուծությունը մեզ թույլ է տալիս իսպաներենում ի հայտ բերել քրիստոնեական հասկացությունների ազգային առանձնահատկությունները՝ հայերենի գուգադրությամբ՝ քննելով դարձվածային իմաստների հիմնանշանակիչ և գուգորդական-պատկերային մակրոբաղադրիչների փոխազդեցությունը: Սա թույլ է տալիս նաև աշխարհի լեզվական պատկերում բացահայտել քրիստոնեական

մշակույթին վերաբերող պատկերները, խորհրդանիշների ոչ բացահայտ իմացություն և մշակութային հարանշանակութունները:

Ուսումնասիրվող երկու լեզուներում վերոհիշյալ հասկացույթները (աստված, սատանա) քրիստոնեական աշխարհընկալման մեջ իրենց գոյություն մեծ կարևորությամբ անքակտելի են իսպանացի և հայ ժողովուրդների ազգային աշխարհընկալումից:

Աստծո՝ որպես գերբնական էակի գաղափարն արծարծելիս ընկալողների մոտ գերազանցապես առաջանում են գեղագիտական ապրումներ, ցանկություն՝ թափանցելու վերջինիս բովանդակության մեջ և բացահայտելու աստծո՝ անբացատրելի գոյի էությունը: Այս հասկացույթն ուսումնասիրելիս գրեթե անհնար է գերծմնալ փոխաբերական կիրառությունից, քանի որ այն խոսքը դարձնում է ավելի պատկերավոր՝ հաղորդելով մեծ հուզարտահայտչականություն: Ինչպես նշում է Վ. Ա Մասլովան, «հենց փոխաբերությունն է դարձնում վերացականը դյուրըմբռնելի և հասկանալի» /Маслова, 2001: 91/: Եվ այդ է պատճառը, որ «աստված» բառադրիչով կազմված դարձվածային միավորները երկու լեզվամշակույթում էլ հաճախ հանդես են գալիս այլաբերական իմաստներով:

Արարիչ, Ամենաստեղծ կամ Երկնային արքալինելուց բացի, ի ցույց է դրվում նաև աստծո՝ հասարակ մարդ լինելու գաղափարը՝ օժտված մարդկային բոլոր հատկանիշներով: Այսինքն՝ աստիճանաբար աստծուն վերագրվում են հասարակ մարդուն բնորոշ գծերն ու առանձնահատկությունները: Մարդը դառնում է պաշտամունքի առարկա, ամենակարող և ամենակալ:

Դեռևս հնուց ակնհայտ է բնության երևույթների նկատմամբ մարդափոխաբերականացման (անտրոպոմորֆիզացիա) միտում, հետագայում այն կիրառվեց նաև գերբնական, աստվածային էակների նկատմամբ: Ստորև ներկայացված դարձվածային միավորները նույնպես դասակարգվում են ըստ աստծուն բնորոշ մարդկային հատկանիշների /Арутюнян, 2008: 135-142/:

Լսողություն

Իսպաներեն

Հայերեն

Que dios no nos oiga, A quien no habla, no le oye dios, Dios lo oiga y el pecado sea sordo	Աստված լսեց, Աստված ինձ չլսի, Աստված բերանիցդ լսե, Աստված, որ ազռավի ձայնը լսի, վարդևորին ձյուն կգա
--	---

Տեսողություն

Իսպաներեն

Հայերեն

Dios ve las trampas	Աստու՛ւ աչքից ընկած, Աստված աչքը մեկի վրա քաղցր պահել, Աստու՛ւ աչքը մեկի վրա քաղցր մնալ /լինել, Աստու՛ն աչքին հանձնել, Աստու՛ւ աչքին ձգվիլ, Աստված սարը կտեսնե, ձյունը կդնե, Աստված մարդու սրտին կաչե, ան կյորակուտա
---------------------	--

Ձայն, խոսք

Իսպաներեն

Հայերեն

Hablar dios a uno, Llamar dios a uno, Llamarle dios a juicio/a su seno/para sí, No llamar dios a uno por el camino de, No llamar dios a uno por ese camino, No dar a uno la palabra de dios	Աստված իր մոտ կանչեց, Աստված իր խոսքն ասաց, Այսինչի բերանով աստված է խոսում, Աստված կանչե, քովը երթամ
---	---

Յիշողություն

Իսպաներեն

Հայերեն

	Աստված թող մոռանա, Աստուծոց մոռացված, Աստված բարին հիշե, Աստված հիշել
--	---

Կամք

Իսպաներեն

Հայերեն

Amanecer a lo que dios quiera, Como dios quiere, Siendo dios servido, El hombre propone, Dios dispone, A de Dios	Աստուծո կամք, Ինչպես աստված կամենա, Եթե աստված կամենա, Մարդ ենթադրում է, աստված տնօրինում, Աստված, որ տա, չի հարցնի ում աղենես, Աստված, որ տա, գիժ ու խելոք չի հարց-նե
--	--

Ըստ մարդափոխաբերականացման չափանիշների՝ աստուծուն կարելի է վերագրել նաև մարդկային այլ հատկանիշներ՝

Շնայլ ու թյ ու ն

Իսպաներեն

Հայերեն

Dios amanezca a Ud con bien, Dios da ciento por uno, Dios dará, Dios mejorará sus horas, Cuando dios quiere con los aires llueve, Cuando dios quiere con todos los vientos llueve	Աստված երկու ձեռքով է տվել, Աստված կտա, Աստված, որ տվեց, Էլ չափը չի հարցնում, Աստված, որ տա աջ ու ձախին մտիկ չի տա, Աստված, որ տա մի ակոսից էլ կտա, Աստված չի խնայել, Աստված տվել է ու չի խնայել
---	--

Անարդար ու թյ ու ն (առիթից օգտվել ու անկարող ու թյ ու ն)

Իսպաներեն

Հայերեն

<p>Dios da galletas/ bizcochos al que no tiene dientes, Da dios pañuelos al que no tiene narices, Da dios almendras al que no tiene muelas, Da dios almendras al que no tiene quijadas, Da dios habas a quien no tiene quijadas</p>	
---	--

Արդարամտու թյուրն (կամ արդար որոշում, հույս, ելք)

Իսպաներեն

Հայերեն

<p>Dios, que da la llaga, da el remedio /la medicina, De Dios abajo cada cual vive con su trabajo, Palo dado ni Dios lo ha quitado</p>	<p>Աստված արդար է, Աստված դարտուլեր, դարմանլե տլեր է, Աստուծն էլ Խարդավանք չի գիտա, Աստված մարդու սրտին կաշե, անկյորա կուտա, Աստված մարդուց մեծեքով առնում է, մյուսով տալիս, Աստված մինչև մի դուռ փակ անի՝ մյուսը բաց կանի, Աստված, որ ագռավի ձայնը լսի, վարդևորին ձյուն կգա, Աստված սարը կտեսնե, ձյունը կդնե, Հախը նհախին Աստված չի թողնի, Վերևն Աստված կա</p>
--	---

Անխելքու թյուրն, հիմարու թյուրն

Իսպաներեն

Հայերեն

<p>Andar en dos pies por la misericordia de dios, Ser uno como dios le ha hecho (como dios quiere), Ser uno como dios, que todo lo adivina /sabe</p>	<p>Աստուծո՛ւ աղոթած, Աստուծո՛ւ ց պատժված, Աստուծո՛ւ ց սպանված, Աստուծո՛ւ ավանակ, Աստուծո՛ւ եզ, Աստուծո՛ւ էշ, Աստուծո՛ւ կով, Աստուծո՛ւ հիմար, Աստված ուշքն ու միտքն առել է</p>
--	---

Դաժանություն

Իսպաներեն

Հայերեն

<p>No tener perdón de dios</p>	<p>Աստուծո՛ւ երեսից ընկած, Աստուծո՛ւ երեսից թախած, Աստուծո՛ւ երկյուղը սրտում չկա, Աստուծո՛ւ կրակ, Աստուծո՛ւ պատիժ, Աստուծո՛ւ պեծ ու կրակ, Աստուծո՛ւ կրակը թափել, Աստված մեկի գլխին տալ</p>
--------------------------------	--

Ինչպես իսպաներենում, այնպես էլ հայերենում «dios» (աստված) բաղադրիչով դարձված քերթը հաճախ օգտագործվում են որպես սաստկական-հուզարտահայտչական երանգավորում ունեցող կայուն կապակցություններ, որոնք արտահայտում են՝

Խնդրանք (ներողամտություն, փրկություն հայցելու նպատակով) կամ գանկուլություն

Իսպաներեն

Հայերեն

<p>Fuera sea de dios, Así dios te dé gloria, Dios me perdone, Mi padre es dios, Por el amor de dios</p>	<p>Աստուծո՛ւ անվանը մեռնեմ, Աստուծո՛ւ անունը տալ, Աստված ազատի, Աստված այն հավը չխոսեցնե, Աստված այն օրը չցուցանե, Աստված ավելի բեթարից ազատե, Աստված ավելի</p>
---	---

	<p>վատից ազատի/թափի, Առ Աստված հասնի, Աստված փրկի, Աստված գոմշի փախը հետոև հեռու անի, Աստված զերծ պահի, Աստված թշնամուս ցույց չտա, Աստված խնայի, Աստված կսիրես, Աստված հեռու տանի/ անի, Աստված մեկի մեղքերին թողու թ-յ ուն տա, Տեր ողորմյա</p>
--	--

Նույն խմբում կարելի է առանձնացնել հիմնականում **բարեմաղթանք** արտահայտող դարձվածքներ՝ նկատի առնելով, որ նման դարձվածքների արտահայտած իմաստային երանգները բազմազան են:

Իսպաներեն

Հայերեն

<p>Permita dios, Plega a dios, Que es una bendición de dios, Que de Dios goce, Que de Dios haya, Dios delante, Dios mediante, Dios pague la caridad y aumente la devoción, Dios te/ nos la depare buena, Dios te guíe, Dios sea en esta casa, Dios sea contigo, Dios nos coja confesados, Dios nos tenga de su mano, Dios te ayude, Que Dios le ampare, que Dios le socorra, Mejor te ayude Dios, Dios y ayuda, Como Dios sea servido, Siendo Dios servido, Si Dios es servido, Que Dios le bendiga</p>	<p>Աստված առաջ, Աստված երկու բարին մեկը տա, Աստված ընդ քեզ, Աստված թող հաջողու թյ ուն տա, Աստված թուրը կտրուկ անի, Աստված իմ կյանքից կտրե, ձերի վրա ավելացնե, Աստծո լույսը հասնի, Աստծո լույսը մեկի վրա իջնի, Աստված խերդ հոգուդ դեմ բերե, Աստված խերն անի, Աստված խեր տա, Աստծո խեր խաբարն այսինչին, Աստված կռներիդ ուժ տա, Աստված անի, Աստված ձեռքը մեկի գլխից անպակաս անի, Աստված մեկի դատաս-տանը քաղցր անի, Աստված (քեզ) երկար արև/ կյանք տա,</p>
---	---

	Աստված բարին տա, Աստված բարին հիշե, Աստված բարի վայելում տա, Աստված քեզ հետ, Աստված պահապան, Աստված պահի/պահպանի, Աստված քաղցր աչքով մտիկ անի, Աստծո աջը մեկի վրա քաղցր պահել, Աստված է մեզ զորավիգ, Աստծո թևի տակ, Յուսաստված
--	--

Անեծք, սպառնալիք

Իսպաներեն

Հայերեն

Cuerpo de dios, Voto a Cristo	Աստված անիծի, Աստված անունդ կտրի, Աստված արևդ սպանի, Աստված այսինչի դուռը բերի, Աստված այսինչին վերու, Աստված բելեդ տա, Աստծուց գտնի, Աստված դիվանդ անի/տեսնի, Աստված այսպիսի օրը կտրի, Աստված թող քո տիրոջը վրա ցավի, Աստծու կրակը վրեդ թափվի, Աստծու կրակը քեզ, Աստված վիզը կտրի, Աստված տունդ քանդի, Աստծուց գտնի, Աստծո կրակը քեզ
-------------------------------	---

Երդում

Իսպաներեն

Հայերեն

Así dios me salve, ¡Aquí de Dios! Como dios está en los cielos, Como dios es mi padre, Como hay dios, Como Dios/ Cristo es mi padre, En	Աստծո առաջ ուխտ, Աստվա՛ծ երկի՛նք, Աստված է վկա, Աստված, էն կանաչ մեռունը, Ես իմ աստվածը, ճշմարիտ աստված,
--	--

dios y en conciencia, En dios y en mi alma, En dios y en mi ánima, Juro a Dios, Poner a dios por testigo, Por dios, Par dios, Por esta gracia de dios, Voto a dios/Cristo	Աստված միջնորդել, Աստծո տակին ուխտը ըլլի, Աստվածները վար բերել, Աստվածները իջեցնել, Աստծո կշտին սարթ ըլնի
---	---

Մեծ գարմանք

Իսպաներեն

Հայերեն

¡Ay Dios! ¡Oh Dios! ¡Dios mío! ¡Válgame Dios! Eche Ud romero que pasa Dios, Jesús mil veces, Como Dios/ Cristo es mi padre, Hijo de Dios, Buenos días te dé Dios, Marica, por la mañana	Աստված իմ, Մեղա աստծո/Մեղա քեզ աստված, Տեր աստված, Տեր խնդա, Տեր իմ աստված, Աստված մեղա մեղա քեզ, Դու քո աստված, Աստված լայեղդ տա
---	---

Մահվան գուլժը

Իսպաներեն

Հայերեն

Dar (uno) el alma a Dios, Entregar el alma a Dios, Entregar la osamenta a Dios, Estar (uno) con Dios, Estar dando cuenta a Dios, Gozar (uno) de Dios, Llamarle Dios (a juicio, a su seno, para sí), Rendir (uno) el alma a Dios, Sin decir Jesús	Աստծո առյանը երևիլ, Առ աստված Աստծու մոտ փոխվիլ, Աստված իր մոտ կանչել, Իրեն աստծո գիրկը ձգել, Աստված կանչե, քովը երթամ, Աստված հոգին առնել, Աստծու ն հանդիպել, Աստված տանել, Աստծու քով գնալ, Աստծու մոտ գնալ, Աստծու մոտ ուղարկել
--	--

Իսպաներենում «dios» բաղադրիչով դարձված քերթը գուլգակցվում են նաև կլիմայական երևույթների հետ (երկարատև հորդ անձրևներ)։

Իսպաներեն

Հայերեն

Amaneció agua dios, Agua dios, Llueve de dios, Agua dios y venga mayo	
---	--

Այս ափսոսվ, մեր ուսումնասիրությանը ցույց է տալիս, որ իսպաներենը հարուստ է «dios» բաղադրիչով կազմված մարդափոխաբերական դարձվածային միավորներով: Նույն պատկերն ուրվագծվում է նաև հայերենում: Այս դարձվածքներն ընդգծում են աստծուն վերագրվող մարդկային հատկանիշների կարևորությունը երկու լեզվամշակույթներում:

<u>Յատկանիշ</u>	<u>Իսպաներեն</u>	<u>Հայերեն</u>
Լսողություն	+	+
տեսողություն	+	+
ձայն, խոսք	+	+
հիշողություն	-	+
կամք	+	+
դաժանություն	+	+
անխելքություն	+	+
անարդարություն	+	-
արդարություն	+	+
շռայլություն	+	+

Հայերենում տվյալ հատկանիշների վերլուծությունը ակներև է դարձնում այն փաստը, որ հայ լեզվամշակույթի ներկայացուցիչները հիմնականում հույսը դնում են աստծո վրա որպես գերբնական էակի՝ ամենակարող և ամենաստեղծ, նրա գթասրտության, առատաձեռնության վրա: Թերևս, սաքրիստոնեության մեծագույն ազդեցությունն է հայ լեզվամշակույթի վրա, որը քարոզում է հնազանդություն, ան-սահման հավատ առ աստված, աստվածավախություն և այլն:

Իսպաներենի լեզվամշակույթում նույնպես ակնհայտ է նույն երևույթի՝ Ամենաբարձրյալի պաշտամունքը: Տվյալ լեզվամշակույթի ներկայացուցիչների մոտ «dios» (աստված)

հասկացույթը որոշ դարձվածքներում հարաբերակցվում է նաև հոր գաղափարի հետ՝ աստված՝ որպես Յայր:

Իսպաներեն	Յայերեն
Como Dios/ Cristo es su <u>padre</u> , A la de Dios que es mi <u>padre</u> :	

Իսպաներենի լեզվամշակույթում առանձնահատուկ ընդգծվում է նաև աստծո որդու՝ որպես աստված լինելու գաղափարը, որն էլ, թերևս, կարող է պատճառաբանվել սուրբ երրորդության՝ Յոր, Որդու և Սուրբ հոգու եռամիասնության դավանանքով: Յայերենում արձանագրվել է ընդհամենը մեկ դեպք:

Իսպաներեն	Յայերեն
Hijo de Dios, Varón de Dios	Աստծո որդի

Այսպիսով, մեր ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս բացահայտել իսպաներենում «dios» բաղադրիչով կազմված դարձվածքների ազգամշակութային մի շարք առանձնահատկություններ՝ հայերենի գուգադրությամբ՝ ելնելով այս երկու լեզուների և մշակույթների ազգային ինքնատիպությունից:

4.3 «Diablo» (սատանա) բաղադրիչով դարձվածային միավորների ազգամշակութային առանձնահատկությունները

«Սատանա»-ն՝ դժոխքի արքան՝ որպես մշակութային ընդհանրույթ, գուգահե-ռաբար ուսումնասիրվում է «աստված» հասկացույթի հետ: Ըստ կրոնական մի շարք ուսմունքների (հատկապես հուդայական և քրիստոնեական)՝ այն համարվում է աստծո ու նրա հավատարիմ ուժերի գլխավոր հակառակորդը, չար ոգիների տիրակալ և ու դժոխքի թագավորը: «Սատանա» բառը ծագել է

հին եբրայ երենից և նշանակում է թշնամի, չարախոս, բանսարկու, հակառակորդ, սադրիչ, իսկ, որպես հասկացույթ՝ հանդես է գալիս որպես աստծո թշնամի: Հայ տնի է նաև խավարի իշխան և մահվան հրեշտակ անուկներով: Սովորաբար ներկայացվում է որպես աստծո ստեղծած հրեշտակ, ապա խռովարար՝ երկնքից երկիր արտաքսված, որը չունի մեղքերի քավության և թողության հնարավորություն:

Տարբեր աղբյուրներում սատանան հանդես է գալիս տարբեր կերպարներով՝ օձի (եբրայական աղբյուրներ), տձև գիշատիչ գազանի (գրականության մեջ, 11 դար)՝ մերկ, սրածայր ականջներով, եղջյուրներով, կենդանու թաթերով և պոչով:

Ինչպես արդեն նշվել է, սատանան աստծո հակառակորդն ու թշնամին է: Նրա առեղծվածային կերպարը բազում վերլուծությունների առարկա է եղել: Սատանա են համարվում բոլոր այն չար հրեշտակները, որոնք փորձում են կեղծ և չար մտքեր սերմանել: Երբեմն սատանա կամ սատանու հետնորդներ են անվանվում նաև մարդիկ, որոնք առանձնանում են իրենց հոգու չարությամբ: Որոշ աղբյուրներում սատանան հենց ինքն է ներկայանում մարդու կերպարանքով, որը չարիք է սփռում աշխարհով մեկ: Այսինքն՝ սատանան ոչ այլ ինչ է, քան հասարակ մարդ:

Տարբեր լեզվամշակույթներում սատանան սովորաբար հանդես է գալիս չար մարդու կերպարով, որին վերագրվում են մարդկային գրեթե բոլոր հատկանիշները: Ստորև քննենք այդ հատկանիշները.

Լսողություն

Իսպաներեն

Հայերեն

El diablo sea sordo	Սատանի ականջը խուլ է
---------------------	----------------------

Տեսողություն

Իսպաներեն

Հայերեն

Quebrar el ojo al diablo	Սատանի աչք, Սատանի աչք ուկեցող, Սատանի աչքը քոռ/ Սատանան քոռանա, Սատանի
--------------------------	---

	աչքը քաղցր լինի մեկի վրա
--	--------------------------

Խեղք

Իսպաներեն

Հայերեն

	Սատանի խեղք, Սատանի խեղք ունեցող
--	-------------------------------------

Լեզու, խոսք

Իսպաներեն

Հայերեն

Hablar con el diablo	Սատանի լեզու ունենալ, Սատանի լեզու ունեցող
----------------------	---

Մարմին

Հայերենում սատանայի մարմինը խորհրդանշող դարձվածային միավորները գերազանցապես կազմաբանական (սոմատիկ) են՝ ընդգծելով մարմնի տարբեր մասերը կամ օրգանները.

Իսպաներեն

Հայերեն

Tener uno el demonio en el cuerpo, Meterle uno el demonio en el cuerpo	Սատանան փորը մտնել, Սատանան փորից դուրս գալ, Սատանան կողը մտնել, Սատանան սիրտը՝ հոգին մտնել, Սատանան մտնել պինչը, Սատանի ոտ, Սատանի պոչ, Սատանի ետևի կրուկ
---	---

Մազ

Իսպաներեն

Հայերեն

Pelos de demonios, (Ser capaz de) con- tarles los pelos al diablo, Pelos de diablo	Ամեն մի մազի տակին օխող սատանա կա, Ամեն մի մազից մի սատանա կախաիլած
---	---

Դեմք

Իսպաներեն	Հայերեն
Poner cara de demonios	

Տգեղու թյուլ

Իսպաներեն	Հայերեն
	Սատանի հետ ծնված, Սատանի հետ ծնած, Վարագույրի վրայի սատանա, Քարե ձորի սատանա

Ինչպես իսպաներենի, այնպես էլ հայերենի լեզվամշակույթներում «սատանա» հասկացույթը անմիջականորեն հարաբերակցվում է նաև մի քանի այլ գաղափարների հետ.

Անեծք

Իսպաներեն	Հայերեն
Al diablo, A todos los diablos, Pipa de diablos, Que se lo lleven los diablos, Al demonio, El demonio cargue contigo, Mil demonios que te lleven, Vete con dos mil demonios, Echar uno demonios	Անեծք քեզ, չա՛ր սատանա, Նալ լա՛թ քեզ, չա՛ր սատանա/ Նալ ե՛թ թյուր շեյթան, Սատանին նահլաթասել, Սատանան գլխին խռով կենալ, Սատանի ծոցը, Գրողն երե-սիդ, Գրողի ծոցը մտնես

Հատկապես որպես անեծք՝ մահվան չարամաղթույթյուն, հայերենում մեծ թիվ են կազմում «գրող» բաղադրիչով դարձվածքները /Սուքիասյան, Գալստյան 1975: 177/

Իսպաներեն	Հայերեն
	գրողը տանի (քեզ, նրան, նայլն), գրողի բաժին, գրողի գաս, գրողի խեղդուկ /տարուկ, գրողի ծոց, գրողի ծոցը մտնես, գրողի տարած, գրողն երեսիդ, գրողու

	մահ, գրող ու ցավ, գրող ու տես (ու տի)
--	---------------------------------------

Բացական չական արտահայտությունները՝ գարմանք, գայրույթ, վախկայուն արտահայտություն համար

Իսպաներեն

Հայերեն

Qué diablos, Qué demonio(s), Qué diantres, Qué..ni qué demonio, ¡Cómo diablos! El demonio que le aguante, (El) demonio que le resista, Demonio que le entienda, Por vida de Satanás, ¡Ni el demonio!, ¡Ni qué demonio!	Գրողը տանի, Սատանան տանի
--	--------------------------

Չայրույթ

Իսպաներեն

Հայերեն

Darse al diablo, Estar dado al diablo, Llevarse a uno el diablo, Revestírsele a uno el diablo /todos los diablos, Estar uno que se lo lleven los demonios, Ponerse como un demonio, Darse a Satanás, Darse al demonio, Darse a to-dos los demonios	
--	--

Որպես դիվական էակի՝ սատանային սովորաբար վերագրվում են նաև հետևյալ հատկանիշները.

Խորամանկություն

Իսպաներեն

Հայերեն

El diablo es sutil, hila y gorda, Hablar uno con el diablo, Inventar uno con el diablo/ Satanás/ Lucifer, Idear con el diablo, Tener uno el diablo /demonio en	Սատանի ծոցի ճուղի գողանալ, Սատանից առաջ աշխարհ եկած, Սատանից առաջ ծնված, Սատանայից յոթ օր առաջ աշխարհ
--	---

<p>(dentro del) el cuerpo, (De) la piel de demonio/ Satanás/ Barrabas, Engañar al demonio, Estudiar con el demonio, Traer las del demonio, Es el mismo Satanás/ Barrabas o Lucifer, Idear (inventar) con el demonio</p>	<p>եկած/ շոտ ծնված, Սատանի առջի ճիվը լինել, Սատանային բնից հանող, Սատանոթյուն բանեցնել, Սատանի դուռը գնալ, Սատանի ետևի կրունկ/ ոտք, Սատանին թարս նալել, Սատանին թարս նալող/ պայտող, Սատանի լակոտ/ ձագ/ պիպել / ճուտ, Սատանա խաբող, Սատանա խաղացնող, Սատանի ծիծ կերած, Սատանի ծիծ/ կաթ ծծել, Սատանի կոտոշ, Սատանա կտրել, Սատանի կտոր, Սատանի հետ սոխու սխտոր ուտող, Սատանի հետ ծնունդ նստել, Սադոնի հետ խնամոթյուն անել, Սատանի հետ մի կտոր հաց կիսած լինել, Սատանի հունարունի, Սատանի ճախարակ, Սատանի մանգաղ գողացող, Սատանա նալող/ պայտող, Սատանին շապիկ կարել, Սատանի չեքոճ, Սատանի պոչ, Սատանի սլաք, Սատանի վիլակ անող, Սատանի վիլակ մանել, Սատանին տրեխ հագցնել, Սատանի առջի ճիվը լինել</p>
---	---

Խորամանկոթյունը (հատկապես հայերենում) հաճախ գուգակցվում է չարաճըճիոթյան, ճարտարոթյան հետ: Այս առումով կարող ենք առանձնացնել «սատանա» բաղադրիչով հետևյալ դարձվածքները՝

Իսպաներեն

Հայերեն

Idear (inventar) con el demonio	Սատանի պիպել, Սատանի սրոց, Սատանի վիլակ, Սատանի տակից քաշած, Սատանի լակոտ /ծագ /ճուտ, Սատանի ճախարակ, Սատանին ջուրը տանել՝ ծարավ հետքերել:
---------------------------------	--

Համարու թյուկ

Իսպաներեն	Հայերեն
	Սատանի ձին հեծնել /թամբել /թամքել, Սատանի ձին նստել, Սատանի ձին նստել ցած չգալ, Սատանի ձիու վրա նստել

Երկերեսանիու թյուկ

Իսպաներեն	Հայերեն
Detrás de la cruz está el diablo, Diablo predicador	Դուրսը քահանա, Ներսը սատանա, Ներսը սուրբ, դուրսը սատանա, Տունը քահանա, դուրսը սատանա, Ներսը սուրբ, դուրսը սատանա

Իսպանական լեզվամշակույթում սատանան երբեմն պատկերվում է որպես հիմար կերպար, որն անգործության մատնվելիս հիմարություններ է գործում.

Իսպաներեն	Հայերեն
Cuando el diablo no tiene qué hacer con el rabo mata/ caza moscas, Cuando el diablo no tiene qué hacer, desbarata la casa y la vuelve a hacer, Cuando el diablo no tiene qué hacer, saca lo suyo al sol y mata moscas	

Ըստ մեր վերլուծության արդյունքների՝ սատանայի առաջին և ամենաբնորոշ հատկանիշը խորամանկությունն է: Այդ հատկանիշն առավել բնորոշ է հայերենի դարձվածային միավորներին, որոնց շարքում աչքի է ընկնում նույն հարանշանակու-թյամբ օժտված կազմաբանական դարձվածքների մի սովորական ված:

Հարկ է փաստել նաև, որ իսպաներենի դարձվածաբանական ֆոնդում սատանան հաճախ հանդես է գալիս իր հոմանիշային հարուստ շարքով (Demonio, Satanás, Barrabas, Lucifer)՝ միաժամանակ նաև փաստելով դարձվածային տարբերակների առաջացմանը:

Սովորաբար գեղարվեստական գրականության մեջ, ինչպես նաև այլ աղ-բյուրներում (այդ թվում նաև դարձվածքներում), սատանան պատկերվում է ոչ մի-այն որպես խորամանկ կերպար, այլ նաև որպես չարանենգ խաբեբա, որի հիմնական նկրտումը խաբեությունն է.

Իսպաներեն

Հայերեն

<p>Cuando el diablo reza, engañarte quiere, El diablo harto de hacer daño se metió ermitaño, El diablo harto de carne, se metió a fraile, El rosario al cuello y el diablo en el cuerpo</p>	<p>Սատանի դիմաց խալիկ կուխադացնե, Սատանի մահլեն քյանդրբազությունն անել, Սուտունենն փափուլները թարսնե-րը կարել, Սատանի ճանապարհը մտնել, Սատանին թարսնայել, Սատանակտրել</p>
---	---

Իսպաներենի դարձվածային միավորներում «diablo» հասկացույթը առանձնահատուկ կերպով գուգակցվում է նաև կնոջ կերպարի հետ՝ համարելով նրան սատանայական կերպար (էակ), նույնիսկ ավելի խորամանկ ու ճարպիկ, քան ինքը՝ սատանան:

Իսպաներեն

Հայերեն

Las mujeres saben más que el diablo, Lo que el diablo no puede hacer, la mujer lo hace fácilmente	
---	--

Իսպանական լեզվամշակույթում «diablo» բաղադրիչով դարձվածքները արտահայտում են նաև կլիմայական երևույթներ, որը որպես լեզվական երևույթ, խորթ է հայերենին. տվյալ լեզվամշակույթում «սատանա» հասկացույթը չի գուցակ-ցվում կլիմայական երևույթների (անձրև, ձյուն) հետ: Յետաբոլոր է նշել, որ հետևյալ օրինակում diablo բառը միաժամանակ հանդես է գալիս և՛ արական, և՛ իգական սեռով:

Իսպաներեն

Հայերեն

Están peleando el diablo y la diabla, El diablo se está riendo	
---	--

Սատանան իսպաներենում խորհրդանշում է նաև աշխարհի ծայրը (որպես ամենինչի ավարտ).

Իսպաներեն

Հայերեն

Donde el diablo perdió su poncho, Don- de el diablo perdió la cachimba, Estar por la loma del diablo	
--	--

«Dios» և «diablo» բաղադրիչներն իսպաներենի դարձվածային միավորներում երբեմն հանդես են գալիս միասին և, ընդգծելով մարդկանց միջանձնային վատ հարաբերությունները, խոսքին հաղորդում են սաստկական բնույթ և ուրույն երանգավորում.

Իսպաներեն

Հայերեն

Tan amigos como dios y el diablo, Como Cristo y Satanás	
--	--

Այս ափսոսվ, մեր վերլուծության արդյունքները փաստում են, որ ի տարբերություն իսպաներենի՝ հայերենում գերազանցում է դարձվածային միավորների թիվը, որտեղ սատանան օժտված է մարդկային հատկանիշներով:

Հատկանիշ

	<u>Իսպաներեն</u>	<u>Հայերեն</u>
Լսողություն	+	+
Տեսողություն	+	+
Խելք	-	+
Խոսք	+	+
Դեմք	+	-
Մարմին	+	+
Մազ	+	+
Տգեղություն	-	+
Խորամանկություն	+	+
Չարաճիություն	+	+
Համառություն	-	+
Երկերեսանիություն	+	+
Հիմարություն	+	-
Խաբեություն	+	+

Հարկ է փաստել նաև, որ իսպաներենում երկու բաղադրիչների առկայության դեպքում երբեմն “dios” բաղադրիչի փոխարեն հանդես է գալիս “cruz” (խաչ) բաղադրիչը: Օրինակ՝ Como la **cruz** y el **diablo**/ Estar como la **cruz** y el **demonio** (բառացի՝ ինչպես խաչն ու սատանան, այսինքն՝ շատ վատ հարաբերություններ ունենալ): Թերևս, «խաչ» հասկացության կիրառությունն «աստծո» փոխարեն պատճառաբանվում է այն պարզ հանգամանքով, որ խաչը և աստվածառանցքային դեր են կատարում քրիստոնյա ժողովրդի գիտակցության և լեզվամտածողության մեջ: Խաչն այստեղ հանդես է գալիս որպես աստծո գոյության խորհրդանիշ: Իսպաներենի հավաքագրված նյութի սահմաններում առկա է նաև մեկ այլ օրինակ՝ ¡Cristo\$ բաղադրիչով՝ “Como Cristo y Satanás” (բառացի՝ ինչպես

Քրիստոսն ու սատանան, այսինքն՝ շատ վատ հարաբերություններ ունենալ), որտեղ «diablo» բաղադրիչը փոխարինվել է իր հոմանիշով (Satanás): Այս դարձվածքն իսպաներենում հանդես է գալիս իր դարձվածային հոմանիշով՝ “Como Cristo con los mercaderes” (բարացի՝ ինչպես Քրիստոսը վաճառականների հետ): Վաճառականներն այս դարձվածքում, թերևս, նույնացվում են սատանայի հետնորդների հետ, քանի որ վերջիններս, ինչպես սատանան, աստճո որդու՝ Յիսուս Քրիստոսի թշնամիներն են, որոնք վերածել էին Աստճո տունը առևտրի տան /Ավետարան ըստ Յովհաննեսի 2: 13-23/: Այլ կերպ ասած՝ «աստված» և «սատանա» երկնային էակները տվյալ դարձվածային միավորներում հանդես են գալիս որպես հասարակ մարդիկ, որոնք չեն կարողանում լեզու գտնել միմյանց հետ:

Այսպիսով, սույն վերլուծությունը փաստում է, որ «dios» (աստված) և «diablo» (սատանա) բաղադրիչներով կազմված դարձվածային միավորների մեծամասնությունը հիմնվում է փոխաբերության վրա, որը, հանդիսանալով դարձվածային միավորների իմաստային վերափոխման միջոցներից մեկը, դարձվածքի գոյությունն ախտաբանականներից է:

Իսպաներենի և հայերենի դարձվածային միավորներում դրսևորվող ընդհանրույթներն ու ազգային առանձնահատկությունները, իրավամբ, բացահայտում են այդ լեզուների լեզվամշակութային առանձնահատկությունները՝ վերհանելով «dios» (աստված) և «diablo» (սատանա) հասկացույթների յուրահատկությունները դարձվածային միավորներում:

ԳԼՈՒԽՅԻՆԳԵՐՈՐԴ

«DIOS» (ԱՍՏՎԱԾ) ԵՎ «DIABLO» (ՍԱՏԱՆԱ) ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐՈՎ ԴԱՐՁՎԱՃԱՅԻՆ ՄԻԱԿՈՐՆԵՐԻ ԴԻՊԼԱՃԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒ ՄՆԵՐԸ ԽՈՍՔՈՒ Մ

Արդի լեզվաբանական գրականության մեջ մեծ ու շարունակական են արժանանում դարձվածային միավորների ոճական գործածությանը առնչվող խնդիրները, և հատկապես կարևորվում է լեզվի հաղորդակցական հայեցակերպը: Դարձվածային միավորը՝ որպես անտարալուծելի և կայուն միավոր, որը լեզվում բացառում է տվյալ դարձվածքի կազմության մեջ մտնող բաղադրիչների ձևախախտումը կամ փոխատեղումը, խոսքում՝ կոնկրետ հեղինակների ստեղծագործություններում, հաճախակի ենթարկվում է մի շարք փոփոխությունների, այն է՝ փոխակերպումների, որոնք ձևախախտում են դարձվածքի ինչպես կառուցվածքային, այնպես էլ իմաստային ամբողջականությունը՝ վերջինիս գործաբանական ներգործությունն ու ժգնացնելու նպատակով: Յեղիևակը կամ գրողը փոխակերպումների միջոցով ընթերցողին է փոխանցում այս կամ այն տեղեկություն՝ միաժամանակ հարստացնելով լեզվի բառաֆոնդը. դարձվածապաշարը

համալրվում է փոխակերպման մի շարք նոր միջոցներով, որոնք թույլ են տալիս բացահայտել դարձվածքների լեզվախոսքային հնարավորությունները, որոշ դեպքերում նաև դարձվածքի՝ իմաստային բովանդակությունը պահպանելու կամ փոփոխելու ունակությունները:

Լեզվաբանական գրականության մեջ դարձվածային փոխակերպումները եր-բեմն նույնացվում են դարձվածային ձևախախտումների (դիպլածային փոխակերպումներ) հետ: Նեղ առումով ուսումնասիրելիս դարձվածային ձևախախտումը, որը հայտնի է նաև դեֆորմացիա անունով, հստակորեն սահմանազատվում է դարձվածային փոխակերպումից՝ համարվելով վերջինիս տարատեսակ: Սակայն լայն առումով՝ դարձվածային ձևախախտումներն ու փոխակերպումները նույնացվում են, քանի որ երկու դեպքում էլ դարձվածային միավորը ենթարկվում է փոփոխության: Դարձվածային փոխակերպումը ենթադրում է ընդունված նորմայից դուրս կատարված յուրաքանչյուր խախտում, այդ թվում նաև ոճական /Гусейнова, 1997: 7/: Իսկ դարձվածային միավորների ձևախախտումը վերջինիս բառային կազմի, շարահյուսական կառուցվածքի և իմաստի ոճական այնպիսի էական փոփոխությունն է, որի դեպքում սովորական՝ կայուն ձևը հակադրվում է իր դիպլածային փոփոխված ձևին» /Арнольд, 1973: 167/:

Դարձվածքները փոխակերպումների են ենթարկվում երեք հիմնական պատճառով: Առաջին պատճառը մարդկային հիշողության սահմանափակ բնույթն է, ըստ որի ավելի նախընտրելի է ավանդական արտահայտությունների փոխակերպումը, որը խթանում է լեզվի տնտեսումն ու խոսքի գունագեղությունը, քան նոր արտահայտությունների ստեղծումը: Երկրորդը պատճառը լեզվի չիմացությունն ու դարձվածքը ճիշտ չընկալելու խնդիրն է: Տվյալ փոխակերպումը լեզվաբանական գրականության մեջ զուգահեռաբար կրում է «պակասավոր» (դեֆեկտավոր) փոխակերպում անունը: Իսկ երրորդ դեպքում դարձվածքները փոխակերպվում են կանխամտածված՝ հատուկ ներգործությունն իրականացնելու նպատակով: Վերջինս հայտնի է *անհատական-հեղինակային փոխակերպում* անվամբ, որն ընդլայնում է

հեղինակային մտքի սահմանները և օգնում բացահայտելու ստեղծագործական ունակությամբ:

Ինչպես ցույց են տալիս դարձվածային միավորների ոճագործական ուսումնասիրությամբ, դարձվածքներից որոշները ձևախախտում են ավելի հաճախ, քան մյուսները, քանի որ օժտված են խոսքում ձևախախտվելու ավելի մեծ ունակությամբ: Գ. Կորպաս Պաստորը նշում է, որ յուրաքանչյուր լեզվական միավոր կարող է ենթարկվել ձևախախտման, սակայն վերջիններիս շարքում առանձնանում են հիմնականում առածների և դարձվածային միավորների ձևախախտումները, որոնք խոսքին հաղորդում են հուզարտահայտչական երանգավորում /Corpas Pastor, 1996: 234/: Իսկ ըստ մեկ այլ տեսակետի՝ խոսքում այդօրինակ ունակությամբ օժտված են հիմնականում հատկաբանությամբ (իրոպմները) կամ կայուն փոխաբերությունները: Ըստ Ախմանովայի՝ հատկաբանությամբ ու կայուն փոխաբերություններն ունեն վառ արտահայտված ոճական առանձնահատկություններ, որոնց շնորհիվ խոսքի մեջ ներմուծում են խաղի, հումորի կամ շինծուության տարրեր /Ахманова, 1969: 165-166/: Կայուն փոխաբերությունների ձևախախտումը խոսողի ինքնուրույն ստեղծագործությամբ չէ, այլ այդ ոլորտում տեղի ունեցող գործընթացների արդյունք, որը մասնավորապես բացատրվում է նրանով, որ կայուն փոխաբերության բաղադրիչներն արդեն հստակորեն ընկալվում են որպես պոետնցիալ, իրենց իմաստներով անկախ բառեր, որոնք որոշվում են ոչ թե իրենց նախնական իմաստով, այլ կայուն փոխաբերության ամբողջ իմաստով /Изотова, 1992: 8/:

Դարձվածային միավորների փոխակերպումներն ուսումնասիրելիս Գ. Կորպաս Պաստորը առանձնացրել է երկու տեսակ՝ ներքին և արտաքին՝ համարելով վերջիններս մի կողմից որպես դարձվածային միավորների մանիպուլյացիա, որոնք չեն ազդում դարձվածքի ձևական կառուցվածքի վրա, մյուս կողմից, որպես ձևախախտումներ, որոնք ազդում են դարձվածքների առանձին բաղադրիչների կայունության և կառուցվածքի վրա: Ըստ արտաքին փոխակերպումների՝ ձևը պահպանվում է անփոփոխ և

խախտվում է իմաստը: Իսկ ներքին փոխակերպումների դեպքում ստեղծագործական ձևախախտումներն անմիջականորեն վերաբերում են դարձվածքի ձևական կողմին՝ ազդելով վերջինիս բաղադրիչների կամ բաղադրիչների միջև գոյություն ունեցող շարահյուսական հարաբերությունների վրա /Corpas Pastor, 1996: 235, 240/:

Ակադեմիկոս Գ. Ջահուկյանը նույնպես ուսումնասիրել է փոխակերպումները և փաստել, որ «փոխակերպման մեթոդը լրացնում է անմիջական բաղադրիչների մեթոդը սերման պրոցեսի նկարագրությամբ և շարահյուսական կառուցվածքի և նրա իմաստային կողմի բացահայտմամբ» /Ջահուկյան, 1974: 503/:

Ջահուկյանն ուսումնասիրել է փոխակերպումները կառուցվածքափոխափոխության տեսանկյունից՝ ընդգծելով վերջիններիս սերման գործընթացն ու փոփոխվելու ունակությունները: Սակայն նա ուսումնասիրել է փոխակերպումները՝ թափանցելով նաև ձևաբանական (խոսքի մասերի ներքին և արտաքին փոխակերպումները) և շարահյուսական մակարդակների խորքերը (նախադասությունների ներքին և արտաքին փոխակերպումները) և նշել, որ «ստորոգման քննության մեջ փոխակերպումն ընդհանրապես ոչ այլ ինչ է, եթե ոչ սուբյեկտիվ ընկալման, հաղորդման բնույթի և վերաբերմունքի տարբերության դրսևորում՝ կառուցվածքային տարբերությունների ձևով. կառուցվածքային այդ տարբերությունները դրսևորվում են (փոխակերպման լայն ըմբռնման դեպքում) քերականական բնույթի միավորների հավելման ու փոխարկման, նախադասության անդամների տեղափոխության և գեղջման ձևով» /Ջահուկյան, 1969: 125-126/:

Չայտնի դարձվածաբան Ա. Նազարյանը նույնպես մանրամասն քննության է առել դարձվածային միավորների փոխակերպման միջոցները (տասնվեց տեսակ) և նշել, որ «դիվածային փոխակերպումների հիմնական նպատակը որոշակի ոճական ներգործությունն է» /Назарян, 1987: 244/:

Նա ուսումնասիրել է դարձվածային փոխակերպումները իմաստային, կառուցվածքային և իմաստակառուցվածքային տեսանկյունից և ներկայացրել

դարձվածային միավորների ամբողջական կամ մասնակի ձևախախտման հետ կապված հնարավոր բոլոր փոխակերպումները:

Ելնելով վերոհիշյալ սկզբունքներից՝ մեր փաստական նյութի ուսումնասիրում-թյան արդյունքում առանձնացրել ենք փոխակերպումների ինը տեսակ.

ա. Դարձվածքի բաղադրիչների փոխարինում,

բ. Փոփոխական/փոփոխելի բաղադրիչների ներգրավում դարձվածքի կազմի մեջ առանց բառային կազմի փոփոխության,

գ. Կրկնակի առկայացում (դարձվածքի ուղիղ և փոխաբերական իմաստների համաժամանակյա իրացում),

դ. Անդրադարձ՝ ոճական բանադարձում (գեղարվեստական տեքստում դարձվածքի մեկ և ավելի բաղադրիչների ներգրավում),

ե. Դարձվածային միավորների գեղջված կիրառություն,

զ. Դարձվածային գուգամետություն (դարձվածային միավորների նորացում մի քանի միջոցով),

է. Դարձվածային միավորների կազմալուծում, որը ենթադրում է ինչպես բառային կազմի, այնպես էլ կառուցվածքային փոփոխություն,

ը. Դարձվածային կազմի ընդլայնում,

թ. Բաղարկություն (երկու դարձվածքների բաղադրիչների միությունը մեկ ընդհանուրի մեջ):

Այժմ առանձին-առանձին քննենք «dios» (աստված) և «diablo» (սատանա) բաղադրիչներով դարձվածքների դիպվածային փոխակերպման վերոնշյալ դեպքերը, ըստ մեր փաստական նյութի: «Dios» (աստված) և «diablo» (սատանա) բաղադրիչներով դարձվածքների դիպվածային փոխակերպումները քննվել են Միգել Սերվանտեսի, Լուիս Վելես դե Գեվառայի, Ֆեռնանդո դե Ռոխասի, Գաբրիել Գարսիա Մարկեսի, Խուան Խոսե Բենիտեսի, Պար Լագերկվիստի ստեղծագործություններում, ինչպես նաև դրանց հայերեն թարգմանություններում:

Ա) Դարձվածային միավորների բաղադրիչների փոխարինումը դարձվածքի դիպվածային փոխակերպման լայն տարածում գտած միջոցներից է: Այն ամենահետաքրքիր միջոցներից է, որը հեղինակի ստեղծագործական միտքը խթանելու լայն

հնարավորություններ է ընձեռում: Յեղիևակը, Ելևելով տեքստի ոճական առանձնահատկություններից և փորձելով դարձվածային միավորները հարմարեցնել համատեքստի հաղորդակցական նպատակադրումներին, փոփոխության է ենթարկում դարձվածքի բառային կազմը, ընդ որում, փոխարինող բառը փոխարինվող բաղադրիչի հետ կարող է մտնել ամենատարբեր հարաբերությունների մեջ: Փոխարինող բառի ընտրությունը խոսքում որոշվում է ըստ համատեքստի բովանդակության: Դարձվածային միավորների բաղադրիչների փոխարինումը Գ. Կորպաս Պաստորը նույնպես բնորոշում է որպես դարձվածքի որևէ բաղադրիչի կամ բաղադրիչների փոխարինում այլ բառային միավորով կամ միավորներով՝ հիմնվելով վերջիններիս միջև գոյություն ունեցող իմաստային կապի և համատեքստային հարաբերությունների կարևորության վրա/Corpas Pastor, 1996: 243/:

Դարձվածային միավորների բաղադրիչների փոխարինումը մեծամասամբ կարող է տեղի ունենալ ըստ դարձվածքի գոյականական բաղադրիչի (ոչ նորմատիվ) փոփոխության, որի դեպքում գոյականական անդամը փոխարինվում է իր հոմանիշով: Օրինակ՝

1) **Bendito seáis Vos, Señor-** quedé yo diciendo-, que dais la enfermedad y ponéis el remedio (Anónimo, Lazarillo, p. 56).

2) Aunque nunca he estado más sin reputación que ahora en poder de este vinagre, a quien por trato me entregaron mis propios compañeros, porque los traía al retortero a todos, como dice el refrán de Castilla, y cada momento a los más agudos les **daba gato por demonio** (Luis Veles de Guevarra, Diablo cojuelo, p. 94).

3) Pues estando en tal aflicción, cual **plega al Señor** librar de ella a todo el fiel cristiano, y sin saber darme consejo, viéndome ir de mal en peor, un día que el quitado, ruin y lacerado de mi amo había ido fuera del lugar, llegóse acaso a mi puerta un calderero, el cual yo creo que fue angel enviado a mí por la mano de Dios (Anónimo, Lazarillo, p. 42).

4) Calla niña; que la mejor señal que este señor ha dado de estar rendido es haber entregado las armas en señal de rendimiento; y el dar, en cualquiera ocasión que sea, siempre fue indicio de generoso pecho. Y acuérdate de aquel refrán que dice: **“Al cielo rogando, y con el mazo dando”** (Miguel de Cervantes, La gitanilla, 36).

Տվյալ օրինակներում **Dios** (աստված) բաղադրիչի փոխարեն որպես հոմանիշ հանդես են եկել **Señor** (Տեր) և **cielo** (երկինք) բաղադրիչները: **Señor-ը Dios** բաղադրիչի հասկացական հոմանիշն է, իսկ **cielo-ն՝** dios de los cielos դարձվածային միավորի կրճատ տարբերակը: Իսկ **dar gato por demonio** դիպվածային փոխակերպման մեջ **liebre** (նապաստակ) բաղադրիչի փոխարեն հանդես է գալիս **demonio** (սատանա) բաղադրիչը: Բաղադրիչների փոխարինումը տվյալ դեպքում խոսքին հաղորդում է հոնգարտահայտչական և ոճական երանգավորում:

Առանձնահատուկ ուշադրություն է արժանի հայերենում «աստված վկա» դարձվածային միավորի «աստված» բաղադրիչի հոմանիշային շարքի ուսումնասիրությունը՝ ըստ դարձվածային միավորի բաղադրիչների փոխարինման մեթոդի:

Օրինակ՝

1) Կատակում եմ, **աստված վկա** ես այդ խոստովանում եմ և կարծում եմ, որ երկնքում կնոջից բացի ուրիշ տիրակալ չկա, չնայած նամեզ հետե ապրում (\$եննանդո դե Ռոխաս, Սելեստինա, Էջ 26):

2) Իսկ ծերությունը, **հավատս վկա** միայն հիվանդությունների բույն է, մտորումների ապաստան, ու խռովությունը ընկեր, անվերջ տրտմություն, անբուժելի վերք, որի համար անցյալը ցավ է, ներկան՝ տառապանք, իսկ ապագան՝ տխուր հոգսեր, ծերությունը մահվան դրկիցն է, խարխուլ մի խրճիթ, որ կտուրի բոլոր ծակերից կաթում է, եղեգնի բարակ ցողուն, որ թեթև բեռից անգամ ճկվում է (\$եննանդո դե Ռոխաս, Սելեստինա, Էջ 62):

3) **Կյանքս վկա** մայրի՛կ, պե՛տք չի, տե՛ր աստված, մի՛ թող, որ այդպիսի բան անեմ (\$եննանդո դե Ռոխաս, Սելեստինա, Էջ 97):

4) **Մահս վկա** որ աստծուն պարտք եմ, ավելի և ավելի ներերեսիս մի ապոակ հասցնեիր (\$եննանդո դե Ռոխաս, Սելեստինա, Էջ 98):

«Կյանքս վկա», «հավատս վկա» և «մահս վկա» երդման բանաձևերում «կյանք», «հավատ» և «մահ» բաղադրիչները փոխարինել են «աստված» բաղադրիչին՝ հանդես գալով որպես

վերջինիս համատեքստային հոմանիշներ, և անմիջապես գուգորդվում են աստծո գաղափարի հետ, քանի որ միայն աստուծուն է բնորոշ որպես Ամենաստեղծ, Ամենակարող, պարգևել կյանք կամ մահ, իսկ կրոնական հավատամքի տեսանկյունից աստված հենց հավատն է գերբնականի նկատմամբ: Այլ կերպ ասած՝ տվյալ բաղադրիչների ընտրությունը վերոնշյալ դիպվածային փոխակերպումներում այնքան էլ կամայական չէ: Իսկ **ս** դիմորոշ հոդի կիրառությունը տվյալ արտահայտություններին սաստկական երանգավորում է հաղորդում:

Չայերենում, բացի «աստված» բաղադրիչի հոմանիշային շարքից, քննենք նաև «սատանա» բաղադրիչով դարձվածային միավորի փոխակերպված մի տարբերակ, որի համար որպես հիմք նորից ծառայել է բաղադրիչների փոխարինման մեթոդը.

1. Ա՛յ, **գրողի բաժին դառնաա**, փորձանք գագլխիդ, սարսափելի ու անտանելի ցավ կպնի քեզ, որ երանի տաս տանջալի ու դաժան մահին, որին ես ինքս եմ սպասում (\$եռնանդո դե Ռոխաս, Սելեստինա, էջ 23):
2. Այ գրո՛ղը քեզ տանի, դու մի գլուխխոսում ես ուրիշների վնասի մասին, իսկ ես ոչ մեկին չեմ վիրավորում, **գարշահոտ և մահացու ժանտախտի բաժին դառնաա**, անիծյալ նախանձ, այդ է քո ողջ ընկերությունը, որ կապել ես իմ և Սելեստինայի հետ, կորի՛ր գրողի ծոցը (\$եռնանդո դե Ռոխաս, Սելեստինա, էջ 78):

Ինչպես երևում է, **գրող** (սատանա) բաղադրիչով դարձվածային միավորը (գրողի բաժին դառնաա) տվյալ ստեղծագործությունում ենթարկվել է փոխակերպման. «գարշահոտ և մահացու ժանտախտի բաժին դառնաա» դիպվածային արտահայտության մեջ **ժանտախտ** բաղադրիչը հանդես է գալիս որպես **գրող** բաղադրիչի համատեքստային հոմանիշ և տվյալ համատեքստից դուրս այլ ևս չի կատարում վերջինիս հոմանիշի գործառնությունը: Այս դարձվածային փոխակերպումներում դիտարկվում է նաև դարձվածային միավորի ընդլայնման դեպք՝ **գարշահոտ և մահացու** ածականական բաղադրիչների, այլ կերպ ասած՝ մակդիրների հավելարկմամբ՝

որպես «Ժանտախտ» գոյականական անդամի և րացու մներև վերջինիս իմաստը ոճականորեն երանգավորող և սաստկացնող միավորներ: Ինչպես տեսնում ենք, անարգական-հանդիմանական իմաստով գործածվող վերոհիշյալ դարձվածային միավորի դիպվածային փոխակերպումները երանգավորում են խոսքը՝ այն դարձնելով ավելի արտահայտիչ:

Բ) Դարձվածքների փոխակերպման երկրորդ միջոցը, որը նույնպես ունի լայն կիրառություն գեղարվեստական գրականության մեջ, փոփոխական բաղադրիչների ներգրավումն է դարձվածքի կազմի մեջ՝ առանց բառային կազմի փոփոխության: Վերջինս ենթադրում է դարձվածային միավորի ելակետային տարբերակի մեջ մեկ կամ մի քանի հավելյալ բառային միավորների (իրենց ուղիղ իմաստներով) ներգրավում, որոնք իրենց արտահայտած իմաստներով կապված են համատեքստի բովանդակությանը՝ դարձվածային միավորին հաղորդելով հավելյալ հարանշանակություններ, իսկ խոսքին՝ ոճական որոշակի երանգավորում: Ընդունված է կարծել, որ դարձվածքի կազմի մեջ «օտար» բառային միավորների ներգրավումը ոչ մի կերպ չի ազդում դարձվածքի ամբողջական իմաստի վրա: Շ. Բալին այս առնչությամբ նշում է, որ «դարձվածային միավորի բաղադրիչները կարող են հեռանալ նախադասության կազմի մեջ մտնող այլ բառերով, որից դարձվածային միավորի ամբողջականությունը ոչ մի կերպ չի ձևախախտվում» /Балли, 1961: 99/:

Լեզվաբանական գրականության մեջ «ներբերում» (вклинивание) եզրույթն առաջին անգամ կիրառվել է Ա. Կուլինի կողմից: Նա, ուսումնասիրելով անգլիական դարձվածաբանությունը, դարձվածքի կազմում առանձնացնում է նոր բառերի ներբերումն ու ձևախախտումը՝ որպես դարձվածային միավորների տարածակավորվածության դիպվածային ցուցիչներ: Շատ հազվադեպ նա այդ շարքում է դասում նաև հավելադրումը (փոփոխական բաղադրիչների ավելացումը դարձվածքի սկզբում կամ վերջում) և դիտարկում երեք ցուցիչներն էլ որպես դարձվածքի փոխակերպման միջոցներ /Кунин, 1970: 175/:

Դարձվածքի կազմի մեջ ներգրավվող բաղադրիչները կարող են պատկանել տարբեր բառաբերականական կարգերի (գոյական, ածական, դերանուն և այլն), իսկ հիմնական բաղադրիչները կարող են հեռանալ ոչ միայն շնորհիվ բառային միավորների, այլ միջանկյալ արտահայտությունների, դարձվածքների, նույնիսկ միջանկյալ նախադասությունների: Առավել հաճախ որպես ներգրավվող բաղադրիչ-ներ հանդես են գալիս մակբայները: Օրինակ՝

Martina le contó quién era, y por qué estaba allí para el resto de sus días, a pesar de que había perdido la voz de tanto proclamar su inocencia. Cuando le preguntó a Sierva María las razones de su encierro, ella pudo decirle apenas lo que sabía por su exorcista: **-Tengo adentro un diablo** (Gabriel García Márquez, Del demonio y de otros demonios, p.101).

Տվյալ դեպքում ներգրավված բառային միավորը մակբայական է (adentro), որն ավելի է սաստկացնում դարձվածքի հուզարտահայտչական երանգավորումը:

Գ) Փոխակերպման երրորդ միջոցը դարձվածքի կրկնակի առկայացումն է, որը բառի կամ դարձվածային միավորի գործածությունն է այնպիսի համատեքստում, երբ տեղի է ունենում նրանց բառացի (ուղղակի) և փոխաբերական իմաստների գույ-գահեռ ընկալում /Նազարյան, Բաղդասարյան, 2000: 137/, այն է՝ դարձվածքի իմաստի և վերջինիս նախատիպի իմաստի բախում, որի դեպքում դարձվածքի կամ վերջինիս բաղադրիչներից մեկի իմաստը բառայնանում է: Որպես կանոն, գեղարվեստական գրականության մեջ դարձվածային միավորների կրկնակի առկայացումը կատարում է ոճական, այն է՝ հուզարտահայտչական գործառնություն խոսքին հաղորդելով ծաղրական, հեգնական և այլ երանգավորում և իրականանում է բացառապես համատեքստային իրադրության հիման վրա՝ խթանելով այդ երկու իմաստների բախումը: Սակայն, բացի ոճական գործառնությունից, կրկնակի առկայացումը ընդգծում է դարձվածային միավորի և համատեքստի միջև գոյություն ունեցող իմաստային կապը: Օրինակ՝

1) Լսում է, գրողի ծոցը, թողլսի, կախվել է պառավի բերանից ու իլացել, կուրացել է ու համրացել, դարձել է անխոս դերասան: Եթե

Նրա վրա բռնուցք էլ բարձրացնենք, կասի թե **ձեռքներս պարզում եմք աստծուն**, որ նա սիրային գործերին հաջողություն բերի (\$Յեռնանդո դե Ռոխաս, Սելեստինա, էջ 127):

Տվյալ դեպքում «ձեռքերը պարզել աստծուն» դարձվածային միավորը կրկնակի առկայացման օրինակ է, քանի որ այն կարելի է միաժամանակ ընկալել երկու ձևով՝ և՛ ուղիղ իմաստով, և՛ փոխաբերական: Այս դարձվածքը (ձեռքներս պարզում եմք աստծուն) իր ուղիղ իմաստով հանդես է գալիս որպես ձեռքերը պարզել վերև, իսկ փոխաբերական իմաստով՝ աղոթել աստծուն:

Դ) Փոխակերպման տվյալ տեսակը՝ անդրադարձը (ալյուզիա)՝ որպես դարձվածքի փոխակերպման միջոց, ենթադրում է գեղարվեստական գրականության համատեքստում դարձվածային միավորի մեկ կամ մի քանի բաղադրիչների ներ-գրավում: Տվյալ համատեքստում դարձվածային միավորների բաղադրիչները չեն կորցնում այն իմաստները, որն իրենց բնորոշ է դարձվածքի կազմում: Փոխակերպման այս միջոցը ավելի է ամրացնում կապը դարձվածային միավորների և համատեքստի միջև: Դարձվածքի այն բաղադրիչը կամ բաղադրիչները, որոնք ներառվում են գեղարվեստական տվյալ ստեղծագործության համատեքստում, իմաստային տեսանկյունից չեն հեռանում դարձվածային միավորի ամբողջական իմաստից: Դարձվածքներում տվյալ փոխակերպման մասին խոսելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ դարձվածային միավորների բաղադրիչների իմաստը պայմանավորված է ամբողջ դարձվածքի իմաստով: Իսկ վերջինիս բաղադրիչների կիրառությունը խոսքին հաղորդում է ավելի մեծ հուզարտահայտչականություն: Օրինակ՝

–Si no tuviera a tan buen recaudo esta arca, yo dijera que me habían tomado de ella panes; pero de hoy más, solo por cerrar la puerta a la sospecha, quiero tener buena cuenta con ellos: nueve quedan y un pedazo.

¡Nuevas malas te dé Dios!, dije yo entre mí (Lazarillo de Tormes, anónimo, p. 43).

¡Nuevas malas te dé Dios! արտահայտության մեջ կիրառվել են ¡Dios te dé salud, hermano! (բարացի՝ Աստված քեզ առողջություն տա, եղբայր - Աստված քեզ պահապան) դարձվածային միավորի երեք

բաղադրիչ ներք (Dios te dé), և շրջվել է դարձվածքի շարահայտային շարժումը՝ համատեքստին հարող դեղին վառվարյալ մեծ արտահայտչական շարժումը: Տվյալ փոխակերպմամբ դարձվածքը ձեռք է բերել բացասական հարանշանակալի շարժումը՝ հավելարկվելով **nuevas malas** (բառացի՝ նոր չարիք, նոր գլխացավանք) բաղադրիչ ներքով, որոնց անմիջական ազդեցությամբ դարձվածքը ձեռք է բերել հետևյալ նոր իմաստը՝ *աստված քեզ նոր փորձ ու թյուն է (գլխացավանք) տա, սակայն ներգրավված բաղադրիչ ներք չեն կորցրել էլ ակետային դարձվածքում ունեցած իրենց իմաստները:*

Ե) Գեղարվեստական գրականության մեջ դարձվածքի զեղչումը (էլիպսիս) դարձվածքների փոխակերպման ամենատարածված միջոցներից է: Օրինակ՝

1) Y el investigador tembló cuando el “105” abrió ante su ojo la claroscuro faz de Ra.

–¡Dios!

-Qué ocurre?-preguntó Niethw intrigada (J. J. Benitez, La rebelión de Lucifer, p.

249).

2) –Estos pobres - dijo **Cojuelo** -, como son de Sevilla, campan también de valientes, y reñirán con los diablos; pero no se alabará, si yo puedo, éste de haber salido horro de esta chanza; que en el mundo se me han atrevido solamente tres linajes de gente: representantes, ciegos y pobres; que los demás embusteros y gente de este género pasan por demonios como yo (Luis Velez de Guevarra, Diablo cojuelo, p. 106).

Առաջին օրինակում զեղչվել է **mío** բաղադրիչը (¡Dios mío!) կամ **Oh** բաղադրիչը (¡Oh, Dios!)՝ պահպանելով դարձվածքի զարմացական հնչերանգը: Իսկ երկրորդ օրինակում զեղչվել է **diablo** բաղադրիչը (Diablo Cojuelo)՝ խոսքը դարձնելով ավելի մտերմիկ, մասնավորապես, քանի որ Cojuelo-ն կիրառված է փաղաքշական տարբերակով՝ **uelo** փոքրացուցիչ վերջածանցով:

Գեղարվեստական գրականության մեջ դարձվածային միավորի զեղչումը ստիպում է ընթերցողին կամ լսողին ուշադրություն և դարձնել դարձվածային արտահայտության այն հատվածի վրա, որի

իմաստը առավել համահունչ է տեքստի հեղի-նակի հաղորդակցական դիտարկումները: Օրինակ՝

1) – Y aun después vino otra y se fué.

-¿Si que no en balde?

-No, en buena fe; ni Dios lo quiera. Que aunque vino tarde, **más vale a quien Dios ayuda**, etcétera (Fernando de Rojas, Celestina, p. 45).

2) –Señor, mozo soy, que no me fatigo mucho por comer, **Bendito Dios**. De eso me podré yo alabar entre todos mis iguales, por de mejor garganta, y así fui yo loado de ella hasta hoy día de los amos que yo he tenido (Anónimo, Lazarillo de Tormes, p. 53).

3) No bien sintió el gusto de lo que se le ofrecía, ni quiso más. El bruto del soldado encontró esto muy cómico, y, cuando se reunió con sus compañeros, todos bromearon con él. ¡**Demonios!** (Pär Lagerkvist, Barrabas, p.18)

Առաջին հաղորդակցական դարձվածային միավորում (más vale a quien Dios ayuda) զեղչված է ամբողջ երկրորդ հատվածը՝ «más vale a quien Dios ayuda, **que a quien mucho madruga**» (բառացի՝ ավելի և ավելի աստված օգնի, քան վաղ արթնանաս): Երկրորդ դարձվածային միավորի (Bendito Dios) դեպքում զեղչվել է **sea** բայական բաղադրիչը (ըղձական ներկա ժամանակ, եզակի թիվ, երրորդ դեմք)՝ ¡Bendito **sea** Dios! (Աստված օրհնի): Իսկ երրորդ դարձվածքում (¡Demonios!) զեղչված է **que** շաղկապը՝ ¡Que demonios! (գրողը տանի): Այսպիսով, հեղինակը փոխակերպման տվյալ միջոցը ծառայեցրել է խոսքի հաղորդակցական նպատակներին՝ դարձնելով այն ավելի յուրօրինակ և նրան հաղորդելով հոլգարտահայտչական նշույթավորվածություն:

Դարձվածային միավորների զեղչված տարբերակներն իրենց բնույթով որոշակիորեն տարբերվում են, քանի որ ընթերցողը հեշտորեն կարող է տարբերակել վերջիններս ինչպես իրենց կառուցվածքային, այնպես էլ իմաստային ոչ լիարժեքությամբ, որը կարելի է վերականգնել գիտելիքների և այն ծավալի և համատեքստի օգնությամբ:

Հարկ է փաստել նաև, որ որոշ լեզվաբաններ դարձվածքի զեղչումը որոշակիորեն նույնացնում են անդրադարձի

(ալյուզիայի) հետ, քանի որ երկու դեպքում էլ խախտվում է դարձվածքի ամբողջականությունը: Վերջիններիս առնչությամբ հարկ է առանձնացնել երկու տարբերակիչ հատկանիշ՝

ա) գեղջման դեպքում դարձվածային միավորի սկիզբը կամ վերջը պահպանվում է անփոփոխ, մինչդեռ անդրադարձի դեպքում դարձվածքի յուրաքանչյուր բաղադրիչ ենթակա է փոփոխության, անկախ տվյալ դարձվածքի կազմում իր գրաված դիրքից և շարահյուսական կառուցվածքից,

բ) դարձվածքի գեղջված տարբերակն արտահայտում է ամբողջ դարձվածային միավորի իմաստը, իսկ անդրադարձի դեպքում բաղադրիչները պահպանում են միայն դարձվածքի կազմում իրենց բնորոշ իմաստները:

2) Գեղարվեստական գրականության մեջ դարձվածքների նորացման ամենատարածված միջոցը համարվում է դարձվածքի զուգամետությունը (конвергенция): Դարձվածային միավորի զուգամետությունը ենթադրում է փոխակերպման մի քանի միջոցների զուգաձևում: Կուլնինը այն բնորոշում է որպես դարձվածային միավորի փոխակերպման երկու կամ ավել տարրական ոճական միջոցների կիրառում /Кунин, 1974: 17/: Փոխակերպման այս միջոցը ուժգնացնում է դարձվածքի գնահատողական բնույթն ու հուզարտահայտչականությունը, այն է՝ սաստկացնում է դարձվածային միավորի իմաստի հարանշանակային տարրի գործառնությունը:

Փոխակերպման միջոցների համադրությունը դարձվածքում կարող է լինել շատ տարաբնույթ: Կարող են միևնույն դարձվածքում միաժամանակ խաչաձևվել և՛ բաղադրիչի փոխարինումը, և՛ նոր բառային միավորի ներգրավումը: Օրինակ՝

Bendito seáis Vos, Señor- quedé yo diciendo-, que dais la enfermedad y ponéis el remedio (Anónimo, Lazarillo de Tormes, p. 56).

Տվյալ օրինակում, որը ¡Bendito sea Dios! դարձվածային միավորի փոխակերպված տարբերակն է, “Dios” բաղադրիչը փոխարինվել է “Señor” բաղադրիչով (որը միայն մեծատառ գրվելիս է հանդես գալիս որպես “Dios” բառային միավորի հոմանիշ) և ավելացել է **Vos**

դերանուևը, որը հին իսպաներենում հանդես էր գալիս որպես ակնածական դիմել ածև (հարգանքի Դուք): Երբեմն հանդիպում են բառային (շարահյուսական) կազմի փոխակերպման և ընդլայնման դեպքեր: Օրինակ՝

1. **El diablo del enjalma maldita la cosa tenía dentro de sí**, que, puesto sobre el cañizo, todas las cañas se señalaban y parecían a lo propio entrecuesto de flaquísimo puerco (Anónimo, Lazarillo de Tormes, p. 14).
2. Mas malas lenguas, que nunca faltaron ni faltarán, no nos dejan vivir, diciendo no sé qué de que ven a mi mujer irle a hacer la cama y guisarle de comer. **Y mejor les ayude Dios**, que ellos dicen la verdad (Anónimo, Lazarillo de Tormes, p. 84).

Իսպաներենի «el diablo del enjalma maldita la cosa tiene dentro de sí» արտահայտությունը գուգամիտության վառ օրինակ է: Վերջինս առաջացել է «tener el diablo (en el cuerpo) dentro de sí» դարձվածքի փոխակերպումից, որտեղ խախտվել է շարահյուսությունը (շրջուն շարահյուսություն)՝ ոճական երանգավորում ապահովելու նպատակով, և տեղի է ունեցել դարձվածքի բաղադրիչների ընդլայնում: Նույն փոփոխությունները տեղի են ունեցել նաև «Y mejor les ayude Dios» դարձվածային միավորում: Այն առաջացել է «Dios ayude» դարձվածքից՝ հանդիսանալով վերջինիս փոխակերպված տարբերակը, որտեղ միաժամանակ շրջվել է շարահյուսությունը, այլ կերպասած՝ նախադաս է **ayude** բայական բաղադրիչը, և ընդլայնվել է դարձվածքի բաղադրական կազմը՝ հավելադրվելով **y** համադասական շաղկապով, **mucho** ածականի համեմատական աստիճանով և **les** լրացում դերանունով: Այսպիսով, ինչպես երևում է, դարձվածքի բաղադրական կազմի փոփոխությունները կարող են վերջինիս հաղորդել արտահայտչականություն՝ առանձնահատուկ ձևով երանգավորելով խոսքը:

Է) Դարձվածային միավորի կազմալուծումը (դարձվածքների նորացում մի քանի միջոցով) դարձվածքների փոխակերպման միջոցների շարքում իր ուրույն տեղն է զբաղեցնում: Լեզվաբանական գրականության մեջ այս փոխակերպումը հայտնի է նաև *հեղինակային նորարարություն* անվամբ: Այն իրականացվում է երկու մակարդակում՝ բառային և քերականական: Բառային

մակարդակում փոխակերպում է դարձվածքի ամբողջ բառային, այլ կերպասած՝ բաղադրական կազմը, իսկ քերականական մակարդակում փոփոխվում է ավանդական դարձվածքի ժամանակածևը, որը հանգեցնում է դարձվածային միավորի իմաստային ամբողջականության ձևախախտմանը: Երկու միջոցներն էլ հետապնդում են միևնույն նպատակը, այն է՝ ձևավորել նոր դարձվածային միավոր կամ դարձվածային տարբերակ:

Բառային փոխակերպման ենթարկված դարձվածքները տարբերվում են տվյալ դարձվածքներից ոչ միայն բառային կազմի ամբողջական փոփոխության ամբ, հուզար-տահայտչականության ավելի բարձր աստիճանով կամ իմաստային բովանդակության նորարարության ամբ, այլ նաև իրենց արտահայտած առանձնահատուկ սուբյեկտիվ իմաստով: Այս միջոցի դեպքում նոր ձևավորված դարձվածքում տեղի է ունենում երկու տիպի փոփոխություն՝ ներքին՝ բառային կազմի, և արտաքին՝ իմաստային բովանդակության: Սակայն ինչպես իսպաներենի, այնպես էլ հայերենի մեր լեզվանյութի շրջանակներում չի արձանագրվել փոխակերպման տվյալ տեսակին համապատասխան օրինակ:

Քերականական մակարդակում դարձվածային միավորների փոխակերպումը ենթադրում է դարձվածքի ժամանակածևի փոփոխություն, որը կոնկրետացնում է դարձվածային միավորների իմաստը՝ խախտելով վերջինիս ամբողջական իմաստը, և ուժգնացնում է կապը կոնկրետի րավիճակի հետ: Օրինակ՝

- 1) ¡Más, nunca sea! ¡**Allá irás con el diablo!** A estos locos decidles lo que les cumple; no os podrán ver (Fernando de Rojas, Celestina, p. 41).
- 2) -Como vi que él quebraba la postura, no me contenté ir a la par con él, mas aun pasaba adelante: dos a dos y tres a tres y como podía las comía. Acabado el racimo, estuvo un poco con el escobajo en la mano y, meneando la cabeza, dijo:
-Lázaro, engañado me has. **Juraré yo a Dios** que has tú comido las uvas tres a tres. (Anónimo, Lazarillo de Tormes, p. 33).

Իսպաներենի «Allá irás con el diablo», «Juraré yo a Dios» օրինակներում բայական բաղադրիչը խոնարհված է սահմանական եղանակի ապառնիականատար ժամանակածևում և հավելադրված տեղի մակբայով (allá) և

անձնական դերանունով (yo)՝ վերածվելով հաղորդակցական միավորների և խոսքին հաղորդելով հուզական երանգավորում և արտահայտչականություն:

Դարձվածքների քերականական փոխակերպման տեսակ է համարվում նաև ժխտումը (no ժխտական մասնիկի հավելադրումը) /Назарян, 1987: 247/, որը նոր դարձվածային միավորը ձևավորելիս հանդես է գալիս որպես լիիրավ անդամ և զգալիորեն ազդում է վերջինիս իմաստի վրա՝ ստեղծելով նոր դարձվածային տարբերակ: Սակայն հարկ է փաստել, որ ժխտման միջոցով ձևավորված դարձվածային միավորը, ի տարբերություն բառային մակարդակում փոխակերպված դարձվածքի, չի կազմալուծվում ամբողջությամբ: Այդ իսկ պատճառով ժխտման դեպքում ստեղծվում է ոչ թե նոր դարձվածային միավոր, այլ հիմնականում նոր դարձվածային տարբերակ (շարահյուսական): Օրինակ՝

1) – No, en buena fe; **ni Dios lo quiera**. Que aunque vino tarde, más vale a quien Dios ayuda, etcétera (Fernando de Rojas, Celestina, p. 45).

2) Երեք օր է, չես տեսել ինձ, **ա՛յ աստծո երեսը երբեք չտեսնես**, թող **ասված քեզ ոչ տեսնի, ոչ էլ մխիթարի** (Ֆեռնանդո դե Ռոխաս, Սելեստինա, էջ 32):

